

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ**

Բ  
ՊՐԱԿ

Երևան

«ԼԻՆԳՎԱ»

2002

Երևանի Վ. Յա. Բրյուսովի անվան պետական  
լեզվաբանական համալսարան

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ  
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ**

**Բ  
ՊՐԱԿ**

Նվիրվում է ֆրանսիացի ականավոր  
լեզվաբան, հայագետ, հայ ժողովրդի  
մեծ բարեկամ  
**ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵԻ**  
ծննդյան 135 - ամյակին

Երևան

«ԼԻՆԳՎԱ»

2002

ՀՏՀ 809.198.1  
ԳՄԴ 81.2 Հ  
Հ 246

Տպագրվում է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական  
համալսարանի գիտխորհրդի որոշմամբ

**Հ 246 ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ:** Նվիրվում է ֆրանսիացի ականավոր լեզվաբան,  
հայագետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ *ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵԻ* ծննդյան  
135 - ամյակին /Խմբ. խորհուրդ՝ ակադ. Ջահուկյան Գ. և ուրիշ./:  
Եր., Լինգվա, 2002թ., 145 էջ:

#### ԳՐԱԽՈՍՆԵՐ

բ.գ. դոկտոր, պրոֆեսոր Լ.Հովհաննիսյան,  
բ.գ.թ. դոցենտ Լ.Փարեմուզյան

#### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ակադ. Գ. Ջահուկյան, պրոֆ. Ս. Ջոլյան, պրոֆ. Ֆ. Խլղաթյան  
(գլխ. խմբագիր), պրոֆ. Ա. Բարլեզիզյան, դոց. Ն. Հեքեքյան:

Հ  $\frac{4602020100}{0134 (01) - 2002}$  2002

ԳՄԴ 81.2 Հ

ISBN 99930-922-0-7

«Լինգվա» հրատ., 2002թ.

Ереванский государственный лингвистический  
университет им. В. Брюсова

**ВОПРОСЫ  
АРМЕНИСТИКИ  
И  
СОПОСТАВИТЕЛЬНОЙ  
ЛИНГВИСТИКИ**

**ВЫПУСК  
2**

Посвящается 135-летию со дня  
рождения видного французского  
лингвиста, арменоведа, большого  
друга армянского народа  
**АНТУАНА МЕЙЕ**

"ЛИНГВА"

Ереван

2002

**ВОПРОСЫ АРМЕНИСТИКИ И СОПОСТАВИТЕЛЬНОЙ  
ЛИНГВИСТИКИ. ВЫПУСК 2.** Посвящается 135-летию со дня  
рождения видного французского лингвиста, арменоведа,  
большого друга армянского народа **АНТУАНА МЕЙЕ** (Ред.  
совет: акад. Г.Джаукян и др.). Ер., Лингва, 2002г., 145 стр.

#### РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Акад. Г.Джаукян, проф. С.Золян, проф. Ф.Хлгатын, (гл.  
редактор), проф. А.Барлезизян, доц. Н.Экекян.

Université linguistique d'Etat V. Brioussov

**PROBLÈMES D'ARMÉNOLOGIE  
ET  
DE LINGUISTIQUE COMPARATIVE**



LIVRAISON

2

Consacrée au 135 ième  
anniversaire de la naissance de l' illustre  
linguiste et arménologue français,  
grand ami du peuple arménien  
ANTOINE MEILLET

Erévan

2002

**PROBLÈMES D'ARMÉNOLOGIE ET DE LINGUISTIQUE  
COMPARATIVE. LIVRAISON 2.** Consacrée au 135 ième anniversaire de  
la naissance de l' illustre linguiste et arménologue français, grand ami du  
peuple arménien *ANTOINE MEILLET*.

COMITÉ DE RÉDACTION:

Acad. G.Djahoukian, prof. S.Zolian, prof. F.Khlghatian, (rédacteur  
en chef), prof. A.Barlézizian, maître de conférences N.Hékékian.

## ՄԵԾ ՀԱՅԱՍԵՐԸ

Հայ ժողովուրդը նշանավոր շատ բարեկամներ է ունեցել, ովքեր հրապուրվել են նրա ստեղծած մշակույթով և սիրել այն, բախտորոշ պահերին իրենց ձայնը բարձրացրել հոգուտ հայերի, պաշտպանել նրանց դատը միջազգային հանրության առջև: Դրանք եղել են իրենց ժամանակի ականավոր մտավորականներ՝ գրողներ, գիտնականներ, մշակույթի և քաղաքական գործիչներ:

Հայ ժողովրդի մտավորական բարեկամների շարքում շատ ուրույն և պատվավոր տեղ է գրավում ֆրանսիացի ականավոր լեզվաբան, համեմատական լեզվաբանության կարկառուն ներկայացուցիչ, հայագետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Անտուան Մեյեն:

Անտուան Մեյեն ծնվել է 1866 թ. Փարիզից ոչ շատ հեռու գտնվող Մուլեն գյուղաքաղաքում: Ուշիմ և աշխատասեր պատանին ավարտում է Մուլենի լիցեյը, ընդունվում Սորբոնի համալսարան՝ ընտրելով համեմատական լեզվաբանությունը, որին նվիրում է իր ողջ կյանքը: Համալսարանն ավարտելուց հետո նա դարձավ համաշխարհային լեզվաբանության մեջ ամենահայտնի համեմատաբաններից մեկը: Չկա համեմատական լեզվաբանության որևէ ճյուղ, որի վերաբերյալ Ա. Մեյեն որևէ ծանրակշիռ աշխատություն ստեղծած չլինի: Բայց նրա ամենասիրելի բնագավառներից մեկը եղավ և մնաց հայագիտությունը:

Դեռևս 21 տարեկան պատանի, Սորբոնի համալսարանի ուսանող, նա Փարիզի Արևելյան լեզուների դպրոցում սկսում է հաճախել հայագետ Օգյուստ Կարիերի գրաբարի դասերին: Այդ ժամանակից մինչև մահ Ա. Մեյեն մնաց հայերենի, հետո նաև հայ ժողովրդի ջերմ երկրպագուն ու բարեկամը:

Հայագիտությանը Ա. Մեյեն նվիրել է իր կյանքի լավագույն տարիներից շատերը: «Հին հայերենի տարրական դասընթաց» /1913 թ./, «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» /1903, 1936/, «Ուսումնասիրություններ հայերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ» /1968 թ./ գրքերը համաշխարհային լեզվաբանության զարդերից են, ցայսօր անգերազանցելի իրենց տիպի մեջ: Դրանց պետք է ավելացնել այն բազմաթիվ հոդվածներն ու գրախոսականները, որոնցով Ա. Մեյեն արձագանքել է հայագիտության մեջ կատարված բոլոր քիչ թե շատ կարևոր իրադարձություններին, ընդհուպ մինչև Հայաստա-



նում կատարված ուղղագրական բարեփոխումները: Երկար տարիներ նա Փարիզի տարբեր ուսումնական հաստատություններում դասավանդել է հայերեն, հիմնադրել է “Revue des études armeniennes” հայագիտական հանդեսը:

Միայն հայերեն ուսումնասիրելը և նրա մասին գիտական աշխատություններ գրելը չի բավարարել Ա.Մեյեին. նա ձգտել է մոտիկից ճանաչել Հայաստանը, հայ ժողովրդին, սովորել կենդանի հայկական խոսքը: Այդ ձգտումը նրան տանում է Վիեննա, որտեղ 1890-91 թվականների ձմռանը Մխիթարյան միաբանությունում Հակոբ Տաշյանի օգնությամբ սովորում է դասական հայերեն /գրաբար/: Ֆրանսիացի ուշին երիտասարդի արտակարգ ջանասիրության և շատ բան շուտ իմանալու ձգտման համար վանքի վարդապետները նրան տալիս են *վաղվաղակի* մականունը:

1891 թվականին նա գնում է Կ. Պոլիս, ապա Թիֆլիս և Հայաստան: Թիֆլիսում նա մեկ ամիս սովորում է արևելահայերեն, հանդիպում և ժամոթանում է հայ մտավորականների հետ, ապա կառքով մեկնում Երևան: Թիֆլիսում եղած ժամանակ ժամոթանում է ժամանակի մի շարք ականավոր հայ մտավորականների հետ /Գր.Արծրունի, Գ.Սունդուկյան, Աբգար Հովհաննիսյան, Գալուստ Տեր-Սկրտչյան/: Մեյեն շատ բարձր է գնահատում հատկապես Գալուստ Տեր-Սկրտչյանին՝ նրան համարելով «միակ լավ բանասերը»: «Կրոնավոր է,- գրել է նրա մասին իր նամակում, -բայց ազատամիտ մտածող... Փարիզում ուսումնասիրել է քաղաքական գիտություններ, բայց դարձել է լավ բանասեր... Խելոք է և նրբամիտ»:

Հայաստանում նրա ուղևորությունը շատ բեղմնավոր է եղել: Էջմիածնի վանքի մատենադարանում Ա. Մեյեն ուսումնասիրում է հին ձեռագրերի հարուստ հավաքածուն: Երկու շաբաթ անցկացնում է Աշտարակում, բարձրանում Արագած լեռը, կիսում հայ գյուղացու հացը, ապրում նրա կենցաղով: Այդ ժամանակ նա շատ հետաքրքրական եզրակացության է գալիս: 1891 թ. հուլիսի 9 –ին Աշտարակից գրած իր նամակում հայ գյուղացիների մասին նա ասում է. «Սա այնպիսի ժողովուրդ է, որն ամբողջովին տրամադրված է հանենատաբար եվրոպականանալու: Այս մարդիկ նույնքան կան նույնիսկ ավելի խելացի են, քան մեր ֆրանսիացի գյուղացին»:

Ուշագրավ է, որ կենդանի խոսքի նկատմամբ նրա ունեցած ձգտումը նրան ստիպում է ուսումնասիրել և սովորել նաև բարբառներ:

Զբաղվարարվելով գրական հայերենի արևմտյան և արևելյան տարբերակների լավ իմացությամբ՝ նա սովորում է նաև Թիֆլիսի ու Աշտարակի բարբառները: Սակայն նրա աշտարակցի տանտերը, դժբախտաբար, գրական լեզվով էր խոսում և չէր պատկերացնում, որ նման նշանավոր մարդը «կարող է հետաքրքրվել սխալներով»:

Իր բուն երկրում ծանոթանալով հայ ժողովրդին՝ նա խմբագրում էր իր կարծիքը հայերի մասին: «Եթե հայերը հաճախ այն տպավորությունն են թողնում, որ իրենք առևտրականներ են, պատճառն այն է, որ նրանց ճանաչում են գրեթե միայն առևտրականների միջոցով», -գրում է նա, իսկ Թիֆլիսից գրված մի նակում ավելացնում. «Լավ արեցի, որ եկա այստեղ... Փարիզի հայերը սխալ պատկերացում են տալիս տեղական հայերի մասին»:

1903 թվականի հուլիս, օգոստոս ամիսներին Ա. Մեյեն դարձյալ Հայաստանում էր: Շուշիում նա այցելում է իր աշակերտ Յր. Աճառյանին, որն այն ժամանակ ուսուցիչ էր այնտեղ: Ա. Մեյեն շատ մեծ գովասանքով է խոսել Յր. Աճառյանի և նրա աշխատությունների մասին: «Հրաշյա Աճառյանի ստուգաբանական բառարանը արժանի է հիացմունքի,- գրում է նա: -Երբ այն ավարտվի, անհրաժեշտ կլինի նրա էական մասը ամփոփել ֆրանսերեն կամ գերմաներեն մի հրատարակությամբ, որ բոլոր համեմատաբանները կարողանան օգուտ քաղել դրանից»:

Էջմիածնում, ապա Թիֆլիսում նա շարունակում է հայերենի և հայկական հին ձեռագրերի ուսումնասիրությունը: Հայաստանում լինելն այնքան է ոգևորում Ա.Մեյեին, որ նա սկսում է լրջորեն մտածել այնտեղ մնալու և աշխատելու մասին, քանի որ դա, ըստ նրա, ավելի լավ էր, քան ֆրանսիական գավառական ուսուցիչ դառնալը: Իր զարմուհուն գրած մի նամակում նա լրջորեն քննարկում է Կ.Պոլսի ֆրանսիական լիցեյում կամ Էջմիածնում ֆրանսերենի դասախոս դառնալու հարցը: Նույնիսկ ֆինանսական հաշիվներ է անում: Բայց Փարիզի բարձրագույն ուսմանց դպրոցում Ֆերդինանդ Սոսյուրի փոխարեն դասախոս նշանակվելու մասին հեռագիրը փոխում է նրա պլանները, և նա վերադառնում է Փարիզ:

Հետագայում ևս Ա. Մեյեն ձգտել է գալ Հայաստան, բայց սկսված պատերազմը, ապա աշխատանքով զբաղվածությունը խանգարել են նրան: Սակայն իր սերը հայերի և Հայաստանի հանդեպ չի մարում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և նրան հաջորդող տարիներին հայ ժողովրդի կրած տառապանքները խոցում են մեծ գիտնականի սիրտը: Նա բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ, կոչեր և ուղերձներ

է գրել ի պաշտպանություն հայերի: Նա խստորեն քննադատում է ոչ միայն հայերի հանդեպ կատարվող ոճրագործությունները, այլև մեծ պետությունների, հատկապես Գերմանիայի թողվությունը: Եվրոպայի մտքի ու խղճի շատ կորիֆեյների հետ նա իր ձայնն է բարձրացնում պատերազմի թոհուրեհի մեջ կործանվող հայ ժողովրդի արևմտյան հատվածի պաշտպանության օգտին:

Մեյեն Փարիզում կազմակերպված բոլոր հայանպաստ միջոցառումների և հավաքությունների մշտական նախագահն էր և գլխավոր բանախոսը: Նա բազմաթիվ շրջաբերականներ ու նամակներ է ուղարկել ժամանակի եվրոպական նշանավոր գործիչներին՝ ցանկանալով նրանց դրդել հայերի շահերի պաշտպանությամբ հանդես գալու Լոզանի բանակցություններում: Իր բոլոր ելույթներում Մեյեն հետևողականորեն տանում էր այն միտքը, թե հայ ժողովրդին ոչ թե պետք է խղճալ, այլ պաշտպանել նրա բնական իրավունքը՝ իր երկրում ապրելու, իր քաղաքակրթությունը զարգացնելու և տարածելու:

«Հայերի պատիվը դժբախտ լինելը չէ, -գրում է նա, -դժբախտ լինելը քաղաքական տիտղոս չէ. քաղաքական տիտղոսն այն է, որ սովորական չափն անցած պահպանել են իրենց ուժը, հայերն ապացուցել են, որ իրենք հարատևելու ընդունակ ազգ են, որ իրենց ուժն էլ է սովորական չափն անցնում, որ իրենք կոչված են բարձրանալու բազում դարերի ընկճված վիճակից»:

Մի այլ առիթով նա ավելացնում է. «Հայերի իրավունքներն ունեցողը ճշմարտությունից բացի այլ բանի կարիք չունի»:

Լավ ճանաչելով հայերին՝ Ա.Մեյեն նրանց ամենագլխավոր հատկությունը համարում է սեփական հող ու ջրին կառչած լինելը, որն էլ, ըստ նրա, հայ ազգի գոյատևման պատճառն է և աղբյուրը: Իսկ եթե, այսուամենայնիվ, ստիպված գաղթել են հայերը, ապա նոր վայրում եղել են օրինակելի քաղաքացիներ, շարունակել են զարգացնել իրենց քաղաքակրթությունն ու լեզուն:

«Հենց որ մի քանի հայեր ի մի են հավաքվում իրենց գաղթած քաղաքում, նրանք հաստատում են տպարան և հիմնում իրենց լեզվով տպագրվող թերթ: Այնքան մեծ է քաղաքակրթական լեզվի կենսունակությունը», - գրում է Մեյեն: Նա բարձր է գնահատում համաշխարհային քաղաքակրթության մեջ հայերի ունեցած ներդրումը, նրանց համարում է եվրոպական քաղաքակրթության տարածողներ արևելքում. «Ձգբաղեցնելով Ասիայի այնպիսի մի մաս, որն իր բնությամբ անցման կետ է Արևելքի և Արևմուտքի միջև, 5-րդ դարից սկսած նրանք /հայերը/ դարձել են եվրոպական քաղաքակրթության կրողները»:

Ես համոզված եմ, որ Հայաստանի դերն է՝ եվրոպական քաղաքակրթության առաջապահը լինել Հարավային և ամբողջ Կենտրոնական Ասիայի կողմերում»:

Հայ ժողովրդի կրած տառապանքների վրա ֆրանսիացիների ուշադրությունը գրավելու համար Ա.Մեյեն հուսահատական ճիչի նման բացականչում է. «Այն ժամանակ, երբ Ֆրանսիա անունը նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ. այն ժամանակ, երբ ֆրանսերեն լեզուն դեռևս չէր տարբերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարևոր գրականություն»: Միայն մեծ սիրով ու հարգանքով լեզուն ֆրանսիացին կարող էր ասել նման բան, և դրանում է մեծ մարդասեր, մեծ հայասեր, մեծ գիտնական Ա. Մեյեի էությունն ու նշանակությունը:

Ա.Մեյեի աշխատություններում, նամակներում և հոդվածներում սփռված են հայերի և հայերենի մասին հարյուրավոր գովասանական ասույթներ: Բայց, լինելով մեծ գիտնական և իրատես, նա նկատում է նաև մեր ժողովրդի որոշ ներկայացուցիչների առանձին ստվերոտ կողմեր: «Թիֆլիսում կան հայեր, որոնք զուրկ են ազգային զգացումից... ինչը որ հայկական է, ինքնապաշտպանության դիրքերում է... Շատերը այնքան քիչ սովորություն ունեն իրենց մայրենի լեզվով խոսելու, որ նույնիսկ հայերեն խոսելիս այդ-ի փոխարեն ձա են պատասխանում»: Այս և նման դիտողությունները ավելի են մեծացնում նրա դրական խոսքերի արժեքը, քանի որ հավաստում են, թե հեղինակը չի կեղծում:

Սերը հայերենի և հայերի նկատմամբ Ա. Մեյեն տարավ իր կյանքի ողջ ճանապարհով մինչև իր մահը՝ 1936 թ. սեպտեմբերի 21-ը: Խորհրդանշական է, որ հենց այդ օրերին Փարիզում վաճառքի հանվեց նրա «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» աշխատության երկրորդ հրատարակությունը:

Ա. Մեյեի հայանպաստ գործունեության մասին շատ կարելի է խոսել, բայց ինչքան էլ խոսես, այդ թեման դժվար է սպառել, այնքան մեծ են նրա վաստակը հայագիտության մեջ և նրա գործունեությունն ի շահ հայ ժողովրդի:

Այսօր տարիների հեռվից մի ամփոփ հայացք ձգելով այդ մեծ ֆրանսիացու կյանքի ու գործի վրա՝ կարող ենք նշել հետևյալ պարագաները, որոնք նրան մեծ են դարձնում Ֆրանսիայի և Հայաստանի համար:

- Աշխարհահռչակ գիտնականը, որն ուղենշային կոթողներ է ստեղծել համեմատական լեզվաբանության բնագավառում, համաշխարհային ճանաչում գտած ականավոր լեզվաբանների համաստեղության մեջ առանձնանում է նրանով, որ գիտական կյանքը զուգորդել է ակտիվ հասարակական գործունեության հետ:

- Որպես հնդեվրոպաբան, նա Յյուբշմանի և ուրիշների հետ հաստատեց հայ ժողովրդի ինքնության վկայականը, որպես հնդեվրոպական ազգի, որպես հնդեվրոպական ժողովուրդների շարքում ինքնուրույն լեզու և քաղաքակրթություն ունեցող ազգի:

- Անցյալի մեծ լեզվաբաններից շատերն են եղել հայագետ, բայց Ա. Մեյեն նաև հայասեր էր. նա խոսքով ու գրչով պայքարում էր հայ դատի պաշտպանության համար:

Այժմ, երբ հայ ժողովուրդն ստացել է վերստին իր կյանքը անկախ տնօրինելու հնարավորություն, մենք պետք է նորովի գնահատենք ու վերագնահատենք անցյալի հայկական և հայկամետ արժեքները: Անտուան Մեյեի անունը՝ այդ հանիրավի մոռացված մեծ մարդու անունը, պետք է բարձր հնչի մեր մյուս մտավորական բարեկամների շարքում, ինչպիսիք են Վ. Բոյուսովը, Ֆ. Վերֆելը և ուրիշներ:



**- Ունը Հոգնակերճ Եվ ՀվավթվաՆ ԿերձԱՎորոթՅՈՒՆ  
ԳՐԱԲԱՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հանրահայտ փաստ է, թե Եպիսկոպոս բառը գրաբարում հոգնակի թվի երկու ձև ունի՝ Եպիսկոպոսք և Եպիսկոպոսունք: Հոմանի՞չ են արդյոք այս երկու ձևերը: Երևի ոչ, թեպետև ո՛չ բառարանները ո՛չ էլ քերականություններն այդ հարցին չեն անդրադառնում: Թվում է, թե պարզ ք – ով ձևը լոկ հոգնակի է, իսկ – ունք վերջածանցավորները՝ հավաքական:

Մատնանշածս հակադրությունն ակներև է Եղիշեից քաղված հետևյալ օրինակներում: «Յայնմ ժամանակի սփռեցան Եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս»: Պարզ է, թե այս դեպքում «Եպիսկոպոս» ձևը հոգնակի է և ո՛չ հավաքական: Եպիսկոպոսները գործում են ոչ թե որպէս խումբ, այլ առանձնաբար են գնում: Մեկ ուրիշ օրինակ, որում Եպիսկոպոսները գործում են ոչ թե անհատաբար, այլ որպէս դասակարգ: «Ամենայն Եպիսկոպոսունք և երիցունք պատուէր հրամանի տուէալ աշխարհին»: Այդ պատվերը որոշ առաջնորդների անձնական նախաձեռնություն չէ, այլ Եպիսկոպոսների ժողովի ընդհանուր որոշում: Այդ է ընդգծում հավաքական – ունք վերջածանցը: Նմանապէս ուրիշ հատվածում. «գայս գուժկան աղմկի իբրև տեսին միաբան սուրբ Եպիսկոպոսունք»:

Մեր եզրակացությանը չի հակասում հետևյալ նախադասությունը. «այս ամենայն Եպիսկոպոսք և բազումք քորեպիսկոպոսք /.../ արարին նամակին պատասխանի»: Տվյալ դեպքում հեղինակը նկատի ունի ոչ թե ժողովը, այլ ներկա գտնված այն բոլոր Եպիսկոպոսներին, որոնց անունների ցուցակն է կազմել և իր գրքի մեջ մտցրել:

Մնացած դասական գրողներից, Ղազար Փարպեցին Եպիսկոպոսունք ձևը բոլորովին չի ճանաչում, իսկ Փավստոս Բուզանդը նույնպէս է գործածում, ինչպէս Եղիշեն:

Հավաքականի և հոգնակիի միջև եղած հակադրությունը հաստատվում է նաև սարկավազ բառի դեպքում: Օրինակ, Առ Տիմոթէոս առաջին թղթում Պողոսը գրում է. «Նույնպէս գսարկաւազունս պարկեշտս», իսկ քիչ հետո՝ «Սարկաւազք լինիցին միոյ

կնոջ արք»: Առաջին բնագիրը վերաբերում է սարկավագների դասակարգին, իսկ երկրորդը՝ սարկավագ եղած անձերին:

Հավաքական և հոգնակի ձևեր ունեն ևս երկու գոյական անուններ՝ ճրագ և առիւծ: Աստվածաշնչի թարգմանությունը նշանակում է առյուծների ցեղը հավաքականով: Օրինակ «գորագան առաւել քան գառիւծունս» կամ «իբրև առիւծունք պատրաստեցան որոիք նոցա. և իբրև զկորիւնս առիւծուց»: Իսկ անհատ առյուծները հանդես են գալիս հոգնակի թվով. «առաքեաց Տէր առիւծս և կոտորէին զնոսա»:

Սակայն որոշ օրինակներ կարող են հարց հարուցել:

«Երկու առիւծունք կային առնթեր ձեռացն և երկոտասան առիւծք ի վերայ վեցեզունց աստիճանագն»: Այս հատվածում լավ չի հասկացվում, թե ինչու՞ «երկու առիւծունք» -ը նշանակվում են հավաքականով, իսկ «երկոտասան առիւծք» -ը՝ հոգնակի թվով: Բանն այն է, որ բնագիրն այստեղ սխալ է և սրբագրման կարիք ունի, ինչպես ցույց է տալիս Մնացորդաց գրքի զուգահեռ տեղը: «Եվ երկու առիւծք կային առ ոտս անկեանցն և երկոտասան առիւծք կային /.../ առ վեց աստիճանն»: Վերջին բնագրում հոգնակի թիվը գործածվում է երկու դեպքում էլ, ինչպես որ պետք ու պատշաճ է:

Նմանապես ճրագները կարող են օգտագործվել կան պատահական քանակությամբ կան տվյալ թվով, օրինակ, ինչքան կա մի աշտանակում: Վերջին դեպքը ավելի հաճախական է Աստվածաշնչում, ուստի և հանդիպում ենք գրեթե միմիայն հավաքական ձևին, հատկապես ծիսարարական հրահանգներում: Սակայն Մակաբայեցւոց գրքում նկարագրվում է կողոպտված տաճարում պաշտամունքի վերսկսումը: Քանի որ սուրբ վայրը մթին է, «Ճրագս լուցանէին և լոյս տային»: Այստեղ հոգնակի թիվը լրիվ ճիշտ է, որովհետև ոչ աշտանակներ չկան, ոչ էլ ճրագների սովորական քանակությունը:

Մեջ բերենք նաև մի տարակուսելի օրինակ: Ելից գրքում կարդում ենք. «ընդ առաւաւտս, յորժամ գճրագսն հանդերձիցէ, ծխեսցէ խունկ»: Խոսքը վերաբերում է ոչ թե պատահական ճրագներին, այլ խնկի սեղանիներին: Ավելի ճիշտ կլիներ այստեղ ոչ թե հոգնակի թիվը, այլ հավաքականը: Եվ իրոք, Ա. Ջեյթունյանի գիտահամեմատական բնագրի տողատակում իմանում ենք, թե Ա2 ձեռագիրը /այսինքն՝ Երևանի հ. 7753, 12-րդ դարի/ «գճրագունս» է գրում /նույնպես Ելից 30.9/:

Այսպիսով կարող ենք հաստատել, թե գրաբարի վերոհիշյալ բառերում հոգնակի թվի –ք վերջավորությունը հակադրվում է հավաքական –ուևք վերջածանցին:

Նմանապես ակուևք և ուևկուևք բառերը այք և ականջք երկակի թվի տարբերությամբ կարող են նաև նախկին հավաքական հանդիսանալ:

Սակայն շատ բառեր կան, որոնց լոկ հոգնակի թիվը կազմվում է նույնանման –ուևք վերջածանցով: Հարց դնենք, թե կարելի՞ է արդյոք այդ հոգնակի ձևերն ըմբռնել որպես նախկին հավաքականներ: Պատասխանը մեզ հետաքրքիր չէ, մեզ հետաքրքրող բառերի մեծ մասը տարիքային կամ դասակարգային նշանակություն ունեն: Հետևաբար դրանց հոգնակի ձևը հավաքականից պետք է առաջացած լինի:

Օրինակ՝ եռեք բառի հոգնակին լինում է երիզուևք, որն անցյալում նշանակել է «երեցների դասն ու կարգը»: Բանն այն է, որ երեցները սովորաբար որոշակի խումբ են կազմում: Օրինակ՝ Փավստոսի մոտ կարդում ենք. «Եւսերբոս արքեպիսկոպոսապետն և երիզուևք ընդ նմա» /61/, կամ էլ «կոչեցի գերիզունս եկեղեցւոյն Տիսպոնի» /141/: Այդ ձևերով նշանակվում են առաջնորդի կամ որոշ եկեղեցու հետ կապված ամբողջական խմբեր: Սակայն ուրիշ բնագրերում –ուևք– ով ձևը իսկական հոգնակի է: Օրինակ՝ «երանելի երիցուևք խորեն և Աբրահամ» /Ղազար 118/: Բայց այդպիսի հոգնականները հավանաբար առաջացել են նախկին հավաքականներից:

Անժխտելի հավաքական ծագում ունեն նաև մի շարք ուրիշ բառերի հոգնական ձևերը: Դրանք նշանակում են տվյալ հասարակության մեջ /օրինակ՝ գյուղում/ եղած զանազան տարիքային շերտերը: Այսպիսիք են՝ փոքրկուևք, փոքուևք, մանկուևք, աղջկուևք, հարսուևք, պառաւուևք: Անդրամիկ բառը փոքրիկ –ի պես –իկ վերջածանցն ունի: Սակայն դրա հոգնակին ոչ թե անդրանկանք է, այլ անդրանիկք, որոհետև գյուղի անդրանիկները, տարբեր տարիքի լինելով, տարիքի շերտ չեն կազմում: Բացի այդ նկատելի է, որ տղա կամ տղամարդ ցույց տվող բառերը /օրինակ՝ պատանի, կտրիճ, ծեր ևն/ սովորական հոգնակի ձև չունեն: Կարծես թե գյուղի բնակչությունը նայվում է չափահաս /կամ կիսաչափահաս/ տղամարդկանց տեսանկյունից: Դրանք են չեզոք, այսինքն՝ ոչ ածանցավոր դասը կազմում: Այդ հիմնական խմբից գատ, մնացած ամբողջ բնակչությունը /աղջիկներ, կանայք, երեխաներ/ նշվում են ըստ տարիքի՝ հավաքական –ուևք ածանցով: Հավաքական նշանակություն կարող են ունենցած լինել նաև ուրիշ



բառեր, որոնք տարիքի նշանակությունն չունենալով հանդերձ՝ -ունք վերջավորությամբ են կազմում հոգնակի թիվը, օրինակ՝ մատուներք, մատուներք, մկուներք, եկուներք ևն:

Միանձն և ուրիշ բաղադրյալ բառեր հարուցում են մի հատուկ հարց: Մեյեն կարծում է, թե «անծինք» և «միանձնունք» հակադրվում են իրար, ինչպես, օրինակ, հունարեն *φεργες* և *չηοοves*: Հետևաբար ձայնավորների փոփոխություն, ըստ իրեն, հնդեվրոպական ծագում ունի: Մտադիր չեմ մեծ գիտնականին հակասել: Սակայն քիչ զարմանալի չէ, որ այնքան հին ձևաբանական օրենք պահպանված լինի այսքան նոր բառում: Չէ՞ որ միանծինք բառը լրիվ արհեստականորեն է կազմվել Եփրեմ Ասորու *movaxos* նշանակող ասորերեն բառը թարգմանելու համար: Մյուս կողմից Մեյեն չի իմացել, թե բացի անծինք ձևից կա նաև անձունք, ուստի և -ունք վերջավորությունը երևում է ոչ միայն բաղադրյալ, այլև պարզ բառում: Հետևաբար հարց ենք դնում, թե արդյոք ավելի ճիշտ չէ՞ կռահել, թե միանձնունք այն նույն հավաքական վերջավորությունն ունի, ինչ երիցունք, սարկաւագունք, եպիսկոպոսունք:

Բայց անհնարին է այդ հարցին պատասխանել առանց քննելու նույն տիպի մնացած բաղադրյալները: Հիշենք դատարկանծունք /երիտասարդ այրի կանանց խմբի մասին/, նաև սկայազունք, արքայազունք, թագաւորագունք և այլն: Նշենք, թե վերջին բառերս զուտ հավաքական իմաստ ունեն, ուստի և -ունք վերջավորությունը զարմանալի չէ ագինք ձևով հանդերձ: Թագաւորագունք բառի հավաքական նշանակությունն այնքան ուժեղ է, որ թագաւորագն ձևից բացի կազմել են ուրիշ եզակի ձև թագաւորագունք: Կարելի՞ է արդյոք մեր նկատողություններին առարկել, թե նշանակությունից անկախ –ն–ով պարզ բառերից առաջացող բոլոր բաղադրյալները –ունք վերջավորություն պետք է ունենա: Չեն կարծում, որ այդ կարծիքը դեպքերի ուշադիր քննությանը դիմանա:

Ծանրաբեռն բառի հոգնակի ձևն է ծանրաբեռինք և ոչ թե ծանրաբեռունք: Մեյեն մեջ է բերում մեծաբեռունք ձևը: Հայկազյան բառարանը դրան ծանոթ չէ: Ազաթանգեղոսում կարդում ենք. «Մեծաբեռն խստաբեռունս»: Այդ վերջին բառը խստաբեռն ածականի հոգնակի թիվը չէ, որովհետև այդպիսի ածական գոյություն չունի գրաբարում, ունենք միմիայն հավաքական ձևը:

Վերոհիշյալ դեպքերից կարելի է եզրակացնել, թե -ունք հոգնակերտ վերջավորությունը առաջ ունեցել է նաև հավաքական նշանակություն: Այդ վերջավորությունն անկասկած հին է փոքունք

ածականում: Հավանաբար հին է նաև փորքրկունք, մանկունք, աղջկունք բառերում, որոնք տարիքի դաս են մատնանշում: Թերևս դրանից ելնելով -ունք վերջավորությունը ստացել է հավաքական նշանակություն և տարածվել նույնպիսի արժեք ունեցող բառերում՝ եպիսկոպոսունք, սարկաւազունք, պառաւունք, առիժունք, ճրագունք և ըստ երևույթին նաև երիզունք: Արդյոք Մեյեն ճի՞շտ է կռահել, թե անձինք /միանձունք հակադրությունն ուղղակի հնդեվրոպական ծագում ունի: Կասկածելի է, ինչպես արդեն տեսանք: Նվազագույնս կարելի է այլ կերպ բացատրել: Նմանապես գառինք–ին հակադրվող հարսունք ձևը ավելի հեշտ է արդարացնել աղջկունք և պառաւունք բառերի վերջավորությամբ, քան թե զարմանալիորեն պաշտպանված հնդեվրոպական հնագույն ձևաբանական օրենքով: Եթե -ունք վերջածանցի դասավորող կամ հավաքական նշանակությունը հաշվի առնենք, թերևս այն եզրակացությանը կհասնենք, թե հայերենի հոլովման մեջ Մեյեի կողմից մատնանշված «ուշագրավ հնաբանություններից մի քանիսը կարող են հանդիսանալ, ընդհակառակը, հայերենի հետաքրքրական նորաբանություններ»:



**ԲԱՌԱԿԵՐՏՈՒՄԸ ԱՐՂԻ ԱՐԵՎԱՏԱՅԻՆՆԵՐԵՆՈՒՄ:  
ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ**

Արղի արևմտահայ գրական տարբերակին նվիրված զուտ լեզվաբանական ուսումնասիրություններ գրեթե չկան սփյուռքի մեջ: Պարբերաբար մամուլում լույս տեսնող հոդվածների մեջ հեղինակները պարզապես արտահայտում են լեզվի ապագայի հանդեպ ունեցած իրենց լուրջ մտահոգությունները, մշում են, որ լեզուն նահանջ է ապրում բոլոր լեզվական համայնքների մեջ, որ հետապրիլան 4-րդ սերնդի միայն չնչին տոկոսն է հայերեն գրում, կարդում, խոսում, և որ հայոց լեզուն այլևս դադարել է առօրյա ներկայություն լինելուց մեծամասնության համար: Այս բոլոր գրությունները լեզվի կիրարկման ներկա իրավիճակը նկարագրող պարզ, ոչ լեզվաբանական խորհրդածություններ ու դիտողություններ են:

Արևմտահայերենի բառակերտման գործընթացին, նրա բառային համակարգի համալրման ձևերին նվիրված լեզվաբանական աշխատություններ նույնպես շատ քիչ են եղել վերջին տարիների ընթացքում<sup>1</sup>:

Այս կարևոր բացը, այսինքն՝ արղի արևմտահայերենին նվիրված լեզվաբանական ուսումնասիրությունների պակասը, անշուշտ կարելի է դյուրությամբ բացատրել լեզվաբանների պակասով, քանի որ սփյուռքում չկան արևմտահայերենի մասնագետ լեզվաբաններ պատրաստող ուսումնական հաստատություններ: Սա ցավալի իրողություն է, քանի որ լեզվի բոլոր մակարդակների՝ ձևաբանության, հնչյունաբանության, շարահյուսության, բառակերտման ուսումնասիրության, լեզվաբանական քննության միջոցով է միայն կարելի սահմանել տվյալ լեզվի զարգացման գործընթացը, նրա ընդհանուր ուղղվածությունը և բնաշրջման միտումները:

Ներկա ուսումնասիրությունը նվիրված է արղի արևմտահայերենի բառակերտման գործընթացին առնչվող մի քանի

---

<sup>1</sup> Կարելի է մշել Սիլվա Գասպարյանի դոկտորական աշխատանքը «Փարիզաբնակ հայերի բազմալեզու խոսակցության նկարագրական վերլուծություն» վերնագրով պաշտպանված 1992 թ.:

հարցերի: Նախ կսահմանենք արևմտահայերենի լեզվական միջավայրը /ինչո՞վ է բնորոշվում արդի արևմտահայերենի գործառական միջավայրը, որո՞նք են նրա առանձնահատկությունները/, ապա կորոշենք, թե ինչ չափով է լեզվական միջավայրն ազդում բառակերտման ընթացքի վրա: Այնուհետև ֆրանսահայ և ամերիկահայ մամուլից քաղված կոնկրետ օրինակներով կփորձենք ցույց տալ, թե ինչպես են օտար լեզվական միջավայրի մեջ ծնված նոր հասկացություններն ու գաղափարները մուտք գործում արևմտահայ բառապաշարի մեջ և հաճախ բառային տարբեր միավորներով արտահայտվում ֆրանսահայ և ամերիկահայ համայնքների մեջ:

Հայտնի է, որ լեզվի զարգացման ընդհանուր գործընթացի մեջ բառային համակարգի բնաշրջումը՝ էվոլյուցիան, նրա ամենատեսանելի, ամենաշոշափելի մակարդակն է: Բառային կազմի արդիականացումը, նրա շարունակական, մշտադադար և համալրման անհրաժեշտությունը բխում է հասարակական կյանքի մեջ հարատևորեն տեղի ունեցող փոփոխություններն արտահայտելու անհրաժեշտությունից: Եթե լեզուն դադարի նորակերտ եզրերի միջոցով արտահայտել նոր երևույթները, նոր գաղափարներն ու հասկացությունները, ապա նա կդադարի արդիական լինելուց: Այդ իսկ պատճառով բառապաշարի համալրումը երբեք ավարտուն գործընթաց չէ: Հետևաբար, նորագույն եզրերի ուսումնասիրության միջոցով հնարավոր է երևան բերել լեզվի բառային կազմի զարգացման հիմնական դրսևորումներն ու միտումները, հատկապես բառային համակարգի տեղաշարժերն ու համալրման ձևերը: Այլ կերպ ասած, նորակերտ բառային միավորների ձևավորման և կազմության վերլուծությունը կարող է յուրատեսակ ջերմաչափի դեր կատարել:

Բառակերտման գործընթացը կարելի է վերլուծել ըստ երկու կարևոր գործոնների՝ լեզվական միջավայր և միջոցներ:

Լեզվական միջավայրը տվյալ լեզվական համայնքի մեջ տեղի ունեցող ընդհանուր հասարակական կյանքի այն բոլոր երևույթներն են, որոնք այս կամ այն ձևով դրսևորվում են լեզվի բառային համակարգի մեջ: Յուրաքանչյուր լեզվական համայնք հատկանշվում է իրեն յուրահատուկ մշակութային-կենցաղային ամբողջական կյանքով, և ըստ այդմ էլ լեզվական միջավայրի մեջ ստեղծվում են համայնքին անհրաժեշտ ուրույն հայացքներ, գաղափարներ՝ համաձայն կարիքների: Յուրաքանչյուր լեզու գործում է ուրույն լեզվական միջավայրի մեջ. առանց լեզվական միջավայրի չկա կենդանի լեզու:

Բառակերտման գործընթացի մեջ մեկնակետը նոր հասկացությունն է, որն ի հայտ է գալիս ըստ լեզվական միջավայրի կարիքների: Լեզվական միջավայրն արձագանքում է և արձանագրում լեզվական համայնքի մեջ հայտնվող ամեն նոր երևույթ, գաղափար կամ իրույթ: Որքան մեծ է լեզվական միջավայրի կենսունակությունը, նույնքան մեծ է նոր ծագող հայացքների քանակը, և ընդհակառակը՝ որքան նվազ ու սահմանափակ է լեզվական միջավայրի կենսունակությունը, նույնքան փոքր է նոր ծագող գաղափարների քանակը:

Ուստի կարելի է ասել, որ կան նոր գաղափարներով լեզվական միջավայրեր և անարգասավոր՝ ամուլ լեզվական միջավայրեր: Թե որքանով է արևմտահայերենի լեզվական միջավայրը կենսունակ ու նոր գաղափարներով արգասավոր, կտեսնենք ստորև:

Ինչ վերաբերում է բառակերտման միջոցներին, ապա յուրաքանչյուր լեզու որդեգրում է իրեն յուրահատուկ, բնորոշ միջոցներ: Նոր հասկացությունը լեզվի մեջ կարող է արտահայտվել հիմնականում 3 տիպի նորաբանություններով.

1) պարզ նորաբանություն. /նոր եզր՝ կազմված բառային նոր միավորով ու նոր բառիմաստով, լեզվի ներքին միջոցներով/, 2) իմաստային նորաբանություն /արդեն իսկ գոյություն ունեցող բառային միավորը ստանում է իմաստային նոր առում/, 3) ուղղակի փոխառություն /փոխանակ լեզվի բառակազմական ներքին միջոցներով համապատասխան նոր եզր կերտելու, օգտագործում են օտար բառը՝ հարմարեցնելով հայերեն հնչյուններին/:

Բառակերտման գործընթացում սերտ հարաբերակցություն գոյություն ունի լեզվական միջավայրի և բառակերտման միջոցների միջև: Քանի որ յուրաքանչյուր լեզվական միջավայր իրեն յուրահատուկ գաղափարների արտադրողականություն ունի, ապա լեզվական նոր միավորների կերտման միջոցի ընտրությունը կատարվում է նախ և առաջ ըստ միջավայրի: Այսինքն՝ լեզվական միջավայրն ուղղակի կամ անուղղակի ձևով խթանում է նոր եզրերի կերտման միջոցները:

Արևմտահայերենի լեզվական միջավայրը ոչ տիպական է: Իրականում արդի արևմտահայերենը չունի մեկ եզակի լեզվական միջավայր, ինչպես արևելահայերենը կամ ընդհանրապես լեզուների մեծամասնությունը: Արևմտահայերենի լեզվական միջավայրերը բազմաթիվ են. աշխարհի տարբեր երկրներում հաստատված ամեն մի հայ համայնք կազմում է մեկ առանձին և մյուսներից տարբեր լեզվական միջավայր: Հենց սրանում է արևմտահայերենի ինքնատիպությունը, նրա ամենամեծ առանձնահատկությունը:

Լեզվի միօրինակ, ներդաշնակ զարգացման գործոններից մեկը տվյալ լեզվով հաղորդակցողների միևնույն աշխարհագրական տարածքի վրա, միատեղ համախմբված լինելն ու մեկ լեզվական միջավայր կազմելն է: Սփյուռքում որքան լեզվական համայնքներ կան, նույնքան էլ իրարից տարբեր լեզվական միջավայրեր: Այս երևույթը, այն է՝ միևնույն լեզվի տարբեր երկրներում և տարբեր լեզվական միջավայրերում կիրարկվելը, լեզվի անհամաչափ, անկանոն զարգացման գլխավոր պատճառներից մեկը կարող է հանդիսանալ հատկապես բառակերտման մակարդակում:

Արդի արևմտահայերենի զարգացմանը բնորոշ են հետևյալ երեք ազդակները.

1. յուրաքանչյուր արևմտահայ լեզվական համայնք կազմում է մեկ ինքնուրույն լեզվական միջավայր, որը գործում, բնաշրջվում է մեկ ուրիշ ավելի ազդեցիկ ու հեղինակավոր լեզվական միջավայրի մեջ:

2. որն էլ լինի հյուրընկալ երկիրը, արևմտահայերենն ամենուր ունի ստորադաս երկլեզվային կարգավիճակ:

3. աշխարհագրականորեն իրարից հեռու և հաճախ մեկուսացած լինելով՝ հայ լեզվական համայնքները զրկված են կանոնավոր, անմիջական փոխադարձ կապերից: Ամենուր հայ լեզվական համայնքները կազմում են փոքրամասնություն և չունեն իրավական, օրինավոր միջոցներ՝ ծրագրելու և վարելու անկախ լեզվական քաղաքականություն: Իրականում լեզվի կարգավիճակը, նրա ճակատագիրն ուղղակիորեն կախում չունի լեզուն կրողներից:

Մեր դիտարկումները ցույց տանք Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների հայ համայնքների լեզվական միջավայրերի ու բառակերտման միջոցների համեմատական վերլուծության միջոցով:

Ֆրանսահայ լեզվական համայնքը, որի թիվը մոտավորապես երեք հարյուր հազար է, և որի միայն 25 տոկոսն է հայախոս, ապրում ու գործում է մի լեզվական միջավայրում, որտեղ իշխում է ֆրանսերենը: Հայախոս համայնքի բոլոր անդամներն անխտիր երկլեզու են. նրանք դյուրութայամբ, ըստ կարիքի, կարող են անցնել մեկ լեզվից մյուսը: Սակայն միևնույն հայ լեզվական համայնքում կիրարկվող այս երկու լեզուները՝ հայերենն ու ֆրանսերենը, ունեն բոլորովին տարբեր կարգավիճակներ և կազմում են տարբեր լեզվական միջավայրեր: Մեկ կողմից ֆրանսերենն է, որն ունի պետական լեզվի, պարտադիր լեզվի կարգավիճակ՝ իր միջազգային վարկով, բարձր մշակութային հեղինակությամբ ու միջազգային տարածվածությամբ, և որի լեզվական միջավայրը հաճախ նոր

հղացքների, հասկացությունների սկզբնաղբյուր է: Մյուս կողմից արևմտահայերենն է, որը զուրկ է լեզվական կարգավիճակից կամ ավելի ճիշտ՝ ֆրանսերենի համեմատ ունի ստորադաս լեզվի կարգավիճակ, զուրկ է պետական հովանավորությունից: Արևմտահայերենի կիրարկման սահմանները ֆրանսիայում նեղ են. նա ծառայում է որպես ամենօրյա հաղորդակցության միջոց որոշ հայ ընտանիքների ու մշակութային միությունների մեջ, մի քանի հարյուր աշակերտների ուսուցանվում է որպես երկրորդ լեզու, ծառայում է որպես մամուլի լեզու մի քանի հազար հոգու համար: Ենթադրելի է, որ արևմտահայերենը նույնպես ունի բարձր մշակութային հեղինակություն, նրա պատմական հիմնանքները մեծ, արժեքավոր վարկ է տալիս նրան: Լեզվի այս արժանիքները վստահության, հպարտության երաշխիք են հայերեն հաղորդակցողների համար: Սակայն արևմտահայերենի այս առավելությունները երբեք դուրս չեն գալիս հայ լեզվական համայնքի սահմաններից:

Հայ լեզվական միջավայրը, լինի դա Ֆրանսիայում կամ այլուր, չի կարող մեկուսացած, շրջապատից անջատ, իր պատյանի մեջ կղզիացած ապրել ու բնաշրջվել: Հայ և ֆրանսիական լեզվական միջավայրերի շփումը, նրանց հաղորդակցությունն անխուսափելի է, ըստ որում այս լեզվական շփման հետևանքները հանգում են նույն արդյունքին՝ ազդեցիկ, իշխող լեզվի ներգործությանը պակաս ազդեցություն և ստորադաս կարգավիճակ ունեցող լեզվի վրա: Իրականում կարելի է ասել, որ հայ լեզվական միջավայրը ենթամիջավայր է, որը գործում է մեկ ուրիշ ազդեցիկ լեզվական միջավայրի անխուսափելի շրջափակման մեջ: Արևմտահայերենի լեզվական միջավայրն անկախ չէ: Ոչ միայն անկախ չէ, այլև չափազանց սահմանափակ կենսունակություն ունի և այդ իսկ պատճառով չունի նոր հղացքների, նոր գաղափարների արտադրողականություն: Նրա կենսունակությունը սահմանափակ է, որովհետև արևմտահայերենը պետական-վարչական լեզու չէ, նա գիտահետազոտական հիմնարկների աշխատանքների, տեխնիկական, բժշկական, համալսարանական պրպտումների, մշակութային նորարարությունների լեզու չէ: Ոչ մի կազմակերպված հասարակություն չի գործում արևմտահայ տարբերակով: Հանրալեզվաբանական առումով արևմտահայերենն այսօր սոցիալական շատ նեղ պահանջների ու գործառույթների է համապատասխանում: Լեզվական այս կախյալ իրավիճակի հետևանքով ֆրանսահայ լեզվական միջավայրի մեջ ամեն իմաստային, գաղափարային նորամուծություն կատարվում է ամմիջակամորեն ֆրանսիական լեզվական միջավայրից: Հետևաբար կարելի ասել,

որ ֆրանսերենը ֆրանսահայ լեզվական միջավայրին նոր հասկացություններ ու գաղափարներ մատակարարող սկզբնաղբյուրն է:

Գալով ԱՄՆ-ի հայ լեզվական համայնքի իրավիճակին՝ ապա նրա հարաբերակցությունն ամերիկյան լեզվական միջավայրի հետ նույնանման է ֆրանսահայ ու ֆրանսիական լեզվական միջավայրերի փոխադարձ հարաբերակցությանը: Անգլերենն այսօր աշխարհի ամենատարածված ու ամենաազդեցիկ լեզուն է: Նրա լեզվական միջավայրի բարձր կենսունակությունը մեծ քանակությամբ նոր հասկացությունների ու գաղափարների, նոր իրերի ստեղծման գրավականն է: Ուստի ամերիկահայ լեզվական միջավայրի մեջ ամեն նոր իմաստային, գաղափարային նորամուծություն կատարվում է ամերիկյան անգլերենից, որի հետ հայ լեզվական միջավայրը մշտատև անխուսափելի շփման մեջ է: Հայ լեզվական այս երկու համայնքների կախյալ հարաբերակցությունը հյուրընկալ երկրի լեզվական միջավայրից կարելի է այս կամ այն չափով ընդհանրացնել աշխարհի մյուս բոլոր հայ լեզվական համայնքների նկատմամբ: Ակներև է, որ արևմտահայերենի երկու տարբեր լեզվական միջավայրերը՝ ֆրանսահայը և ամերիկահայը, ունեն նորիմաստ գաղափարների տարբեր սկզբնաղբյուրներ: Եվ քանի որ, ինչպես արդեն նշվեց, բառակերտման գործընթացի մեջ սերտ հարաբերակցություն գոյություն ունի լեզվական միջավայրի և բառակերտման միջոցների միջև, ապա արևմտահայերենի տարբեր և ինքնուրույն լեզվական միջավայրերը բնականորեն որդեգրում են բառակերտման տարբեր միջոցներ:

Կոնկրետ օրինակներով և համադրությամբ ցույց տանք, թե ինչպես է իրականանում բառակերտման գործընթացը երկու հայ լեզվական միջավայրերում: Խոսքը վերաբերում է գրավոր լեզվին և բոլոր օրինակները քաղված են ֆրանսահայ և ամերիկահայ մամուլից:

Բառակերտման գործընթացը բաժանել ենք 5 փուլերի:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ. ամերիկահայ չափազանց կենսունակ միջավայրը նորաստեղծ իրույթների, երևույթների, գաղափարների սկզբնաղբյուր է: Նորակերտ բառային միավորները մեկուսացած նորաբանություններ չեն, նրանք շատ հաճախ դուրս են գալիս իրենց լեզվական միջավայրի սահմաններից և դառնում միջազգային նորաստեղծ անվանումներ առօրյա գործուն բառաչերտի մեջ: Ամեն անգամ, երբ նոր գաղափարներ արտահայտելու անհրաժեշտություն է զգացվում, ամերիկյան արևմտահայ միջավայրը կատարում է փոխառություն և այդ նորաբանությունները



հայերեն են մուտք գործում առավել հեշտությամբ, քանի որ հայ մամուլի ընթերցողները, երկլեզու լինելով, հասկանում են նորաստեղծ բառերի իմաստը: Այսպես՝ ամերիկահայ մամուլում կարդում ենք. էրպակ, ֆասթ ֆուտ, սկուփ, վորման, սփոթ, վիտո և այլն:

Ֆրանսիական լեզվական միջավայրը, որը ևս բավական կենսունակ է, նույնպես նորիմաստ անվանումների աղբյուր է և ֆրանսահայ լեզվական համայնքն ըստ պահանջի փոխառում է դրանք՝ մինիթել, փոնթաժ, կոլլաժ, կրաֆիթի, մոթառ, մետիա, կատր և այլն: Հետևաբար, բառակերտման այս առաջին փուլի ընթացքում ամերիկահայ և ֆրանսահայ միջավայրեր են մուտք գործում երկու տարբեր սկզբնաղբյուրներից բխող տարբեր նորաստեղծ անվանումներ, որը և լեզվի բառապաշարի համալրման միօրինակության, ներդաշնակության շեղման առաջին քայլն է:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ. ամերիկահայ լեզվական միջավայրում ծագած և միջազգային դարձած մի շարք նորաբանություններ փոխառվում են նաև ֆրանսերեն լեզվի կողմից: Այսպես՝ ֆրանսիական մամուլում կարդում ենք անգլերենից փոխառված հետևյալ նորաբանությունները. prime-time, scoop, airbag, fast-food, walk-man, sponsoring. Այս երկրորդ փուլի ընթացքում ֆրանսահայ լեզվական միջավայրը փոխառում է անգլերենում նորակերտ այս նույն բառային միավորները ֆրանսերենի միջնորդությամբ: Ֆրանսահայ մամուլում կարդում ենք. սփոնսոր, լոպիինգ, փոսթեռ, քիթ և այլն: Ստացվում է այնպես, որ նույն բառային միավորները մուտք են գործում ամերիկահայ և ֆրանսահայ միջավայրեր տարբեր սկզբնաղբյուրներից և յուրաքանչյուր ինքնուրույն հայ լեզվական միջավայր տառադարձում է միևնույն փոխառյալ բառն ըստ փոխատու լեզվի արտասանության.

ամերիկահայ մամուլ	ֆրանսահայ մամուլ
/անմիջական փոխառություն/	/փոխառություն միջնորդ լեզվից/
<u>թեքնոլոճի</u>	<u>թեքնոլոժի</u>
<u>ռօրիթ</u>	<u>ռալթե</u>
<u>ճիմնեզիում</u>	<u>ժիմնագ</u>
<u>տրազզ</u>	<u>տրոզ</u>
<u>քեյպրլ</u>	<u>քապլր</u>

Օրինակները ցույց են տալիս որ երկու հայ լեզվական համայնքների միջև տեղի է ունենում բառապաշարի համալրման, հարստացման գործընթացի միօրինակության երկրորդ շեղումը, այսինքն՝ տարբեր սկզբնաղբյուրներից միևնույն փոխառված բառը

տառադարձվում է ըստ փոխատու լեզվի հնչյունական առանձնահատկությունների:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ. ֆրանսերեն լեզու մուտք գործող մեծ քանակությամբ անհարկի փոխառությունները հակակշռելու նպատակով «Ֆրանսերեն լեզվի խորհուրդը» պարբերաբար լույս է ընծայում այդ փոխառություններին փոխարինող համապատասխան ֆրանսերեն եզրեր, որոնք պարտավորիչ են մամուլի, վարչական նարմինների, հեռուստատեսության համար.

անգլ. փոխառություն	ֆրանս. համարժեք
walkman	baladeur
air –bag	coussin de sécurité
scoop	primeur
fast –food	prêt à manger
leasing	crédit bail
marketing	mercantique

Անգլերեն փոխառությունները ֆրանսերեն եզրերով փոխարինելը ստեղծում է նոր տարամերժ իրավիճակ ֆրանսահայ և ամերիկահայ միջավայրերի միջև: Փոխառվող եզրերը ֆրանսահայ մամուլում պատճենվում են ֆրանսերենից, իսկ ամերիկահայ մամուլում պատճենվում են անգլերենից կամ առայժմ պահպանում են փոխառյալ ձևը: Ստացվում են զուգահեռ անվանումներ նույն հասկացության համար.

անգլ.	ֆրանս.	ֆրանսահայ մամուլ	ամերիկահայ մամուլ
bypass	- pontage	<u>կամրոջում</u> /պատճենում ֆրանս.-ից/	<u>պայվաս կամ անգում</u> ,/պատճենում անգլ.-ից/
air –bag	- coussin de sécurité	<u>ապահովության բարձիկ</u>	<u>էռպակ</u>
leaflet	- dépliant	<u>ծալլազդ</u>	<u>հայտազդ</u>
sponsoring	- parrainage	<u>հովանավորում</u>	<u>սփոնսորինգ</u>
sticker	- autocollant	<u>ինքնակապիչ</u>	<u>սթիքորդ</u>

Որոշ դեպքերում ֆրանսահայ մամուլը շարունակում է գործածել ֆրանսերենից փոխառված եզրը կոլլաժ, քակուլ, մոթառ, սիթեռն, կրաֆիթի: Այսպիսով՝ երրորդ փուլի ընթացքում հաստատվում է երկու տարբեր հայ լեզվական միջավայրերի բառապաշարի հարստացման միօրինակության նոր շեղում՝ նույն իմաստն արտահայտելու համար տարբեր նորանուծություններ լեզվական երկու համայնքների մեջ:

ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ. ֆրանսահայ և ամերիկահայ միջավայրերի բառապաշարի համալրման գործընթացում անմիօրինակությունների պատճառ կարող են լինել նաև տեղական փոխառությունները, որոնք էլ. Աղայանն անվանում է «հատկական փոխառություններ»: Ամեն մեկ միջավայր փոխ է առնում ազդեցիկ, իշխող միջավայրին յուրահատուկ եզրեր, որոնք արտահայտում են տվյալ ժողովրդին հատուկ կենցաղային սովորություններ, երևույթներ կամ իրեր: Ֆրանսահայ մամուլում կարողում ենք՝ ափերեթիֆ, կոնֆեթի պետություն, միստրայ, կոմպին, սենտիքա, քատր և այլն: Ամերիկահայ մամուլում հանդիպում ենք սիթիզոն, վելֆեռ փոխառություններին: Այս տիպի տեղական փոխառությունները գործածվում են միայն մեկ հայ լեզվական համայնքի մամուլի մեջ և բնականաբար չեն կարող հանդիպել այլ հայ լեզվական համայնքների մամուլի մեջ: Այս երևույթը ևս լեզվի բառապաշարի համալրման մեջ անմիօրինակություն ստեղծող գործոններից է:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈՒԼ. ֆրանսահայ և ֆրանսիական լեզվական միջավայրերի միջև գոյություն ունեցող տևական և ամփոսապիելի շփման հետևանքով տեղի են ունենում ոչ իմաստային ինքնատիպ փոխառություններ: Ամեն հասարակություն կազմակերպված է և գործում է ըստ իրեն յուրահատուկ սովորությունների, կենցաղի ու բարքի: Ֆրանսիական հասարակության մեջ ստեղծվում են արտահայտություններ, կայուն բառակապակցություններ, որոնք ունենում են բացառաբար ֆրանսիական միջավայրին ու ֆրանսիական հասարակական կյանքին տիպական իմաստներ: Այդ արտահայտությունները նոր իմաստներ, նոր հասկացություններ չեն արտահայտում. նրանք արտահայտում են սոցիալ-մշակութային մտածելակերպ: Ֆրանսահայ միջավայրը պատճենում է այդ արտահայտությունները, թեև նրանք նոր գաղափարներ չեն արտահայտում: Այսպես՝ ֆրանսահայ մամուլի մեջ հաճախ հանդիպում են ընկերային ճեղքերը փակել, մեռեալ տառ, լուսանցքային կազմակերպություններ, երրորդ տարիքի անձեր, գինիին ջուր խառնել, գետին շահիլ և այլ պատճենված արտահայտություններ կամ բառակապակցություններ, որոնք հայ

լեզվական միջավայրի մեջ ֆրանսիական մտածելակերպի հետևանքն են: Նման պատճենված բառակապակցությունները հասկանալի են միայն ֆրանսահայ երկլեզու համայնքի անդամներին: Ամերիկահայ համայնքը /կամ մյուս հայ համայնքները/ չի կարող պատճենել կամ հասկանալ նման արտահայտությունները, քանի որ դրանք անգլերենում /կամ այլ լեզուներում/ գոյություն չունեն: Այս տարածված լեզվական փոխներթափանցման երևույթն արդի արևմտահայերենի բառապաշարի համալրման անհամաչափության ու տարերայնության էական գործոններից մեկն է:

Բառապաշարի համալրման նշված փուլերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արևմտահայերենը նոր հասկացություններ արտահայտելու համար նախ դիմում է փոխառության միջոցին, որից հետո երբեմն անցնում է պատճենմանը, երբեմն որոշ ժամանակ պահպանում է փոխառյալ բառային միավորը: Տարբեր լեզվական համայնքներ որդեգրում են բառակերտման տարբեր միջոցներ՝ իրարից անկախ ու աններդաշնակ ձևով: Բառակերտման գործընթացում միևնույն նոր հասկացությունն արտահայտելու համար չկա միասնական վերաբերմունք տարբեր հայ լեզվական համայնքների միջև:

Այնքան է, որ արդի արևմտահայ գրական տարբերակը, որը մասնատված է տասնյակ անկայուն, ինքնուրույն լեզվական համայնքների, բառապաշարի համալրման, նորագույն եզրերի կերտման բնագավառում հանդես է բերում անմիօրինակություն, անկանոնություն: Բառապաշարի համալրման միևնույն խնդիրները տարբեր լուծումներ են գտնում տարբեր լեզվական համայնքներում: Վերոհիշյալ օրինակներն ավելի մեծ կշիռ են տալիս Անտուան Սեյեի այն հավաստմանը, որ լեզվական փոփոխությունների անկանոնությունը պետք է փնտրել լեզվական համայնքների սոցիալական անկայունության մեջ: «Լեզվական բոլոր երևույթները,- գրում էր Սեյեն,- լինեն դրանք համաժամանակյա կամ տարժամանակյա, անմիջական և մշտական կապի մեջ են այն հասարակության հետ, որի արտահայտչական միջոցն են այդ լեզուները»: Եվ քանի որ յուրաքանչյուր հայ համայնք ունի տարբեր կազմակերպչական ենթակառույց ու կարգավիճակ, ապա արևմտահայերենի գործառական ոլորտները տարբերվում են մեկ համայնքից մյուսը, և բացի այդ, հայ լեզվական տարբեր միջավայրեր գտնվում են յուրաքանչյուրը տարբեր իշխող օտար լեզվական միջավայրի ազդեցության տակ: Այսպիսով՝ արդի արևմտահայ գրական տարբերակը չունի լեզվի բնականոն զար-

գացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ու նախադրյալներ:

Արևմտահայ տարբերակի լեզվական ներքին հակունդ բառակերտման գործում միշտ եղել է դեպի ազգային-ներքին լեզվամիջոցները, սակայն վերջին տարիների ընթացքում նրա համալրման միջոցները և ընդհանրապես լեզվի զարգացման ուղղվածությունը, նրա կարգավիճակն ու գործառական ոլորտները տարբեր են ինքնուրույն լեզվական համայնքներում, հարցականի տակ են դնում այդ ավանդական հակունդ:

Արևմտահայ գրական տարբերակի բառակազմի համալրման նշված միջոցներն ու միտումները մի շարք հարցեր են հարուցում: Նախ՝ զանազան հայ լեզվական միջավայրերի մամուլի մեջ երևան եկող նորաստեղծ անվանումները որքանով են կենսունակ, այդ նորամուտ բառային միավորները կարող են ներթափանցել հաղորդակցողների բառապաշարի մեջ: Մեկ խոսքով՝ մամուլի լեզուն ի՞նչ չափով է ունակ ներգործելու հաղորդակցողների լեզվի վրա, այսինքն՝ Սփյուռքի առանձնահատուկ պայմաններում սահմանել գրավոր խոսքի ազդեցությունը բանավոր խոսքի վրա: Անշուշտ, սա առանձին ուսումնասիրություն պահանջող հարց է:

Մեկ ուրիշ հարց է ծագում. հնարավո՞ր է արդյոք կանխել լեզվի այս անկանոն, տարբերային բնաշրջումը ու նրան տալ նոր, ավելի բնականոն ուղղվածություն, հատկապես այլ լեզուների հետ հարաբերակցության, շփման գործընթացի մեջ: Լեզվաբաններն այսօր ընդունում են, որ մարդու գիտակից միջամտությունը լեզվի զարգացման բնագավառում հնարավոր է՝ որդեգրելով լեզվական քաղաքականություն: Այդպիսի միջամտությունը կարող է արդյունավետ լինել հատկապես բառակերտման բնագավառում:

Թվարկված բարդ խնդիրներին պետք է ավելացնել նաև բառափոխառման ու բառակերտման հարցում արևելահայերենի ու արևմտահայերենի որդեգրած տարբեր ուղղություններն ու եղանակները<sup>1</sup>:

Արդի արևմտահայերենի զարգացման ընդհանուր միտումները, հատկապես նրա բառապաշարի համալրման անկանոնությունն ու անմիօրինակությունը թերևս էլ ավելի արդիական ու կենսական են դարձնում երկու տարբերակների փոխհարաբերությունների խնդիրը: Հայերենի երկու տարբերակների միջև նոր կապեր հաստատելը, համակարգայնացում ստեղծելը, նոր

<sup>1</sup> Տե՛ս Ռ.Տեր Մեղկեռյան, Աշխարհաբարի երկու տարբերակների բառային նորակազմությունների տարժամանակյա քննություն, ՊԲՀ, 1988, հ.3., էջ 93-100:

անվանումների նկատմամբ միասնական վերաբերմունք ունենալը, նրանց մերձեցման համար կոնկրետ կատարվելիք աշխատանքը և մանավանդ լեզվական հանազգային քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը ազգային միասնությունը շոշափող ամենակենսական հարցն է ներկայումս:



**ՕՔՍԻՄՈՐՈՆԻ (ՆՐԲԱԲԱՆՈՒԹՅԱՆ) ՆՇԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ  
(ըստ արդի ֆրանսիական գրականության նյութի)**

Նշանագիտության՝ որպես լեզվաբանական գիտակարգի, զարգացումն ընթացել է նշանների կամ նշանային համակարգերի մասին գիտությունից դեպի նշանակությունների մասին գիտություն դառնալու ուղիով:

Սկզբնապես նշանագիտությունը պատկերացվում էր որպես նշանների ու նշանային համակարգերի մասին ընդհանուր գիտություն, որն սկիզբ է առնում նշանի վերաբերյալ սոսյոլոյան տեսությունից: Սոսյոլոը *sémiologie* տերմինը գործածում է հենց այդ իմաստով, իսկ գիտակարգի տեսական դրույթները մանրամասնորեն մշակվում են Չարլզ Մորիսի<sup>1</sup> կողմից և տեղ գտնում Յակոբսոնի<sup>2</sup>, Բարտի<sup>3</sup> և այլոց աշխատություններում: Ֆրանսիական լեզվաբանությունը նախ հետևում է այս ուղղությանը, ընդ որում *sémiotique* և *sémiologie* տերմիններն օգտագործվում են իբրև հոմանիշներ, այն տարբերությամբ միայն, որ *sémiologie*-ն դիտվում է որպես նշանային համակարգերի մասին ընդհանուր գիտություն, իսկ *sémiotique*-ն՝ այդ համակարգերից որևէ մեկի մասնավոր ուսումնասիրություն:

1960-ական թվականներին Եվրոպայում նկատվում է լեզվաբանության դերի ընդգծված գերազնահատում հումանիտար գիտությունների բնագավառում, քանի որ դրանց շարքում առաջինը լեզվաբանությունն էր, որ օգտագործելով վերլուծության մաթեմատիկական միջոցներն ու ձևայնացնելով իր մեթոդները, կանխանշեց համակարգայնության գաղափարը: Ֆրանսիայում լեզվաբանությունը համարվում էր առաջատար, ուղենիշ գիտություն: Սակայն, ինչպես հայտնի է, կառուցվածքային լեզվաբանության մինչև վերջ ներակա (իմանենտ) մնալու ջանքերն արգասավոր չէղան: Այդ պատճառով վերանայվեց նաև նշանագիտության էությունը, որը նշանների կամ նշանային համակարգերի մասին գիտությունից վերաճեց նշանակությունների մասին գիտության, և որը տեղ գտավ Գրեմասի<sup>4</sup>, Կոկեի<sup>5</sup> և այլոց աշխատություններում:

Լեզվական իրողությունների դիտարկումը պարզորոշ մատնացույց է անում, որ եթե հնչյունագրային արտահայտությունը կարող է լինել իմաստի (բովանդակության) նշանակիչը (նշանը),

ապա իմաստը (բովանդակությունը), իր հերթին, կարող է դառնալ հնչյունագրային արտահայտության նշանակիչ (նշան): Ասվածը հատուկ ապացուցման կարիք չունի, քանի որ պարզորոշ ուրվագծվում է, թեկուզ, երկու տեսակի բառարաններից օգտվելիս: Մի կողմից բացատրական կամ երկլեզվյան բառարանում փորձում ենք գտնել բառի իմաստը, բովանդակությունը, որպես նշանակիչ հիմք ունենալով այդ բովանդակության հնչյունագրային արտահայտությունը (այս դեպքում ձևից զնուն ենք դեպի բովանդակությունը), մյուս կողմից՝ հոմանիշների բառարանում որոնում ենք բառեր, որոնք կհամապատասխանեն մեր մտքին, այսինքն իմաստը, բովանդակությունն է դառնում մեր որոնած հնչյունագրային արտահայտության հիմքը՝ նշանակիչը (բովանդակությունից ենք զնուն դեպի ձևը): Բովանդակության և արտահայտության դիտվածքների հակադարձելիության այս օրենքը առաջին անգամ արձանագրել է դանիացի նշանավոր լեզվաբան Լուի Ելմսկը իր գլխավոր աշխատության «Լեզվի տեսության հիմնավորման շուրջը» գրքում (1943թ.)<sup>6</sup>: Հիշյալ հակադարձումը փաստորեն առկա է այն դեպքում, երբ մտքի բովանդակությունից իմաստից շարժվում ենք դեպի նշանը: Ուրեմն պարզ է նաև, որ վերջինս գործում է մտքի ակտիվ ողղվածության պայմաններում, այն է՝ մտածող, որոնող սուբյեկտից (մարդ արարածից) դեպի արտաքին աշխարհը՝ օբյեկտը: Սրանով իսկ բովանդակության և արտահայտության դիտվածքների հակադարձելիության օրենքը առնչվում է մարդու ակտիվ գործունեության սկզբունքին:

Ահա այս ակտիվ գործունեության շնորհիվ իմաստից դեպի ձևը ընթանալու ուղղվածությունը և տվյալ բովանդակության համար արտահայտության մի նոր միջոց գտնելու փաստն է, որ արձանագրելի է օքսիմորոնի (հայերեն՝ նրբաբանություն<sup>7</sup>) մեջ: Անհատը գիտե, թե ինչ է ուզում ասել, պարզապես որոնում է ասելիքի ձևը՝ արտահայտությունը, նշանը:

Արտահայտչականության կարևորագույն աղբյուրներից մեկը իմաստային պատկերավոր պատճառաբանվածությունն է, որ հակադրվում է կիրարկությանը: Որքան սովորական է նշանը, այնքան թույլ է պատկերավորությունը, և՛ հակառակը: Այս տեսանկյունով պատկերավոր արտահայտչականությունը ներհատուկ է դիպվածային գործածություններին, այսինքն՝ նրանց, որոնք բառարաններում չեն արձանագրվում, քանի որ չեն պատկանում լեզվի մակարդակին, ենթակա չեն լեզվի ոճաբանությանը և ըստ էության «որքան հազվադեպ, այնքան արտահայտչական» ընդհանուր օրինաչափության դրսևորումներն են: Այս օրինաչափության



համաձայն ամենից ավելի արտահայտչական պետք է լինի այն նշանը, որը երբևէ չի օգտագործվել տվյալ բովանդակության համար: Հենց այս նշանն էլ անհատական-հեղինակային պատկերն է և օքսիմորոնի հիմնական, էական, ելակետային հատկանիշը: Չմոռանանք ավելացնել, որ ընդհանուր նշանագիտական տեսանկյունով ոճական իմաստի առաջացումը նշանակցման (կոնոտացիայի) մասնավոր դրսևորում է:

Հույն և հռոմեացի ճարտասանները «խոսքի զարդերը» (կամ «պաճուճանքները») բաժանում էին երկու մասի՝ դարձույթներ և բանադարձումներ<sup>8</sup>: Տարբերությունն այս երկուսի միջև համարվում էր այն, որ դարձույթները կարող են գոյություն ունենալ նաև առանձին բառերի, իսկ բանադարձումները՝ միայն բառային զուգորդումների մեջ: Ներկա ըմբռնմամբ, պատկերավոր արտահայտության միջոցները կարելի է սահմանազատել հարացուցայնության և շարակարգայնության սկզբունքով: Իսկ բուն օքսիմորոնը ոճական բանադարձման այն տեսակն է, որ կազմված է երկու, քիչ թե շատ հակադիր, հակիմաստ բառերի հարադրությամբ. *neige chaude* - տաք ձյուն, *silence sonore* - խոսուն լռություն, պերճախոս լռություն, *mouvement immobile* - անշարժ շարժում, *folie raisonnable* - բանական խենթություն, *amusement ennuyeux* - ծածրալի զվարճություն, *se hâter lentement* - դանդաղ շտապել և այլն: Հիշենք նաև Վ.Հյուգոյի արտահայտած հետևյալ միտքը. *La mélancolie, c'est le bonheur d'être triste* – Մելանոլիստությունը տխուր լինելու երջանկությունն է: Գրական մի շարք երկերի վերնագրեր օքսիմորոններ են՝ «Ամենը մեղավորներ», (Ալեքսանդր Օստրովսկի, 1883թ.), «Կենդանի դիակ», (Լև Տոլստոյ, 1900թ.), «Լավատեսական ողբերգություն», (Վսեվոլոդ Վիշնևսկի, 1933թ.):

Օքսիմորոնը բանադարձման անընդհատ զարգացող և դրսևորման նորանոր ձևեր ստացող տարատեսակ է, որի արտահայտչական ուժը, ինչպես տեսնում ենք, բառամերձման անսպասելիության, անգուշակելի՝ անկանխատեսելի բնույթի, դիպվածայնության, ոչ սովորական լինելու մեջ է, երբ առկա է բաղադրիչների համադրելիության խախտում: Իսկ որքան արտասովոր է բաղադրիչների զուգորդումը, այնքան ընդգծված է բառերի արտահայտչականությունը: Եվ այս առումով օքսիմորոնն առանձնահատուկ տեղ ունի ոճական բանադարձումների շարքում:

Հայտնի է, որ պատկերավորման բոլոր միջոցների հիմքում ընկած է նշանի հավելյալ պատճառաբանվածությունը ոճական երանգավորումից զուրկ, չեզոք միավորների հարաբերությամբ,

որոնք կազմում են լեզվական կանոնը, և որոնց հետ ունեցած համեմատության մեջ են ընկալվում շեղումները, նահանջը արտահայտության կանոնական մակարդակից: Որպես հետևանք՝ ընկալման ոչ ինքնաբերականությունը, կապակցության կառուցվածքը վերլուծելու անհրաժեշտությունը և ապա՝ ներգործումը ընկալողի երևակայության, նրա հուզական ոլորտի վրա:

Նշանին պատճառաբանվածություն հաղորդելու և նրան արտահայտչական ուժ տալու ձգտումը լեզվի զարգացման կարևորագույն գործոններից մեկն է, որին դիմակայում է մեկ այլ, հակադիր ուղղվածություն ունեցող՝ ապապատճառաբանվածության, պատկերավորության և ընդհանրապես արտահայտչականության թուլացման ու ջնջման միտումը: Եվ ըստ այն բանի, թե ինչպես են բառերը, քերականական ձևերն ու կառույցները աստիճանաբար չպատճառաբանված նշաններ դառնում, լեզվակիրներն ավելի ու ավելի են զգում արտահայտության միջոցների նորացման, թարմացման անհրաժեշտությունը: Այս է պահանջում անհատական, անձնային ելակետը, որը ձգտում է մարմնավորվել խոսքի մեջ, քանի որ մարդիկ չեն կարող հաղորդակցվել բացառապես հասարակական որևէ դեր ստանձնած անհատի մակարդակով: Արտահայտության նոր միջոցներ, ծնված առօրյա խոսքում կամ գրականության մեջ, տարածվելով ընդգրկվում են լեզվագործածության հոսրնթացի մեջ, կորցնում արտահայտչականությունը, դառնում վերացական նշաններ, որոնց փոխարինելու են գալիս նորերը: Այսպես, ֆրանսերենում որպես օքսիմորոն երևան եկած շատ կապակցություններ գործածության ուժով այսօր կորցրել են ոճական բանադարձման արժեքը և նույնիսկ վերածվել բարդ բառերի (clair-obscur, aigre-doux, doux-amer և այլն): Երևույթը բնորոշ է պատկերավոր արտահայտության բոլոր տեսակներին (լեզվական և ոճական փոխաբերություններ և այլն):

Ինչպես երևում է վերոհիշյալ օրինակներից, գոյական+ածական կապակցությամբ կազմված օքսիմորոնը ամենատարածվածն է, սակայն հազվադեպ չեն նաև բայ+մակբայ, ածական + մակբայ և այլ զուգորդումները: Բերենք մի քանի բնագրային օրինակ արդի ֆրանսիական գրականությունից.

Des ombres sans pas, sans voix, sans ombres glissent par l'espace hors de l'espace.

Անքայլ, անձայն, անստվեր ստվերներ սահում են

տարածությունից դուրս տարածության մեջ:

Ժակ Ռեդա

“L’éternité” est ce qui dure le moins.

Հավերժությունն այն է, ինչն ամենից կարճ է տևում:

Ֆիլիպ Սոլեր

Les aveugles nous contemplent.

Կուրերն ակնապիշ նայում են մեզ:

Պոլ Էյուլար

Le gémir de ne par gémir.

Չտնքալուց տնքալը:

Լուի Արագոն

Icebergs. Icebergs, cathédrales sans religion de l’hiver éternel.

Սառցալեռներ, սառցալեռներ, հավերժական ձմեռվա

անկրոն տաճարներ:

Անրի Միշո

Le cri éperdu du silence dure des siècles.

Լռության խելակորույս ճիչը դարեր է տևում:

Անրի Միշո

Gouffre horizontal ou se perd l’esprit vertigineux des hommes.

Հորիզոնական մի վիհ, ուր անէանում է մարդկանց

գլխապտույտ ոգին:

Լը Կլեգիո

Եվ վերջապես, ժորժ Բեռնանոսը իր գրվածքներից մեկում ոչ միայն օքսիմորոնի միջոցով է արտահայտում միտքը, այլ միաժամանակ ի հայտ է բերում նրա բուն էությունը.

Par une extraordinaire, une prodigieuse contradiction dans les termes, ils se vantaient de s'être libérés de la liberté!

Բառերի մի արտասովոր ու զարմանահրաշ հակադրությամբ նրանք պարծենում էին, թե ազատվել են ազատությունից:

Անհրաժեշտ ենք համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել օքսիմորոնին բնորոշ հետևյալ յուրահատկության վրա: Օքսիմորոնի մեջ հակադրությունը նախ գիտակցվում է, ապա ջնջվում, ձուլվում, վերանում: Սրանք են օքսիմորոնը ճանաչելու և արձանագրելու երկու կարևոր ու որոշիչ պահերը: Եթե հակադրությունը չի գիտակցվում, ապա դա օքսիմորոն չէ, իսկ եթե հակադրությունը չի ջնջվում, չի ձուլվում, չի վերանում, ապա դա անհեթեթություն է, այսինքն կրկին օքսիմորոն չէ:

Լեզվաբանի հայեցակետով՝ առօրյա խոսքի և բառային-գեղարվեստական ստեղծագործության միջև անանցանելի անդունդ գոյություն չունի, չկան նույնիսկ հստակ գծագրված սահմաններ: Մեկում գործող միտումները գոյություն ունեն մյուսում ևս: Սակայն նշանին պատկերավոր պատճառաբանվածությամբ օժտելու միտումը ամենից ավելի ցայտուն կերպով ի հայտ է գալիս արվեստի ու գեղարվեստական գրականության (մասնավորապես քնարերգության) մեջ, որոնցում հասարակությունը անհատների մակարդակով խոսում է կարծես ինքն իր հետ, և որտեղ անհատականն ստանում է հասարակական արժեք ու հնչեղություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ch.Morris.** Writings on the General Theory of Signs. The Hague-Paris, 1971.
2. **R.Jacobson.** Essais de linguistique générale, Paris, 1963.
3. **R.Barthes.** L'aventure sémiologique, Paris, 1986.
4. **A.-J.Greimas.** Sémiotique structurale, Paris, 1966.
5. **J.-C.Coquet.** Sémiotiques//Languages. 1973, N 31.
6. **Л.Ельмслев.** Прологомены к теории языка. Пер.с англ. Сб.»Новое в лингвистике». Выл.І, М., 1962, стр.318.
7. **Տես Ֆ. Խլղաթյան, Ռճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 124:**
8. **Նույն տեղում, էջ 145:**



**ԽՈՍՔԻ ՊԱԿՏԵՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ի ԲՐԵՎ  
ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՐԳ**

Պատկերավորությունը ոճաբանության կարևոր գիտակարգերից է, գործառնական ոճերը միմյանցից տարբերակող ընդհանուր գործոններից մեկը: Առանձնապես մեծ է նրա դերն ու կշիռը գեղարվեստական, հրապարակախոսական և առօրյա խոսակցական ոճերում: Սակայն տեսականորեն բավարար կերպով հիմնավորված և համընդհանուր ճանաչում գտած մի բնորոշում, ինչպես խոսքի պատկերավորության մասին ընդհանրապես, այնպես էլ խոսքային պատկերի մասին մասնավորապես, մինչև վերջերս չկար: Այդ պատճառով որոշ լեզվաբաններ նույնիսկ կարծում են, թե պատկերավորություն բառը զուրկ է տերմինաբանական ճշգրտությունից՝:

Սովորաբար պատկերավորությունը համարվում է խոսքի մի այնպիսի հատկանիշ, որն իրական, շոշափելի է դարձնում մտքի առարկան, լսողի /ընթերցողի/ մեջ առաջացնում համապատասխան մտապատկերներ՝ ազդելով նրա երևակայության վրա: Պատկերավորություն ստեղծվում է այն ժամանակ, երբ, ինչպես ասում են, գրողը ոչ թե պատմում է, այլ նկարում բառերով, երբ նրան հաջողվում է բառերը վերածել պատկերների: Իր մատչելիությամբ հանդերձ, այս բնորոշումը գրական երկի լեզվի պատկերային համակարգի ուսումնասիրման, պատկերների բնորոշման ու դասակարգման համար, ինչ խոսք, դեռևս բավական չէ:

Տեսական դրույթների անմիասնականությունը բնականորեն անմիասնականություն է առաջացնում նաև կոնկրետ գործնական խնդիրներում: Այսպես, օրինակ, գրողների երկերի լեզվի ուսումնասիրողների զգալի մասը պատկերային համակարգի քննությունը հանգեցնում է միայն գրողի օգտագործած դարձույթների և բանադարձումների քննությանը: Ավելին՝ երբեմն դրանք անջատվում են միմյանցից՝ առաջինները դիտելով իբրև պատկերավորման միջոցներ, իսկ մյուսները՝ արտահայտչամիջոցներ, այլ կերպ ասած՝ անճիշտ կերպով տրոհվում և երբեմն էլ իրար են հակադրվում պատկերավորությունը և արտահայտչությունը:

Արտահայտչության, պատկերավորության և հուզականության փոխհարաբերությունը կարող է ներկայացվել իբրև ընդհանուրի և մասնավորի հարաբերություն, երբ արտահայտչությունը

հանդես է գալիս իբրև ընդհանուր հատկանիշ, ունակություն, իսկ պատկերավորությունն ու հուզականությունը՝ այդ հատկանիշի կոնկրետ դրսևորումները՝ իբրև արդյունք: Այս հանգամանքը նշվում է մի շարք գիտնականների կողմից:

«Արտահայտչությունը տվյալ բովանդակության հետ լեզվական միավորի առավել ճշգրիտ և վառ համապատասխանությունն է, - գրում է Ա.Ի.Չիժիկ-Պոլեյկոն, - բառի ոճաբանական կառուցվածքում պարտադիր տարր է, մինչդեռ այլ ոճաբանական հատկանիշներ կարող են և չլինել»<sup>2</sup>:

Նույն հեղինակը մեկ այլ տեղում ասում է. «Արտահայտչությունը դրսևորվում է որպես էքսպրեսիա, հուզական երանգավորում կամ պատկերավորություն, ինչպես նաև առանց դրանց»<sup>3</sup>: Իսկ Օ.Ախմանովայի «Լեզվաբանական տերմինների բառարանում» կարդում ենք՝ «экспрессия»<sup>4</sup>- խոսքի արտահայտչական գեղանկարող /изобразительный/ հատկություններ, որ նրան տարբերում են սովորական /կամ ոճականորեն չեզոք/ խոսքից և տալիս պատկերավորություն ու հուզական երանգավորում»<sup>5</sup>:

Արտահայտչամիջոցների և պատկերավորման միջոցների առանձնացումն արդյունք է այն տեսակետի, որն արտահայտչությունը համարում է միայն շարահյուսական կառույցների մենաշնորհը և ժխտում այդ հատկանիշի գոյությունը լեզվական մյուս միավորների մեջ: Որոշ լեզվաբաններ, ընդարձակելով արտահայտչամիջոցների ցանկը, այնտեղ դասում են նաև ձևաբանական ու բառապաշարային միավորները ևս<sup>6</sup>: Սակայն դա նույնպես թերի է, քանի որ այդ դեպքում էլ դուրս են մնում արտահայտչական հնարավորություններով հարուստ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հնչերանգը, ռիթմը, բարեհնչունությունը, հնչյունական կոնկրությունները և այլն: Չի կարելի մոռանալ նաև արտահայտչական արտալեզվյան միջոցները /դիմախաղ, շարժումներ/: Այսպիսով՝ ստացվում է, որ լեզվի մեջ արտահայտչամիջոցների առանձին, մեկուսացած ինչ-որ խումբ գոյություն չունի, արտահայտչությունը հատուկ է բոլոր տեսակի լեզվական միավորներին, հետևաբար արտահայտչամիջոցների շարքում պետք է հիշել բոլոր տիպի միավորներ էլ /հնչյունական, բառապաշարային, ձևաբանական, շարահյուսական/:

Քանի որ պատկերավորությունն արդյունք է լեզվական միավորների արտահայտչական ունակության, իսկ այդ հատկանիշը կարող է հատուկ լինել բոլոր կարգի լեզվական միավորներին, հետևաբար ճիշտ չի լինի պատկերավորությունը սահմանափակել

այս կամ այն տիպի լեզվական միավորների կամ նրանց յուրակերպ գործածության ուղրտով: Այնինչ հաճախ հենց այդպես էլ արվում է պատկերավորությունը կապելով միայն բառերի փոխաբերական գործածության հետ:

Նախքան այս հարցի կոնկրետ քննությունը, տեսնենք, թե ինչպես են ըմբռնվում պատկերավորություն և գեղարվեստական պատկեր հասկացությունները մասնագիտական գրականության մեջ:

Պատկերավորության վերաբերյալ շատ մտքեր, ասույթներ ու սահմանումներ կան՝ սկսած այնպիսիներից, որոնք իրականում չեն բացատրում նրա էությունը /օրինակ՝ «Պատկերավոր – իր մեջ պատկեր պարունակող»<sup>7</sup>/, վերջացրած հարցի փիլիսոփայական ընդհանրացումներով, ինչպես՝ «Գեղարվեստական պատկերը իրականության ճանաչողության առանձնահատուկ ձև է, որ ենթադրում է ընդհանուրի և անհատականի դիալեկտիկական միասնություն»<sup>8</sup>:

Կան, իհարկե, այդ հասկացությունների ավելի հանգամանափց բացատրություններ ևս: Օրինակ՝ «Պատկերավորությունը արտահայտվողի վերաբերյալ տեսողական, լսողական, շոշափողական, մկանա-շարժումնային և այլ պատկերացումներ առաջացնելու բառի ունակությունն է»<sup>9</sup>, «Բառի՝ պատկերացումներ, այսինքն՝ ռեալ իրականության կենդանի տեսողական պատկերներ առաջացնելու ունակության հետ է, ակներևաբար, կապված լեզվի պատկերավոր կողմը»<sup>10</sup>:

Տավոք, հայ լեզվաբանական գրականության մեջ բազմիցս խոսվում է խոսքի պատկերավորության, պատկերի և պատկերավորման միջոցների մասին, բայց փորձ չի արվում սահմանելու այդ հասկացությունները: Լավագույն դեպքում դա նույնացվում է բառերի փոխաբերական գործածության հետ<sup>11</sup>:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, թե պատկերավորությունը խոսքի այն հատկանիշն է, որի շնորհիվ մտքի առարկան զգայապես ընկալունակ է դառնում<sup>12</sup>:

Խոսքի պատկերավորության և խոսքային պատկերի հարցում կարևորը փաստորեն խոսքի բովանդակության՝ զգայաբանների միջոցով ընկալումն է<sup>13</sup>:

Մարդկային մտածողությունն իրականության ճանաչողության արդյունք է: Սակայն իրականության ճանաչողությունը կարող է լինել երկու տեսակ՝ առարկայական և տեսական /վերացական/: Մտածողությունը իրականության տեսական ճանաչողությունն է: Տեսական ճանաչողությունը վերացարկման /աբստրակցիայի/ գործընթաց է, իսկ լեզուն կարելի է համարել

բարձրագույն վերացարկուն, քանի որ նրանում իրականությունն արտահայտվում է նշանների միջոցով: Սակայն լեզվի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ մարդկային միտքն այդ նշաններով չի անփոփոխվում և անմիջապես նրանցից վերադառնում է դեպի իրականության այն առարկան, երևույթը, որոնց վերացարկունից գոյացել է տվյալ նշանը: Այսինքն՝ մտածողության և խոսքի ներսում միտքն անընդհատ «վազքի» մեջ է իրականության առարկաների ու նրանց վերացական նշանների միջև: Մտածողության այս հատկության, այսինքն՝ լեզվական նշանների ետևում այդ նշանների արտահայտած իրականությունը տեսնելու հետ էլ կապված է պատկերավորությունը:

Սակայն այս դեպքում մենք գործ ունենք հարցի մեկ կողմի հետ՝ պատկերավորության՝ իբրև լեզվական միավորների հատկանիշի, որը գլխավորապես կապվում է բառիմաստներին: Այդ հատկության շնորհիվ բառերը մեր գիտակցության մեջ առաջացնում են մտապատկերներ. լսելով բառը՝ մենք անմիջապես պատկերացնում ենք տվյալ առարկան: Լեզվական միավորների այս հատկությունը Գ.Օ. Վինոկուրը համարում է բնական /կամ պոտենցիալ/ պատկերավորություն<sup>14</sup>: Այդ տերմինը մեր կարծիքով շատ լավ է արտահայտում տվյալ երևույթի էությունը: Այս իմաստով պատկերավորությունը, ինչպես Ռ. Ա. Բուդաղովը, Ա. Ի. Եֆիմովը և ուրիշներն են նշում, կարող է հատուկ լինել լեզվի բոլոր ոճերին, նույնիսկ գիտական<sup>15</sup>: Բայց դա բոլորովին տարբեր է գեղարվեստական խոսքի պատկերավորությունից: Սա հարցի երկրորդ կողմն է՝ պատկերավորությունն իբրև գեղագիտական կարգ, որը հիմնվելով լեզվական միավորների բնական պատկերավորության վրա՝ դրսևորվում է ստեղծագործության գեղագիտական - ոճաբանական առանձնահատկություններում : Հարցի այս երկրորդ կողմի մասին հանգամանորեն խոսում է ակադ. Վ.Վ.Վինոգրադովն իր «Ոճաբանություն: Բանաստեղծական խոսքի տեսություն: Պոետիկա» գրքում: Այս տիպի պատկերավորության շնորհիվ է խոսքը դառնում արվեստի արտահայտություն: Դա պայմանավորված է մարդկային մտածողության մի շատ կարևոր առանձնահատկությամբ՝ նրա զուգորդական բնույթով: Բան այն է, որ մարդու կողմից առարկայի ընկալման համար պարտադիր չէ նրա բոլոր բաղադրիչ մանրամասների գոյությունը: Բավական է տվյալ առարկայի, երևույթի նույնիսկ միայն մեկ էական, հիմնական բաղադրիչ, և մեր մտածողությունը լրացնում է պակասը, ստեղծում նրա լրիվ պատկերը: Օրինակ, երբ Հ. Թումանյանը ծերունի հոր բերանով Մարոյին ասում է.«Ուտք չդնես էլ տունս, մրոտեցիր



անունս», մենք բնավ էլ չենք կարծում, թե Մարոն պետք է միայն իր ոտքը տուն չմտցներ, այլ հասկանում ենք, որ ինքը չափտի տուն մտնի:

Ինչպես առանձին մասերի ճանաչմամբ մենք պատկերացում ենք ամբողջը, այնպես էլ ամբողջի ճանաչմամբ պատկերացում ենք ունենում նրա մասերի վերաբերյալ: Այս հանգամանքը լավ է բացահայտված Յեզեի հետևյալ ասույթում. «Յսկայական տարբերություն է նկատվում այն բաների միջև, ինչ մեզ տալիս է պատկերավոր մտապատկերը, և ինչ պարզվում է մեր կողմից առանց նրա, արտահայտման այլ ձևերի միջոցով: Այդ բոլորը հիշեցնում է այն, ինչ կատարվում է ընթերցանության ժամանակ: Եթե մենք նայում ենք տառերին, որ նշաններ են ծառայում բառի հնչյունների համար, ապա մենք նրանց նայելով անմիջապես ըմբռնում ենք կարդացածը առանց հնչյունները լսելու անհրաժեշտության, և միայն ընթերցանության մեջ անփորձ անձինք են նախ արտաբերում առանձին հնչյուններ, որպեսզի հնարավորություն ունենան հասկանալու բառը»<sup>16</sup>:

Բացի այդ, մարդկային մտածողությունը, հիմնվելով իրականության առարկաների միջև եղած զանազան զուգորդությունների ու հարաբերությունների վրա, հնարավոր է դարձնում, որ որոշ առարկաներ հանդես գան ուրիշների համար իբրև արտահայտման միջոցներ, նշաններ: Օրինակ, երբ Ավ. Իսահակյանը սև աչքերը համեմատում է մութ, անծայր գիշերի, իսկ Լ. Տոլստոյը Կատյուշա Մասլովայի աչքերը՝ թաց հաղարջի հետ, ապա գիշեր և հաղարջ առարկաները հանդես են գալիս իբրև աչք առարկայի արտահայտման միջոցներ, նշաններ: Սակայն, ինչպես նկատելի է, պատկերավոր մտածողության համար կարևորը ոչ թե առարկաների, երևույթների ֆիզիկական տեսքի, երկրաչափական ձևերի վերականգնումն է, այլ նրանց էության, որը երբեմն կարող է ոչ միայն չհամապատասխանել, այլև նույնիսկ հակասել նրանց արտաքին ֆիզիկական կողմին: Դ.Թումանյանի «Փարվանա» պոեմում կա այսպիսի մի քառյակ՝

Չայրը ինչպես մռայլ մի ամպ,  
Աղջիկն անուշ մի լուսին,  
Ամպ ու լուսին իրար փարված՝  
Դուրս են գալիս միասին:

Ակնհայտ է, որ այս գեղարվեստական պատկերում բանաստեղծը բնավ նկատի չունի արտահայտվող առարկաների ձևերը:

Այստեղ կարևորը տրամադրությունն է. հորը՝ մռայլ, ինչպես ամպ, իսկ դստերը՝ պայծառ, ինչպես լիալուսին:

Հեզելը պատկերավոր մտածողության հիմնական առանձնահատկությունը համարում է վերացական էությունը կոնկրետ կերպով, իրապես արտահայտելը: «Մենք կարող ենք բանաստեղծական մտապատկերը նշանակել իբրև պատկերավոր, քանի որ այն մեր հայացքի առջև վերացական էության փոխարեն դնում է կոնկրետ իրականությունը», - գրում է նա իր «Էսթետիկա» -ում: Սակայն ճշմարիտ իրականության արտահայտումը չի կատարվում տառացիորեն, այսինքն՝ իրականությունը և նրա գեղարվեստական պատկերը չեն կարող բացարձակ նույնական լինել: Այդ դեպքում պատկերն արդեն դադարում է գեղարվեստական լինելուց, իսկ իրականության արտահայտման տվյալ ձևն էլ՝ արվեստ լինելուց: Այդ բանը շատ վառ կարելի է ցուցադրել լուսանկարչության օրինակով: Լուսանկարը, չնայած ամենայն մանրամասնությամբ կարող է արտահայտել պատկերվող օբյեկտը, դեռևս գեղարվեստական պատկեր, արվեստի գործ չէ: Քանի որ նրանում բացակայում է հեղինակի եսը, նրա անձնական ընկալումը: Բայց եթե լուսանկարչության միջոցներով ևս իրականությունն արտահայտվում է հեղինակի անձնական ընկալման տեսանկյունից, երբ պատկերն իրականության սոսկ արտացոլումը լինելուց բացի նաև տրամադրություն է արտահայտում, այդ ժամանակ միայն լուսանկարչությունը ևս արվեստին մոտենալու հավակնություն է ցուցաբերում: Սա նշանակում է, որ գեղարվեստական պատկերի համար կարևորը ոչ այնքան պատկերվող օբյեկտի արտահայտման ճշգրտությունն է, որքան հեղինակի ստեղծագործական խառնվածքի և իրականության ընկալման ու վերարտադրման նրա անձնական մեթոդի բացահայտումը տվյալ կերպարի, պատկերի միջոցով: Սրանով պետք է բացատրել, որ արվեստի զանազան ճյուղերում /գեղանկարչություն, քանդակագործություն/, չնայած պատկերվող օբյեկտի արտաքին, ֆիզիկական ձևախախտումներին, պատկերը դիտողի վրա ոչ միայն ամբողջականի և իրականի տպավորություն է թողնում, այլև նրա մտքին ու հոգուն առավել շատ բան է ասում, քան բացարձակ նույնականության դեպքում: Իրականության գեղարվեստական պատկերը երբեմն ավելի գնահատելի է լինում, քան ինքը՝ տվյալ օբյեկտը: Օրինակ, ասենք, Մ. Սարյանի դաշտային ծաղիկներ պատկերող մի կտավ կարող է հազարներ արժենալ, այն դեպքում, երբ իրական ծաղիկների գինը կարող է լինել մի քանի դրամ: Դրա պատճառն այն է, որ, եթե պատկերավոր արտահայտվելու լինենք, Մ. Սարյանի պատկերած յուրաքանչյուր

ծաղկի կամ կավե կճուճի մեջ ինչ-որ չափով ինքը՝ հեղինակը կա: Ի միջի այլոց, այս միտքը հաստատում է ինքը՝ Մ. Սարյանը. «Ստեղծագործելը ինքնամոռացում է, -ասում է նա: -Մեկ էլ տեսար, մի բան ստացվեց: Տեսնում ես, որ քեզանից մի կտոր քեզ է նայում: Եվ մի տեսակ երջանիկ ես դառնում /ընդգծումն իմն է՝ Ֆ. Խ./»<sup>17</sup>: Ահա թե որքան կարևոր է հեղինակի ստեղծագործական ընկալման և դրա արտահայտման հարցը գեղարվեստական պատկերի ստեղծման գործում:

Այս պատճառով պատկերը հաճախ բնորոշում են իբրև «կոնկրետ, զգայական մտապատկերի արտացոլում, որի հիմքը մեզ շրջապատող իրական աշխարհն է՝ բեկված հեղինակի ստեղծագործական գիտակցության միջոցով»<sup>18</sup>:

Գեղարվեստական պատկերի էական հատկանիշներից մեկը համարելով հեղինակի անհատական ստեղծագործական ընկալումը՝ չպետք է, սակայն, մոռանալ նաև պատկերի և իրականության կապը: Պատկերը գեղարվեստական է, կամ այլ կերպ ասած՝ այն դեռ գոյություն ունի, քանի դեռ գոյություն ունի կապ նրա և իրականության միջև: Գիշտ է, արվեստի մեջ իրականության արտահայտման միջոցով պատկերվող օբյեկտի ընկալումը երբեմն թողնվում է դիտողի երևակայությանը, բայց բացարձակ վերացարկունը կարող է խզել իրականության և նրա արտահայտության միջև եղած կապը, հետևաբար վերջինս կարող է դադարել առաջինի արտահայտությունը լինելուց, վերածվել հակապատկերի (антиобраз):

Որոշ վերապահումով կարելի է ասել, թե պատկերավորությունն ու պատկերներն առհասարակ համեմատության գործընթացի արդյունք են: Համեմատությունը միշտ հենվում է ինչ-որ հատկանիշով առարկաների, երևույթների, գործողությունների ու հասկացությունների նմանության վրա: Ուստի և գեղարվեստական պատկերը կարող է իրականության որևէ կողմի կամ տարրի արտահայտությունը, գեղարվեստական նշանը լինել, եթե նրանց միջև կա նմանության, համեմատության հիմք: Այդպիսի հիմքից զուրկ արտառոց պատկերները ոչ միայն գեղարվեստական չեն, այլև դադարում են իրականության արտահայտություն լինելուց: Օրինակ, ասենք, պատկերավոր մտածողությամբ ուղտը համարվում է «անապատային նավ», և այս նմանողությունը հիմք ունի, քանի որ այն արդյունք է անապատ-ծով գուգորդության: Անապատում, ավազների մեջ ուղտը գնում է հանդարտ, համաչափ, «լողում է», ինչպես նավը ծովում: Բայց փորձենք նույն ուղտը համեմատել ինքնաթիռի կամ հրթիռի հետ, և պատկերը կջքանա, քանի որ

այդպիսի խոսքային «պատկերը» ոչ միայն չի համապատասխանում, այլև հակասում է իրականությանը և նրա արտահայտությունը լինելու հավակնությունն ունեցող խոսքահատվածի էությանը: Ինքնին հասկանալի է, որ «նմանություն» ասելով՝ նկատի չեն առնվում իրականության արտաքին ձևերը, այլ նրա էությունը, բնույթը և հավանաբար ավելի հաճախ՝ առաջացրած վերաբերմունքը և տրամադրությունը: Առավել անսպասելի, միաժամանակ ուշագրավ և գեղագիտորեն արժեքավոր են վերջին գործոնների վրա հիմնված պատկերները:

Խոսելով այս խնդրի մասին՝ Ի.Վ. Առնոլդն իրավացիորեն նկատում է. «Որպեսզի պատկերն ընթերցողին որոշակի տեղեկություն տա, ընկալման պրոցես պետք է ներմուծվի ընթերցողի գեղագիտական և հասարակական բավարար փորձը»<sup>19</sup>: Եվ դա ոչ միայն նրա համար, որ «գեղագիտական և հասարակական փորձով» տարբերվող մարդկանց վրա միևնույն պատկերը կարող է տարբեր տպավորություն թողնել և տարբեր կերպ ընկալվել, այլև այն պատճառով, որ ամեն մի ժամանակաշրջան ունի պատկերների իր համակարգի առանձնահատուկ շրջանակները: Հասկանալու համար պետք է պատկերները դիտել այդ շրջանակներում: Պատկերների համակարգերի տարժամանակայնության և համաժամանակայնության սկզբունքների խախտումը ստեղծագործողին կխանգարի պատկերաստեղծման, իսկ ընթերցողին՝ ընկալման գործում:

Ահա, օրինակ, այդ տեսակետից ուշագրավ, աշխարհում ամենահին բանաստեղծական խոսքի մի նմուշ.

«Ահաւաղիկ կաս գեղեցիկ, մերձավոր իմ, ահաւաղիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք, վարսք քո իբրև գերամակս այծից, որք երևեցան ի լեռնէն Գաղաադու: Ատամունք քո իբրև գերամակս կտրելոց, որք ելանեն ի լուալեաց: Իբրև զթել որդան են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք, իբրև զկեղև նռան են այտք քո, իբրև զաշտարակն Դաւթի պարանոց քո: Երկու ստինք քո իբրև գերկուս ուլս երկուորիս այծեման, որք արածին ի մէջ շուշանաց: Ամենկին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ» /«Երգ երգոց»/:

Մեզնից հազարավոր տարիներ առաջ ապրած բանաստեղծի առաջին հայացքից արտառոց թվացող այս պատկերները, որոնց հիմքում ընկած են աչք-աղավնի, վարսեր-այծերի երամակ, սպիտակ ատամնաշար-վազված նորախուզ ոչխարների հոտ, շուրթ-որդան կարմիր թել, այտ-նռան կեղև, սլազիկ պարանոց-աշտարակ, հուզաթրթիռ ստինք-շուշանների մեջ արածող ուլ

զուգորդությունները, անմիջապես հասկանալի կդառնան և կարծեքավորվեն, եթե դիտենք հեղինակի ժամանակի և խաշնարածական առօրյա կյանքի շրջանակներում: Դարաշրջանով է պայմանավորված այդ պատկերների ակնհայտ պրիմիտիվությունը, որ սակայն լիուլի փոխհատուցվում է ուժեղ հուզականությամբ:

Միջնադարյան բանաստեղծությունն էլ ուներ իր բնորոշ պատկերային տարրերը՝ արև, լուսին, վարդ, սոխակ և այլն: Հիշենք նաև բանահյուսության և ժողովրդական ստեղծագործության պատկերատարներից՝ եղնիկ, մարայ, օելրան, սիրտ, ծով, ծաղիկ, սուսան-սմբուլ և այլն: Եվ վերջապես, դարաշրջանի և պատկերային համակարգի սերտ կապի մասին են խոսում 20-ական թվականների մեր բանաստեղծությունը և նրա տարրերը՝ զանազան ռադիոպոեմները, պոեզոգլոման /Չարենց/, հողմը, մրրիկը, ամբոխը, այսօրվա տիեզերքը, հրթիռն ու տիեզերանավը և այլն:

Մինչ այժմ մեր ասածը ի մի բերենք պատկերի հետևյալ /անշուշտ՝ ո՛չ լիակատար/ սահմանումով. գեղարվեստական խոսքային պատկերը խոսքի միավոր է, որ լեզվական միջոցներով զգայապես վերարտադրում է կոնկրետ իրականությունը հեղինակի /խոսողի/ ստեղծագորական ընկալման հիման վրա:

Խոսքային պատկերների ժամանակակից սահմանումները նրանց որևէ սահմանափակում չեն պարունակում, չնայած պատկերավորությունն ամենից հաճախ կապվում է բառերի փոխաբերական գործածության հետ: Այդ սխալը թերևս կարելի է բացատրել գեղարվեստական պատկերի ստեղծման գործում բառի առանձնահատուկ դերով: Բառը պատկերի արտահայտման ոչ միայն ձևն է, նրա կրողը, այլև բաղադրիչ տարրը: «Բառը, գեղարվեստական պատկերի ստեղծման միջոց դառնալով, երևան է հանում իր ոճական ունակությունը՝ պատկերավորությունը... Չկա պատկերավորություն լեզվից դուրս, կենդանի բառից դուրս, ինչպես որ չկան գաղափարներ, որոնք գոյություն ունենային լեզվից կտրված»<sup>20</sup>: Սակայն չի կարելի նույնացնել բառը և պատկերը, վերջինս տեսնել միայն բառի շրջանակներում: Պ.Գ. Պուստովոյտը, շարունակելով վերևում մեջբերված միտքը, գրում է. «Միևնույն բառը, բաղկացած լինելով հնչյունական մեկ կոմպլեքսից, տարբեր մարդկանց գիտակցության մեջ ծնում է բացարձակապես տարբեր, մեկը մյուսից խիստ հեռու պատկերներ: Ուրեմն բառն իր մեջ թաքցնում է պատկերների մի ամբողջական կոմպլեքս, և հետևաբար «բառը ինքը պատկեր է» բնորոշումը մեզ բավարարել չի կարող»<sup>21</sup>:

Բառերից բացի, պատկերավորության կարելի է հասնել նաև քերականական, նամանավանդ շարահյուսական միջոցներով: Արտահայտչական–պատկերավորման հսկայական հնարավորություններ ունեն անվանական նախադասությունները և բառ-նախադասությունները: Պատկերի կերտման գործում պակաս կարևոր չեն նաև ռիթմը, հնչերանգը, շարադասությունը և այլն: Այս միտքը հաստատում են ուրիշ լեզվաբաններ ևս: Վ.Ա.Ջարեցկին, օրինակ, գեղարվեստական խոսքային պատկերների ուսումնասիրությանը նվիրված իր աշխատությունում նշում է, որ բառապատկերային ինֆորմացիան միայն բառարանային իմաստների փոխազդեցության արդյունք չէ, և նրա ստեղծմանը հավասարապես մասնակցում են նաև նմանաձայնությունը, ռիթմո-մելոդիկան<sup>22</sup>:

Պատկերավորման միջոցների բազմազանությունը նշված է մի շարք լեզվաբանների ու գրականագետների աշխատություններում:

«Բոլոր /այդ/ ցուցադրումները պետք է ցույց տան, թե որքան բարդ և գործառնապես բազմատեսակ է գեղարվեստական խոսքի կամ բանաստեղծական լեզվի պատկերավորության հարցը, - գրում է ակադ. Վ. Վ. Վինոգրադովը: -Յամենայն դեպս, այն չի հանգում բառերի և արտահայտությունների փոխաբերական գործածության խնդրին, դարձույթների, փոխաբերությունների և համեմատությունների խնդրին»<sup>23</sup>: Այս հարցի առթիվ նա առաջնությունը տալիս է երկրորդ տեսությանը, որը պատկերավորությունը տեսնում է ոչ այնքան պատկերավոր դարձվածքների և արտահայտությունների մեջ, «...որքան գեղարվեստական խոսքի, որպես երևակայացված կամ գեղարվեստորեն արտացոլված աշխարհի մարմնավորման առանձնահատուկ համակարգի, ներքին էության և նրա գեղագիտական կառուցվածքի գործառնական յուրահատկության մեջ»<sup>24</sup>: Նրա կարծիքով «խոսքային պատկերը լինում է տարբեր կառուցվածքի: Այն կարող է բաղկացած լինել բառից, պարբերությունից, գրական ստեղծագործության գլխից և նույնիսկ ամբողջական գրական երկից: Բայց այն միշտ հանդիսանում է գրական երկի ոճի գեղագիտորեն կազմակերպված կառուցվածքային տարր: Դրանով են որոշվում և՛ նրա լեզվական կառուցման ձևերը, և՛ կոմպոզիցիոն զարգացման սկզբունքները: Ահա թե ինչու պատկերները կարող են կապակցվել հաջորդաբար ծավալվող շղթայի մեջ, կարող են գրական ստեղծագործության ոճական համակարգում միմյանց հարաբերակցվել տեքստի մեծ հատվածների հեռավորությունից, բայց կարող են ներառնել մեկը մյուսին՝ վերածվելով

բարդ, բազմապլան միասնական պատկերի: Դրանում է լեզվական պատկերների յուրահատկությունը»<sup>25</sup>:

Մտաւորապես նման մոտեցում է ցուցաբերում նաև Վ. Ա. Զարեցկին: Նա տարբերում է սկզբնական և ածանցյալ պատկերներ: Առաջինը խոսքի հատված է՝ բառ կամ բառակապակցություն, որ բաղադրիչ տարրերի բուն իմաստներից տարբեր պատկերավոր ինֆորմացիա է պարունակում, իսկ երկրորդ տիպի պատկերը սովորական իմաստով խոսքի մի հատված չէ, այլ բազմաթիվ սկզբնական պատկերներից ծնվող բարդ ամբողջություն<sup>26</sup>:

Այս տեսակետները հիմք ընդունելով՝ կարելի է հեշտությամբ կողմնորոշվել այնպիսի խնդիրներում, ինչպես պատկերը և բառը, պատկերավորությունը և փոխաբերական գործածությունը: Այդ հարցում մեզ շատ կարող է օգնել նաև Ա.Ս.Պեշկովսկու «ընդհանուր պատկերավորության» տեսությունը, որի համաձայն՝ խոսքային առանձին միավորների՝ բառերի, արտահայտությունների պատկերավորությունից բացի կա նաև ամբողջի, ընդհանուրի պատկերավորություն, որը կապվում է բանաստեղծական տողի, գեղարվեստական արձակ խոսքի հատվածի, քնարական շեղման, մենախոսության, երկխոսության հետ: Խոսքաչարի ընդհանուր պատկերավորությունն իր կնիքն է դնում նրանում եղած յուրաքանչյուր բառի կամ արտահայտության վրա, որի շնորհիվ ամեն մի բառ, ընկնելով նման խոսքաչարի մեջ, կարող է դառնալ պատկերավոր անկախ գործածության կերպից:

Ահա, օրինակ, «Կարդանանք» պատմավեպի այս հատվածը, ուր Դ. Դեմիրճյանը պատկերում է ճակատամարտին նախորդող երեկոն Ավարայրի դաշտում:

«Երեկոն թանձրանում էր Ավարայրի դաշտավայրում, և սովերները սողոսկում էին Արտազ լեռների ծործորներից դեպի հարթության երեսը, ուր լայնազանգված եկել ու ծանրունեծ չորքել էր պարսից զորաբանակը», -այսպես է սկսվում նկարագրությունը: Կարծեք չկա պատկերավորության ձգտում, չկան բազմաթիվ մակդիրներ ու համեմատություններ, սովորական բառեր են՝ գրեթե ուղղակի գործածությամբ: Սակայն այդ սովորական, «անշուք» բառերի համադրումից ստացվել է իրականությունն անկրկնելի կերպով վերարտադրող մի գեղարվեստական պատկեր: Պատկերի գոյությունն այստեղ պայմանավորված է ոչ թե բառերի «գեղանկարչական» հատկություններով, այլ արտահայտության ընդհանուր ոգով, տոնով, տրամադրությամբ: Նույն նկարագրության շարունակությունը. «Ձանգվածներով ամփոփված դակիշների ու վրանախմբերի մեջ պարսից զորքը գունդ առ գունդ ափերից ելած

գարնան ջրի պես սկսեց թափվել իրար մեջ, իրար հետև և առաջանալ դեպի ճակատի գիծը, Տղմուտ գետի եզերքը: Գետի այսափնյա եզերքին տարածվեց հայկական զորաբանակը և նա էլ սկսեց տեղաշարժվել, դասավորվել մեջմեջ, իրար կողքի, իրար ետև... Հայերի ձախ թևի դիմաց թանձրանում էր զորքերի մի ուժեղ համագունդ՝ բազմաթիվ դրոշների խմբավածությամբ: Դրանից դեպի աջ սկսեց շարվել միջոցը /կենտրոնը/, որից դեպի արևմուտք որոշ ընդհատումներով շարքավորվում էր պարսիկների ձախ թևը: Աջի և միջոցի հետևը համագունդ, առանձնակի կանգնեց պարսից «մատյան գունդը»: Իսկ ավելի հեռուն, դրա հետև ամրոցային քաղաքի նման կառուցվեց փղերի ռազմաջուկը»: Այսպիսի բարդ պատկերների այլ օրինակներ էլի կարելի է բերել թե՛ Դ.Դեմիրճյանի նույն վեպից /Անգղի, Ավարայրի ճակատամարտերը, հայկական այրուձիի երթը, Արտաշատի ժողովը, Ողական, Ռշտունյաց և Խորխոռունյաց ամրոցների, Վանա լճում ծովային զբոսանքի տեսարանները/, թե՛ այլ հեղինակներից:

Գեղարվեստական բարդ պատկերների հիմքում, սակայն, սկզբնական /կամ նախնական, պարզ/ պատկերներն են, որոնք էլ ամենից շատ նկարագրվում են, բնորոշվում ու դասակարգվում պատկերավորության միջոցների մասին խոսող լեզվաբանների ու գրականագետների կողմից: Այդ խոսքային պատկերներն առաջանում են երեք ընդհանուր եղանակով, երեք ընդհանուր հնարների հիման վրա: Դրանք են՝ ա/ լեզվական միջոցների կրկնություն, բ/ փոխաբերություն, գ/ քերականական շեղումներ: Միևնույն պատկերավորման հնարը կարող է ծնել բազմաթիվ խոսքային պատկերներ: Օրինակ՝ կրկնության միջոցով են գոյանում տասնյակի հասնող պատկերամիջոցներ /նույնասկիզբ, կրկնավերջույթ, կցուրդ, զուգապատկություն, բազմաշաղկապություն, աստիճանավորում և այլն/, նայած թե լեզվական ինչ տարր է կրկնվում /հնչյուն, բա՞ռ, բառակապակցություն/ և ինչ կերպ:

### Ծանոթագրություններ

1. А.И.Чижик – Полейко, *Стилистика русского языка*, ч. I, стр.40. Նման կարծիք է հայտնել նաև Վ. Վ. Վինոգրադովն իր «Стилистика. Теория поэтической речи. Поэтика» գրքում:
2. Նույն տեղում, էջ 65:
3. Նույն տեղում, էջ 63:



4. Экспрессия տերմինը ռուսագիտության մեջ ընդունվում է իբրև համանիշ արտահայտչություն (выразительность) տերմինին:

5. О. Ахманова, Словарь лингвистических терминов, стр. 526.

6. И.Р.Гальперин, Очерки по стилистике английского языка. М.,1958, стр. 43.

7. О. Ахманова, նշվ. աշխ., էջ 275:

8. П. Г. Пустовойт, Слово, стиль, образ. М., 1965, стр. 137.

9. А.И.Чижик – Полейко, նշվ. աշխ., էջ 40:

10. Л. В. Ковтун, О значении слова. "Вопросы языкознания", 1955, N 5, стр. 68.

11. Աշոտ Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000:

12. Ֆ.Հ.Խլիլայան, Ոճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 145:

13. Գ.Բ.Ջահուկյան, Ֆ.Հ.Խլիլայան, Հայոց լեզու, դասագիրք 9-րդ դասարանի համար, Երևան, 1998, էջ 38:

14. Г. О. Винокур, Культура языка. М., 1925, стр. 169.

15. Р.А.Будагов, К вопросу о языковых стилях. "Вопросы языкознания", 1954, N 3.

16. Ըստ Վ.Վ.Վինոգրադովի նշվ. աշխ., էջ 125:

17. «Գրական թերթ», 1970, N 9:

18. А.Федоров, Язык и стиль художественного произведения. М., 1963, стр. 12.

19. И.В.Арнольд, Стилистика современного английского языка. Л.,1973, стр. 141.

20. П. Г. Пустовойт , նշվ. աշխ., էջք 114, 119:

21. Նույն տեղում, էջ 122:

22. В.А.Зарецкий, Семантика и структура словесного художественного образа. Автореферат канд. дисс., Тарту, 1966.

23. В. Виноградов, նշվ. աշխ., էջ 123:

24. Նույն տեղում, էջ 155:

25. Նույն տեղում, էջ 119 -120:

26. В.А.Зарецкий, նշվ. աշխ.:



«ՄԱՐԳԱՐԷ» ԲԱՌԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1914թ. Անտուան Մեյեն Ջալենմանին ուղղված մի նամակում նշում է, որ իրեն հետաքրքրեց առանձնապես «մարգարե» բառի Ջալենմանի ստուգաբանությունը<sup>1</sup>: Ասենք, որ սրան նախորդել էր Նիկողայոս Մառի ստուգաբանությունը<sup>2</sup>, որը բոլորովին չէր գոհացրել Մեյեին: Ըստ Մառի՝ *մարգարե*-ն նախապես նշանակել է «աստղաբաշխ, աստղագետ» և ծագում է հայերեն *մարգ*՝ վաղնջական «աստղ» նշանակությունից, որ հաբեթական *մրգ*՝ *փայլ* արմատի ամենահարազատ պահպանված ձևն է. ցեղակիցներն են արաբ. *barq*՝ *փայլել*, վրաց. *բրկիալի*՝ *փայլուն*, հայերեն՝ *պերծ*, *պայծառ* ձևերը: Մերժելով այս ստուգաբանությունը՝ Ջալենմանը առաջադրում է *մարգարե*-ի սողդերեն ծագման տեսակետը՝ *markray*, *markarak*՝ «կախարդ, գուշակ, վիուկ» նախնական նշանակություններով: Մինչ այս կարծիքները բառի ստուգաբանությանը նախապես անդրադարձել են «Նոր հայկագեան բառարանի» հեղինակները՝ այն կապելով *մրգ* բառի հետ: Չետագայում այս բառի ստուգաբանությունը հետաքրքրել է գրեթե բոլոր նշանավոր հայագետներին, որոնք հիմնականում հարում են վերոնշյալ կարծիքներից որևէ մեկին: Քիչ տարբերվող ստուգաբանություն են տալիս Լագարդը, որը *մարգարե*-ն բխեցնում է երբայերենի *ogr*՝ *հոսիլ*, *հեղուլ* արմատից, իսկ Յունքերյանը և Ալիշանը այն կապում են լատիներեն *Mercurius* - Չերմես անվան հետ:

*Մրգ*, *մարգարե* տարբերակը հետագայում ընդունում է Պեդերսենը, պահլավական *margar* և սողդերեն *markray*, *markarak*՝ *մարգարե* տարբերակը՝ Մեյեն, Աճառյանը, Ջահուկյանը, *մարգ* /աստղ/- *մարգարե* տարբերակը՝ Պատրուբանին և Ղափանցյանը, մի տարբերությամբ՝ Պատրուբանին այն բխեցնում է սանսկրիտի *marg*՝ կանխատեսել արմատից + հայ. *ար/արար/* + *է* հունական վերջավորությունը:

Այսինքն՝ մենք գործ ունենք էականորեն իրարից տարբերվող երեք տարբերակի հետ:

Անտուան Մեյեն, խորապես համոզված լինելով, որ *մարգարե*-ն իրանական փոխառություն է, բավականին խիստ քննադա-

<sup>1</sup> St'e Saleman. Известия Академии Наук, 1913, p. 1129-1130:

<sup>2</sup> St'e'u նույն տեղում, 1909, էջ 1057:

տության է ենթարկում Մառի տեսակետը՝ դուրս գալով ներլեզվական խնդրի զնահատականի շրջանակներից: Մեյեի խորհրդածություններն ի վերջո վեր են ածվում անվանի հայագետի անձի բուռն քննադատության: «Ես ձեզ պետք է ասեմ,- գրում է Մեյեն Ջալենանին,- որ ես երբեք ոչ մի արժեք չեմ տվել այս բառի ստուգաբանության վերաբերյալ Մառի արտահայտած վարկածներին: Շատ ցավալի է, որ այնքան լեզուներ իմացող մարդն այդքան քիչ է ըմբռնել լեզվաբանական մեթոդները և այդքան զուրկ լինելով լեզվաբանական ըմբռնողությունից՝ համառում է լեզվաբանությամբ զբաղվել, փոխանակ բնագրեր հրատարակելու և գրականագիտական ու պատմագիտական ուսումնասիրություններով զբաղվելու»<sup>3</sup>:

Եվ այնուամենայնիվ, Մեյեն, ընդունելով հանդերձ այս բառի իրանական ծագումը, ստիպված է լինում խոստովանել, որ այս բառի ստուգաբանության պարագայում ի հայտ են գալիս երեք անկանոնություններ, որոնք բացահայտորեն շեղվում են փոխառության ներքին օրենքներից: Նա գրում է. «1) Խոշոր անկանոնություն է, որ *Օ*-ն տա հայերեն *ր* և ոչ թե *րկ* կամ *կ*: 2) Եզակի երևույթ է, որ *գ*-ն, երբ *ւ*-ից հետո հանդես չի գալիս, համապատասխանի իրանական *k*-ին: 3) Անսպասելի է նաև բառավերջի *է*-ն»<sup>4</sup>: Այսպիսով, եթե *մարգարէ*-ն ստույգ ունենար իրանական ծագում, ապա փոխառյալ տարբերակում սպասելի էր, որ նրա հնագույն տարբերակը, այսինքն՝ զենդերեն *ma0ra-kara* ձևի *Օ*-ն հայերենում տար *-րկ-* կամ *-կ-* և ոչ թե *-ր-*, այսինքն եթե *մար-գարէ*-ի *-գարէ*-ն *kara*-ն է, որ նշանակում է «գործող, կերտող», ապա *ma0ra*-ին համապատասխանում է *մար*-ը, որտեղ *Օ*-ն տվել է *-ր*:

Երկրորդ պարագայում քիչ հավանական է, որ երբ *գ*-ն *ւ*-ից հետո հանդես չի գալիս, համապատասխանի իրանական (այս դեպքում նկատի է առնվում սողդերեն փոխառության տարբերակը. *markray-մարգարէ*):

Ինչպես տեսանք, անսպասելի էր նաև իրանականին փոխառության մեջ բառավերջի *է*-ն: Այսքանից հետո Մեյեն եզրակացնում է. «Մեկը մյուսից զարմանալի այս երեք առանձնահատկություններն ինձ կարծել են տալիս, թե *մարգարէ*-ն իրանականից անմիջականորեն կատարված փոխառություն չէ: Հավանաբար եղել է միջնորդ: Սակայն ես ինձ հարց եմ տալիս,- շարունակում է Մեյեն,-

<sup>3</sup> Տե՛ս Անտուան Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 182:

<sup>4</sup> Նույն տեղում:

թե դա ո՞րն է»<sup>5</sup>: Հարցը անվանի հայագետի համար այդպես էլ մնում է առկա, չնայած նրա բնութագրումները խոսում են ի վնաս իրանական փոխառության տարբերակի: Եվ իսկապես, Մեյեն երկբայելու պատճառ ուներ, քանի որ կան այլ տվյալներ *մարգարտ* բառի վերաբերյալ, որոնք թերևս կօգնեն ճշտելու այդ բառի անցած պատմական ուղին, գուցե և առաջադրելու բառի ծագման այլ տարբերակ:

Խոսքը դարձյալ Գրիգոր Տաթևացու մասին է, որն իր «Մեկնութիւն Մատթէի» և «Գիրք հարցմանց» աշխատություններում քանիցս անդրադառնում է *մարգարտ* բառին: Այստեղ հարկ է նշել, որ Տաթևացին այն բացառիկ հեղինակներից է, որ ընդգծված նախանձախնդրություն է հանդես բերել բառերի հայացի գործածության նկատմամբ, փաստ, որը թույլ է տվել, որ Հրաչյա Աճառյանը Տաթևացու գրչության օրինակներով բազմիցս ստուգի այս կամ այն բառի ճիշտ գործածությունը: Այսպես, Աճառյանը Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց գրքի» նոր բառերը քննելիս հավուր պատշաճի դիմում է Տաթևացուն և պարզում, որ հայերեն բնագրային օրինակում սխալ բառագործածություններ կան. «օժանդ», փոխանակ՝ «օժանդակ», «տռփոռ», փոխանակ՝ «տռփողաց»: Խոսելով «բլաթկին» («մահակ») բառի մասին՝ Աճառյանը այն համեմատում է պարսկերեն ձևի հետ և պարզում, որ «ըստ այս լաւագոյն գրչութիւնն է Տաթևացւոյն *բալաթիկին* ձևը»<sup>6</sup>:

Այսպիսով, գանք *մարգարտ* բառի Տաթևացու մեկնությանը: Նա, վկայակոչելով նախնի վարդապետներին, սակայն անունները չտալով, տարբերակում է մարգարտության հինգ տեսակ. 1) բնական, 2) արուեստական, 3) դիւական, 4) գռեհիկ, 5) ճիշտ մարգարտութիւն: Նա գրում է. «Առաջին՝ ի բնական, որպէս երեոց, անասնոց, թռչնոց և մրջմանց...: Երկրորդ, արուեստական, որպէս բժիշկք և նաւավարք զխռովութիւն ալեաց և զանդորրութիւն: Երրորդ՝ դիւական, որպէս կռոց սուտ մարգարեքն Սեղեկիայն և այլոց բազմաց, որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց, նաև հավակոչիք և զարեղիւքք, որք են բնաւ սուտք և ոչինչք: Չորրորդ, գռեհիկ, զոր սովորութեամբ լուեալ ասեն՝ ձմեռն գայ և զկնի այնորիկ գարուն, ամառն և աշուն: Եւ ի կարմրանալ երկնից ընդ

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մեջ, Կ. Ք. Վենետիկ, 1922, էջ 139:

երեկս և ընդ առաւօտս, զերաշտոց և զանձրևոց ի փորձոյ ուսեալք յառաջագուշակ լինին»<sup>7</sup>:

Բնականը, փաստորեն, համապատասխանում է բնագղին, որովհետև, ինչպես Տաթևացին է նշում, կենդանիներն ավելի կանխագետ են (իր բառն է-Ս. Գ.) բնության հարցերում, քան մարդը:

Երկրորդը՝ արուեստականը, վերաբերում է դիտարկումներով, վարժանքով ձեռքբերովի փորձին, որը թույլ է տալիս կանխատեսելու որևէ բան: Երրորդը՝ դիւականը, կեղծ կանխատեսումն է, որով զբաղվում են դիւքքերը, կախարդները, հաւակոյիչքը, գարեդիւքքը և այլն: Ընդ որում, աստղագուշակները, ըստ Տաթևացու, սկսում են արուեստականով (ձեռքբերովի փորձով, գիտելիքներով) և վերջում հանգում են դիւթականին: Չորրորդը՝ գռեհիկը, երկու երևույթների կապի դիտարկումն է, որ թույլ է տալիս, օրինակ, որ երկինքը կարմրելիս ասվի, թե առավոտյան կամ երեկոյան կանձրևի՞, թե չոր կլինի: Եվ վերջապես հինգերորդը ճիշտ մարգարութիւնն է, որ ինչպես հեղինակն է ասում, «է կանխագիտութիւն ամանակաց, անցելոց, ներկայից և ապագայից»<sup>8</sup>:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ *մարգարէ* բառի վերոնշյալ բացատրության հիմնաբառերը հետագայում տեղ են գտել այս կամ այն հայագետի ստուգաբանության մեջ. «գուշակ, կախարդ» իմաստները՝ Չալենմանի, Մեյեի, Աճառյանի, Ջահուկյա նի, «աստղագուշակ» -ը՝ Մառի, իսկ «կանխագետ, կանխատեսել»-ը՝ Պատրուբանիի:

Դժվար չէ նկատել, որ այս բոլոր բացատրությունների մեջ ընդհանուր է «*կանխատեսել-կանխագալ*»-ը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապվում է աստղերի հետ: Այսինքն՝ կա աստղերի որոշակի ազդեցությունը երկրի վրա: Տաթևացու առաջին չորս բացատրություններն ի վերջո կապվում են դրա հետ: Վերոնշյալ հայագետների ստուգաբանություններից այս իմաստով Տաթևացուն ամենամոտ կանգնածը Պատրուբանինն է, իսկ քիչ ավելի միջնորդավորված՝ Նիկողայոս Մառինը:

Աճառյանը գրում է. «Մեր մարգարէն էլ, որ զրադաշտական կրօնից փոխառեալ բառ է, նշանակում էր նախապես այն արևելեան կարդացողները, որոնք Ս. Գրքերից զանազան աղօթքներ կարդալով հիվանդների վրայ, բժշկում էին նրանց և կամ այդ գրվուածքներից գուշակութիւններ էին անում: Քրիստոնէութիւն հաստատութեամբ բառը նոր գաղափարների դրոշմն ստացաւ և

<sup>7</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 536:

<sup>8</sup> Տե՛ս նույնը, նաև՝ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 1264, էջ 100բ:

նոր իմաստով սրբագործուեցաւ, այնպէս՝ ինչպէս *պատարագ* բառը հասարակ և աշխարհիկ «նուէր» նշանակութիւնից՝ անցաւ քրիստոնէական քավութեան պատարագի իմաստին»<sup>9</sup>: Մի փոքրիկ ճշտում մտցնենք. *մարգարէ*-ն սկզբնապէս եղել է այն մարդը, որը վարժանքով, հմտութիւններով գիտելիքներ է ձեռք բերել աստղերի մասին, իսկ հետո աստղերի վարքագծի և մարդկային ճակատագրերի կապի դիտարկումը մարգարեին կամ աստղագուշակի մասնագիտութիւնը վեր է ածել բախտագուշակի, մոգի և մոտեցրել ֆալճի մասնագիտութեանը:

Հետագա անցումը Աճառյանը հրաշալի է բացատրել, սակայն ոչ մի պահ չերկբայելով, որ *մարգարէ*-ն փոխառնալ բառ է: Մինչդեռ մեր կարծիքով, այնուամենայնիվ, փաստեր կան առաջ քաշելու *մարգարէ*-ի բնիկ հայերեն բառ լինելու վարկածը: 1) Մեյեի բերած երեք անկանոնութիւնները: 2) Աճառյանի իսկ վկայությամբ այդ բառի ավանդված չլինելը պահլավական գրականութեան մեջ, այսինքն՝ ենթադրվում է, որ սողդերենի markray-ն փոխ է առնված պահ. margar ձևից, իսկ այս վերջինը բարբառային վկայութիւն է և պահլավական գրականութեան մեջ չի հիշատակվում (զմդ. mašra-kara պահլ. margar- սողդ. markray, markarak): 3) Տաթևացու՝ ստվերում մնացած վկայութիւնը: 4) Հայերենից փոխառնված վրացերենի *մեմարգե* ձևը՝ *մե* և *մարգե* բաղադրյալներով, որտեղ *մե*-ն պաշտոն ցույց տվող մասնիկ է՝ նույն «աստղագուշակ, կախարդ» իմաստներով: 5) Կա նաև արտալեզվական փաստարկ. եթե ճիշտ է, որ երկնականարի նկարագրութիւնը, ըստ կենդանակերպի, պատկանում է հայերին, ապա չի բացառվում, որ *մարգ*՝ *աստղ* բառի շրջանառութիւնը նույնպէս սկսված լինի մեզանից:

Այսպիսով, բերված փաստերը, մեր կարծիքով, համալրում են այն շարքը, որը հայագետների մի մասին թույլ է տվել վերոնշյալ բառին հայկական ծագում վերագրել:



<sup>9</sup> Գր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 9, էջ 276-277:

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԴՐԱՅԻՆ ՆԱԽԱԲԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ  
(Ա. Մեյեի քննության լույսով)**

Հայերեն նախաբայ տերմինն ամենայն հավանականությամբ ծագել է ֆրանսերեն *préverbe*, գերմաներեն *Präverbium* բառերի պատճենումից (սրանք էլ իրենց հերթին ծագել են լատիներեն բաղադրիչներից՝ *prae* «նախա-, առաջ-» և *verbum*, «բայ»): Նախաբայ-ից բացի հայերենագիտության մեջ կիրառվել և կիրառվում են նաև այլ տերմիններ՝ նախաբայ ածանց, նախաբայ մասնիկ, նախաբայամասնիկ, բայակերտ նախածանց, բայական նախածանց:<sup>1</sup>

Հնդեվրոպական հին և նոր լեզուներում նախաբայերը մեծ տեղ են գրավում բայակազմության մեջ և կարող են քերականական ու բառակազմական նշանականություն ունենալ:

Հայերենի նախդիրներից առ-ը, զ-ն (խուլ բաղաձայնից առաջ դառնում է ս), ընդ-ը (վերջին հնչյունի անկումով՝ նաև ըն-, այս վերջինի հնչյունափոխությամբ էլ՝ երբեմն ըմ-), լ-ն (և նախդրի տարբերակը՝ միայն ծայնավորից առաջ), մասամբ էլ ըստ-ը (ը–ի անկումով՝ ստ-) նախաբայական կիրառություններ ունեն: Բացառություն է զ նախդիրը:

Անհրաժեշտ է նշել, որ նախդրային բաղադրիչ ունեցող գրաբարյան բայերը միատարր չեն: Մ. Աբեղյանը նշում է. «Այդպիսի բայերի մի մասը, սակայն, իսկական նախդրավոր բայեր չեն, այսինքն՝ նախաբայի և բայի հարադրությամբ չեն կազմված, այլ նախդիրները նախ դրված են անունների վրա, և ապա նոր կազմվել են բայեր այդ նախդիր ունեցող անուններից»<sup>2</sup>: Մեյեն ձևակերպում է այսպես. «Հայերենում քիչ չեն ածանցված բայերը, որոնց առաջին եզրը իրականում հաջորդող գոյականին վերաբերող մի նախդիր է՝»: Մատենագրական բազմաթիվ վկայություններ պարզորոշ ցուցադրում են վերոհիշյալ կարծիքների ճշմարտացիությունը: Այսպես, առ ոտն կոխեմ/հարկանեմ > առտոնեմ. հմմտ.

<sup>1</sup> Հմմտ. Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գայստյան, Թ. Ա. Ղարազուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 223: Ա. Հ. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993, էջ 405:

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Զ., Երևան, 1974, էջ 150:

<sup>3</sup> Անտուան Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 386:

Չի մի՛ առ ոտն կոխիցեն (Մատթ. է 6): Առ ոտն հարին զմե՛ծ քահանայութեան զաստուծոյ զպատին (Բուզ., էջ 3): Կամ ընդ աւագով առնեն >ընդաւագեն. հմմտ. Ծածկեաց զմա ընդ աւագով (Ելք, Բ 12), զուլամբ երթայ > զուլամբիմ. հմմտ. Չի Վաչէ երկրորդն Մանուէլի, ձին զուլամբ երթեայ, սպանանի (Բուզ., էջ 215) և այլն:

Մյուս խմբի՝ իսկական նախդրավոր բայերի (նախամասնիկի և բայի հարադրութեամբ կազմված) սկզբի նախդիրները բայերի խնդիրների նախդիրներն են, որոնք հետագայում դրվում են բայերի վրա, ինչպես ասեն առ... (Տէրն իսկ ասէր առ իւր սիրելիսն - Ազաթ., էջ 89) → առասեն, բերեն առ... (Զգլուխ Բակուր բղեշխին բերին առ արթայ - Բուզ., էջ 19) → առբերեն, կոչեն առ... (Հարկանօք կոչէ զՏիրան առ ինքն (Խոր., էջ 275) → առկոչեն, անկանեն առ ... (Փախստական անկանէր առ արթայն Քուշանաց (Եղ., էջ 141) → առանկանեն, խառնեն ընդ ... (Խառնեայ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի (Եզն., էջ 66) → ընդխառնեն, մտանեն ընդ ... (Ոչ կորացեալ մտանէր ընդ զետին (Փարպ., էջ 168) → ընդմտանեն, հարկանեն ընդ ... (Սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել (Բուզ., էջ 227) և այլն:

Ա. Մեյեն նկատում է, որ «իին նախաբայերը կիրառությունից դուրս են եկել հայերենի դեռևս պատմական շրջանից առաջ<sup>4</sup>»: Մ. Աբեղյանը ձևակերպում է այսպես. «Բայերի վրա դրվող նախդիրները կամ, ինչպես ասում են „նախաբայերը,“... հայերենում նախագրաբարյան շրջանում արդեն գործածությունից դուրս են եկել<sup>5</sup>»:

Ձ - մասնիկ ունեցող մի շարք բայերի միջոցով Մեյեն ցույց է տալիս՝ ա) առանց նախամասնիկի բայը գոյություն չունի (օրինակ՝ զգենում)<sup>6</sup> և բ) դրանք ածանցված կազմություններ են (օրինակ՝ զայրանամ)<sup>7</sup>:

Հայերենի բայական նախամասնիկների որոշակի աշխուժացում նկատվեց մասնաբան դպրոցի գործունեության շրջանում, երբ հունարենի մանողութեամբ ստեղծվեցին կամ պատճենվեցին բազմաթիվ բայեր: Այս դեպքում հայ թարգմանիչներն ու

<sup>4</sup> Ա. Մեյե, նշվ. տեղում, էջ 386:

<sup>5</sup> Մ. Աբեղյան, նշվ. տեղում, էջ 149:

<sup>6</sup> Հետաքրքրական է, որ զգենուլ, ինչպես նաև զգեստ բառերի աննախդիր ձևերը հանդիպում են հայերենի տարբեր բարբառներում, ինչպես՝ կենայ /Ղարաբաղ/, զեստ /Մուշ, Ալաշկերտ և այլն/. տես Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 88:

<sup>7</sup> Ա. Մեյե, նշվ. տեղում, էջ 387: Հմմտ. Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1990, էջ 106-120:



քերականները գործածեցին առավելաբար առ-ը, ինչպես՝ առքնաւորիմ, առընթանալ, առընկենուլ, առնշանակեմ, առզու-  
ցանեմ, առփործեմ, առփոխեմ, առվկայեմ, առտարորոշեմ և այլն:<sup>8</sup> Սակայն մի բան հստակ է. կարելի է ասել, որ այս գործառույթը գրեթե չկայունացավ, ընդհանրական բնույթ չստացավ, և ստեղծված բառերի մեծ մասը չմտավ գրաբարի ակտիվ բառապաշարի մեջ, իսկ մյուս մասը վկայվել է եզակի կիրառություններով: Այնպես որ միանգամայն ճիշտ է Մեյեի այն դիտարկումը, թե՛ «Ամենահին բնագրերից սկսած՝ նախաբայերը հայերենում գրեթե ոչ մի տեղ չեն գրավում: Սա չի գալիս անշուշտ այն բանից, որ հայերենը, ի տարբերություն մյուս լեզուների, երբևիցե չի զարգացրել նախաբայերի կիրառությունը, որովհետև հնում այս տարրերի՝ հայերենում ունեցած կարևորության բավականաչափ հետքեր գոյություն ունեն <sup>9</sup>»: Չարկավ, հայերենի նախդիր-նախածանցավոր բառերի մեջ բայերը գերակշռում են, սակայն բայակազմության մեջ նրանք չունեն այնպիսի հսկայական դեր, որպիսին նկատվում է, օրինակ, հին հունարենում, լատիներենում, գերմաներենում և ռուսերենում: Եթե հայերենում միևնույն բայից նախդիր-նախածանցներով կազմված ամենաբազմանդամ շարքը հետևյալն է՝ անցանեմ - ցանցանեմ - յանցանեմ - առանցանեմ - գառանցանեմ, և դա եզակի օրինակ է, ապա նշված լեզուներում պատկերը բոլորովին այլ է: Չմտ. gehen, abgehen, angehen, aufgehen, ausgehen, mitgehen, nachgehen, übergehen, untergehen, umgehen, vorgehen, ռուս. вписать, дописать, записать, написать, описать, подписать, приписать, списать և այլն:

Ուշագրավ է, որ նախդրավոր բայերի խնդրառության ժամանակ երբեմն հանդես է գալիս միևնույն նախդիրը: Այսպես՝ Առաքեաց առ ձեզ զայս զառաքեալսս (Ագաթ., էջ 255): Եւ Փասայէ... իւրովի ցարկեալ զգլուխ իւր ցքարի (Խոր., էջ 134): Չայր ձեր ընդհարաւ ընդ իս (Ծնն., ԼԱ 7): ընդ ծաղկացեալ ալիսն բազմութեան համատարած ծովուն ընդխառնեալք շահատակիցեմ (Ագաթ., էջ 5): Եթէ ընդելուզցես զշրթունս քո ընդ շրթունս իմ (Առակ., ԻԳ 16) և այլն:

Յուրաքանչյուր նախաբայ քննելիս Մեյեն նշում է նրա կիրառության հաճախականությունը. ամենահաճախականը համարում է զ -ն, իսկ ուտ-ով միայն մեկ օրինակ է բերում (ը)ստ -

<sup>8</sup> Չմտ. Գ.Գուրոջինյան, Առ նախդրի բառակազմական արժեքը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, ք.3, էջ 28-34:

<sup>9</sup> Ա. Մեյե, նշվ. տեղում, էջ 385-386:

գտանեն<sup>10</sup>: Իսկ ընդհանրապես ըստ–ի հարցում Մեյեի վերաբերմունքը թեական է<sup>11</sup>:

Մեր կարծիքով ըստ–ն իբրև նախաբայ հանդես է գալիս նաև հինգերորդ դարից ավանդված ըստերիւրեն//ստերիւրեն «խեղաթյուրել, մոլորեցնել, խտորեցնել» բառում. եթէ ոչ զբարւոյ զդէմն զգեցեալ մեղմեղիցէ, չկարէ ըստերիւրել յիրաւանց զիրաւագէտն (Եզն., էջ 62): Հետաքրքրական է, որ եթէ երիւրեն «հորինել, շինել» և լերիւրեն «հորինել, ուղղել, կոկել» աննախդիր և նախդրավոր բայերը գրեթէ նույնանիշ են, ապա երիւրեն և ըստերիւրեն բառերը գտնվում են հակառակադիր հարաբերության մեջ: Այս տեսանկյունից վերջիններս համեմատելի են ըստգտանեն//ստգտանեն բառի հետ (նշանակում է «մեկին հանցանքի՝ զանցանքի մեջ նկատել՝ գտնել», «մեղադրել, նախատել, պախարակել»), որ թույլ է տալիս կասկածելու՝ զուցե նմանակության օրենքն էլ է դեր խաղացել:

3 – մասնիկի համար Ա. Մեյեյն գրում է. «... նախաբայավոր ձևերն այնքան մթին են և այնքան դժվարվերլուծելի, որ հաճախ հնարավոր չէ որոշել նախաբայերի նշանակությունը տվյալ դեպքում<sup>12</sup>»: Օրինակ՝ *յածիմ, յանցանեն, յապարդեն, յաջողեն, յաչարդեն, յազենամ, յարզեն, յոյժ* և այլն: Բառաքնությունը ցույց է տալիս, որ հիշյալ բառերի մեծ մասի հիմքերը հնդեվրոպական արմատներ են, որոնք դեռևս զբաբար փուլում ձևույթի արժեքով չեն գիտակցվել (հմտտ. *առաստաղ, ընթեռնուլ* և այլն): Այս բառերը կազմվել են նախդրային նախամասնիկի զուտ բառակերտիչ արժեքի հիման վրա: Եիշտ է, նախդրային իմաստները մթագնել են, բայց դրանք հնարավոր է վերականգնել:

Վստահ ենք, որ ֆրանսիացի մեծ հայագետի գիտական կասկածն անգամ պիտի նպաստի հայերենագիտության անդաստանում գիտական նորանոր ճշմարտությունների ծնունդին:

### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազաթ.- Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:  
Բուզ. – Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

<sup>10</sup> Ա. Մեյեյ, նշվ. տեղում, էջ 389:

<sup>11</sup> Ա. Մեյեյ, նշվ. տեղում, էջ 386:

<sup>12</sup> Ա. Մեյեյ, նշվ. տեղում, էջ 390:

Եզն. - Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:  
Եղ. - Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան,  
1957:  
Խոր. – Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:  
Փարպ. – Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և Թուրք առ  
Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:  
Աստվածաշնչի համառոտագրությունները տրվում են ընդունված  
կարգով:



## ՀԱՅԵՐԵՆԻ ՕՐԻՆԱԶՎՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՈՎ ԿԱԶՄԿԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիտատեխնիկական առաջընթացն իր կնիքն է դնում բառապաշարի վրա, օբյեկտիվորեն պայմանավորում նրա զարգացման ներքին գործընթացը: Մասնագետների առջև խնդիր է դրվում մշտապես զբաղվելու նոր տերմինների ստեղծման, գոյություն ունեցողների գնահատման, դրանց մշակման և փոփոխման հարցերով, այսինքն՝ լայն առումով տերմինաշինությամբ:

Տերմինների կերտումն ու ընտրությունը կատարվում է գիտականորեն, ուստի կարևորը տերմինաշինության տարիների ընթացքում որդեգրած սկզբունքների հետևողական կիրառումն է, տերմինակերտման ժամանակ տերմինին՝ իբրև բառապաշարային միավորի, ներկայացվող պահանջների հաշվառումը:

Տերմինային յուրաքանչյուր նորաստեղծ միավոր լեզվում ամրագրվում ու գոյատևում է, եթե առավել ճշգրիտ է արտահայտում հասկացությունը, կազմված է լեզվի բառակազմական և քերականական օրինաչափություններով, համակարգայնության սկզբունքով, նրանում խախտված չեն բառերի կապակցելիության սահմանները և այլն:

Բնական է, որ նոր (մասնավորապես թարգմանաբար և պատճենման եղանակով ստեղծվող) տեխնիկական տերմինները միշտ չէ որ բավարարում են այդ պահանջները, հաճախ սխալ, անհաջող կամ անհարկի կազմություններ են լինում և հետևանք են տարբեր խախտումների: Դրանք կներկայացնենք առանձին խմբերով:

*1. Բառակազմական օրինաչափությունների խախտումով կազմված տերմիններ*

Հայտնի է, որ հայերենում *ածական + գոյական և թվական + գոյական* կաղապարներով կազմություններն իրենց ձևաբանական արժեքով ածականներ են: Սակայն այս հանգամանքի անտեսման հետևանքով ռուսերենի բաղադրյալ տերմինների *гвухкамерный, полнопоточный, однобортная [система разработки]* և նման այլ բաղադրիչների ձևությամբի ճշգրիտ վերարտադրումով (ելնելով *-овый// -евый* և *-ային, -անի* ածանցների համարժեքությունից) ստեղծվել են *երկխցիկանի* (Շ, Աժ, էջ 36), *լիահոսքային* (ն.տ., էջ 16), *միակողային [մշակման համակարգ]*

(LSSՌՅԲԲ) սխալ կազմությունները փոխանակ *երկխուց, լիահոսք, միակող* ձևերի: Այդ համաբանությամբ էլ *одношарнирная режущая цепь*-ի համարժեքը պետք է լինի *միահողակալ կտրող շղթա* տերմինը (փոխ. *մեկ հողակապային կտրող շղթա*-ի /LSSՌՅԲԲ/):

*ԱՆ- + գոյական* կաղապարով կազմությունները հայերենում ըստ խոսքիմասային արժեքի ածականներ են: Որպես կանոն, նման կազմություններում սխալ է ածականակերտ վերջածանցի կիրառությունը: Նախ՝ բառն ինքնին ածական է, երկրորդ՝ *ան-* նախածանցը մատնանշում է որևէ բանի բացակայությունը, իսկ ավելացվող վերջածանցը՝ առկայությունը (օրինակ՝ *անթև - թևավոր*, բայց ո՛չ *անթևավոր*): Բառակազմական այս օրինաչափության խախտումով է կազմվել, օրինակ, *անձնշումային [ռեժիմ]* /LSSՌՅԲԲ/ (հմմտ. *безнапорный [режим]*) բառ-բաղադրիչը, որը պիտի լիներ *անձնշում [ռեժիմ]*:

Անհաջող է նաև *հողափորիչ [մեքենա]* (հմմտ. *землеройная [машина]* /LSSՌՅԲԲ/) կազմությունը *հողափոր* բառի փոխարեն: Ինչպես նշել ենք, *գոյական + բայարմատ* կաղապարով կարող են կազմվել թե՛ գոյականներ, թե՛ ածականներ: Վերջիններս արտահայտում են գործելու հատկանիշի (մի բան անելու, կերտելու ևն) իմաստ: Հմմտ. *քարհատ [մեքենա], վերհան [ճոպան]* և այլն:

Նշենք, սակայն, որ ռուսերենից պատճենումներում բառակազմական օրինաչափությունների խախտումները հաճախադեպ չեն, քանի որ երկու լեզուների բառակազմական կաղապարները շատ ընդհանրություններ ունեն:

2. *Շարահյուսական օրինաչափությունների խախտումով կազմված տերմիններ*

Այս խախտումները կատարվում են առավելապես բաղադրյալ տերմինների պատճենման ժամանակ: Այսպես, սխալ կազմություն է *հարվածային ալիք*-ը (հմմտ. ռուս. *ударная волна*): Այս բաղադրյալ տերմինի մեջ որոշիչ-որոշյալի շարահյուսական կապակցությունը պիտի արտահայտվեր *դերբայ + գոյական* կաղապարով (*հարվածող ալիք*), մանավանդ որ այն բավական գործուն է ռուսերենից պատճենումներում (հմմտ. *перекрестная муфта - խաչահատվող կցորդիչ, ковочный пресс - կռող մամլիչ* (տե՛ս ՈՅՊԲ) և այլն):

Հայտնի է, որ որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությունը հայերենում արտահայտվում է ոչ միայն *ածական + գոյական, դերբայ + գոյական* կաղապարներով, այլև *գոյական + գոյական* կաղապարով, ուր լրացումը կարող է հանդես գալ տարբեր հոլովներով (ուղղական, սեռական-տրական, բացառական,

գործիական): Դրանցից ամենագործունը և *ածական + գոյական* կաղապարին համարժեքը սեռական-տրական հոլովով կապակցություններն են (հմմտ. *բեռնաթափման կափույր /разгрузочный клапан/* և այլն): Սակայն ռուսերեն տեխնիկական տերմինների պատճենման ժամանակ այս հանգամանքը երբեմն հաշվի չի առնվում, և ստեղծվում են անհաջող տերմիններ: Օրինակ՝ *շահագործողական ծախսեր* (Շ, Աժ, էջ 12) փոխ. *շահագործման ծախսեր*, *արգելակային հեղուկ* (ն.տ., էջ 248) փոխ. *արգելակի հեղուկ*, *օդային քամիչ* (ն.տ., էջ 15) փոխ. *օդի գոտի*<sup>1</sup> և այլն:

Ռազմական տերմինների բառարանում *самолет-заправщик*, *самолет-ракетоносец* և *самолет-нарушитель* տերմինների երկուական համարժեք է արձանագրված՝ *ինքնաթիռ-լցավորիչ/լցավորող* *ինքնաթիռ*, *ինքնաթիռ-հրթիռակիր/հրթիռակիր* *ինքնաթիռ*, *ինքնաթիռ-սահմանախախտ/սահմանախախտ* *ինքնաթիռ* (տե՛ս ՌՀՌԲ): Առաջինները, որ բառացի թարգմանության արդյունք են, մեր կարծիքով, հայերենի համար արհեստական կազմություններ են, քանի որ նկատելի է այսպիսի մի օրինաչափություն. երբ օտար բառի մեջ կա բայական իմաստ, հայերենում այդ բառին համարժեք կարող են լինել կամ ենթակայական դերբայը (հմմտ. *носитель - կրող*), կամ *-իչ* ածանցով բաղադրված բառը (հմմտ. *устребитель - կործանիչ*) և կամ բայարմատ գերադաս բաղադրիչ ունեցող բարդությունը (հմմտ. *разведчик - հետախույզ*): Այդ պատճառով էլ նման բաղադրիչ ունեցող օտար տերմինը չի կարող պատճենվել իբրև բաղիյուսական հարադրություն, քանի որ հայերենում նրա բաղադրիչների միջև առկա է ստորադասական հարաբերություն: Ուստի նպատակահարմար է դրանք պատճենել բաղադրյալ տերմինով՝ որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությամբ, որ հարավատ է հայերեն մեզվամտածողությանը: Այսպես, *լցավորող (լցավորիչ) ինքնաթիռ*, *հրթիռակիր ինքնաթիռ*, *սահմանախախտ ինքնաթիռ* և այլն:

### 3. Բառերի կապակցելիության սահմանների խախտումով կազմված տերմիններ

<sup>1</sup> Այստեղ առկա է նաև բառ-բաղադրիչի սխալ գործածության երևույթ: *Фальшп* -ը երկու համարժեք ունի՝ *գոտիչ* և *քամիչ*: Վերջինս սահմանափակ կիրառություն ունի և գործածվում է հիմնականում հիդրոտեխնիկական տերմինաբանության մեջ: Նշենք նաև, որ *օդ* բառի հետ իմաստով կապակցելի է *գոտիչ*-ը:

«Հիմնական գործողությունը ձեռքով կատարելու համար հատկացված ժամանակ» իմաստն արտահայտող ռուս. *ручное время* տերմինին իբրև համարժեք բառարանում արձանագրված է *ձեռքային ժամանակ* (տե՛ս LSSՌՀԲԲ) կապակցությունը, որը բոլորովին անհարիր է հայերեն լեզվանտածողությանը: Տերմինի իմաստը կարելի է արտահայտել պարզապես նկարագրական եղանակով, ինչպես՝ *ձեռքի աշխատանքի ժամանակ, ձեռքով աշխատելու ժամանակ* և այլն:

*Բարձրամուր, բարձրարագ* (ԳՏ, 1989, 11, էջ 30) կազմությունները ռուսերեն *высокопрочный, высокоскоростной* տերմինային բաղադրիչների մեխանիկական պատճեններն են: Բանն այն է, որ հայերենում *արագություն, ամրություն* գոյականները պահանջում են *մեծ* որոշիչը (հմմտ. *մեծ արագությամբ սլանալ, մեծ ամրություն ունեցող* և այլն): Այս տեսակետով ռուսերեն բաղադրյալ տերմինների նշված բաղադրիչների ճիշտ համարժեքներ պետք է համարել *մեծ ամրության [մետաղների], մեծ արագության [շարժիչ]* կազմությունները (հմմտ. *մեծ կարծության ...* և ոչ թե *բարձրակարծր...*), որոնք արձանագրված են բառարաններում: Սակայն այս կապակցությամբ պետք է մի վերապահում անել. *բարձրավոլտ, բարձրահար, բարձրահարգ* և նման տերմինների համաբանությամբ ստեղծված վերոնշյալ կազմությունները տեխնիկական գրականության մեջ հաճախ են հանդիպում և օրինաչափ դառնալու միտում ունեն: Ուստի կարելի է ասել, որ պատճենումը կարող է նպաստել բառերի կապակցելիության և իմաստային ծավալի ընդլայնմանը:

#### 4. Իմաստի խախտումով կազմված տերմիններ

Պատճենումով (կամ թարգմանաբար) կազմված որոշ տերմիններում նկատում ենք տարբեր կարգի իմաստային խախտումներ:

Այսպես, սխալ կազմություն է *հակամանեկ-ը* /Շ,ԱԺ, էջ 68/ որպես *контргайка*-ի համարժեք: Լատ. *contra-* բաղադրիչը միայն «հակառակ» իմաստը չի արտահայտում. նրանով բաղադրված կազմություններն ունեն նաև «պրկել, սեղմել» իմաստները<sup>1</sup>, ուստի այդ տերմինը ճիշտ է *սևեռամանեկ* (տե՛ս ՌՀՊԲ) կամ մեր կածիքով ավելի հաջող *պրկամանեկ* կազմությամբ պատճենելը: Նույն սխալի

---

<sup>1</sup> Հմմտ. լատ. *contra* (= *против*) և *contractio* (= *стягивание, сгибание*) բառերը (տե՛ս ЛРС): Հմմտ. նաև *контреть* - *կալնել, պնդել, սևեռել* համարժեքությունը:

արդյունք է նաև *самокоонтрящийся* բառի պատճենումը *ինքնահակադրիչ* կազմությամբ՝ *ինքնապրկիչ*-ի փոխարեն:

*Доэаправка* տերմինը պատճենվել է *նախալցավորում* (ՌՅՌԲ) ելնելով *до-* > *նախա-* համարժեքությունից: Սակայն ռուս. *до-* նախածանցը արտահայտում է նաև «գործողությունը մինչև վերջ կատարելու, կատարված գործողությունը լրացնելու» իմաստ, և այդ տերմինի հայերեն ճիշտ համարժեքը *լրալցավորում*-ն է (տես ՌՅՊԲ): Իսկ *доэаправка в воздухе* տերմինը համապատասխանաբար պիտի լինի *լրալցավորում օդում* (*նախալցավորում օդում* (ՌՅՌԲ) կազմության փոխարեն):

Իմաստի խախտումով է կազմվել, օրինակ, *լուսանկարչահեռագրական* տերմինը (հմմտ. *фототелеграфный*): Պատճառն այն է, որ ռուս. *фото* բառի իմաստներից մեկը *լուսանկար*-ն է (*фото=фотография*): Մինչդեռ սա միջազգային տերմինային տարրերով բաղադրված կազմություն է և ելնելով այդ տարրերի իմաստներից (հուն. *photos* նշանակում է «լույս») պետք է պատճենվի *լուսահեռագրական*:

Իմաստային համապատասխանությունը ճիշտ չի դրսևորված նաև *հեռավոր լույս, մերձակա լույս* (Շ, ԱԺ, էջ 20) կազմություններում, որոնք *гальный свет, ближний свет* բաղադրյալ տերմինների բառացի թարգմանություններն են: Հայերենում ունենք *հեռարձակ* ածականը («դեպի հեռավոր վայր, կետ արձակվող» իմաստով. հմմտ. *հեռարձակ ռումբ, հեռարձակ հրթիռ* և այլն), որն ավելի է համապատասխանում հիշյալ տերմինին: Ուստի նշված կազմությունների փոխարեն մեր կարծիքով ավելի ճիշտ են *հեռարձակ լույս* և սրա համաբանությամբ կազմված *մերձարձակ լույս* տերմինները:

Բերված վերջին օրինակները վկայում են, որ հաճախ իմաստի խախտման արդյունք է նաև բաղադրյալ տերմիններում բառ-բաղադրիչների սխալ գործածությունը:

**5. Բառ-բաղադրիչների սխալ գործածությամբ կազմված տերմիններ**

Ինչպես տեսանք, բաղադրյալ տերմինների պատճենման ժամանակ բառ-բաղադրիչների սխալ գործածությունը առավելապես պայմանավորվում է պատճենող և պատճենվող լեզուներում բառերի իմաստային ծավալի տարբերություններով, և դրանք հստակ սահմանազատելը երբեմն դժվար է: Սակայն ոչ միշտ է այդպես: Օրինակ՝ *մխոցի գոզոնց* (Շ, ԱԺ, էջ 43) կազմությունը, որ ռուս. *юбка поршня* բաղադրյալ տերմինի պատճենն է, սխալ



բառօգտագործման արդյունք է այն պիտի լիներ *մխոցի փեշ/մխոցափեշ*:

Որպես *дисковый магазин* տերմինի հայերեն համարժեք բառարանում արձանագրված է *սկավառակի պահեստատուփ*-ը (տե՛ս ՌՅՌԲ), բայց քանի որ այն մատնանշում է պահեստատուփի ձևը, ճիշտ կլիներ գործածել *սկավառակաձև բառ-բաղադրիչը* (հմմտ. *եղջյուրաձև պահեստատուփ - рождковий магазин* և այլն):

*Թողարկման շերտ, մի քանի թողարկման շերտերով զտիչ*<sup>1</sup> (ՌԷՌՅԲ) տերմիններում (հմմտ. *полоса пропускания, фильтр с несколькими полосами пропускания*) սխալ է *թողարկում* բառ-բաղադրիչի գործածությունը, քանի որ *թողարկել* նշանակում է «1. Պատրաստի արտադրանք բաց թողնել: 2. Վաճառքի հանել, շուկա դուրս բերել: 3. Արտադրել» (ԱՅԲԲ): Այս իմաստով այն համարժեք է ռուս. *выпустить* բառին, իսկ *пропустить* նշանակում է «բաց թողնել, թույլ տալ անցնելու ևն»: Կարծում ենք, նպատակահարմար կլիներ այս բաղադրյալ տերմիններում գործածել *թողանցում* (*թողանցել* նշանակում է «ընդունել և բաց թողնել, իր միջով անցկացնել» /ն.տ./) բառ-բաղադրիչը՝ *թողանցման շերտ, թողանցման մի քանի շերտով զտիչ*:

Նույն սխալի հետևանք է նաև *թողարկման ունակություն* (ՌՅՌԲ) կազմությունը (պետք է լիներ *թողանցման ունակություն*): Սակայն սա նաև անհարկի պատճեն է, քանի որ *пропускная способность* տերմինն ունի կայունացած համարժեք՝ *թողունակություն*:

6. *Համակարգայնության սկզբունքի խախտումով կազմված տերմիններ*

Սրանք այն տերմիններն են, որոնք կազմվել են տերմինների միօրինակության սկզբունքի խախտումով: Օրինակ՝ տեխնիկական տերմինաբանության մեջ *угарник* տերմինի համարժեքը *զարկան*-ն է, մինչդեռ *пневмоугарник*-ը պատճենվել է *պնևմահարվածիչ* (LSSՌՅԲԲ): Կարծում ենք՝ ավելի ճիշտ կլիներ *պնևմահարկան* կազմությունը:

Հաջող չէ նաև *նմուշավերցիչ* (հմմտ. *пробоотборник*) տերմինը (LSSՌՅԲԲ): Դրա փոխարեն կառաջարկեինք *նմուշառիչ*-ը, մանավանդ որ *отбор проб* տերմինի՝ բառարանում արձանագրված համարժեքն էլ *նմուշառում*-ն է (տե՛ս ՌՅՊԲ):

---

<sup>1</sup> Այս կազմության մեջ կա նաև շարադասության խախտում. հայերենի շարադասական օրինաչափություններին հարազատ ձևն է *թողարկման մի քանի շերտով զտիչ*-ը:

*խողովակապահիչ* (LSSՌՅԲԲ) և *խողովակակալիչ*<sup>1</sup> (ՌՅՊԲ) տերմինների փոխարեն ավելի հարմար է թվում *խողովակակալ* կազմությունը (հմմտ. *դողակալ, հրթիռակալ* և այլն):

Սխալ են *տեսազլխույկ*-ը [հմմտ. *видеозолвка*] (ԳՏ, 1990, 5, էջ 13) *տեսազլխիկ* տերմինի փոխարեն /հմմտ. *թագազլխիկ, մարտազլխիկ, պտուտակի գլխիկ, ութանիստ գլխիկ, գոլորշիաառաջացում*-ը [հմմտ. *парообразование*] (ԳՏ, 1988, 7, էջ 8) *շոգեգոյացում* տերմինի փոխարեն /հմմտ. *շոգեմուղ, շոգեգատիչ* (ՌՅՊԲ), *շոգեավտորուս* (ԳՏ, 1989, 7, էջ 3) և այլն/:

Տեխնիկական գրականության թարգմանության ժամանակ, երբ անհրաժեշտություն է լինում որևէ բառ կամ տերմին հայացնելու, որոշ հանգամանքների բերումով կատարվում են հապճեպ պատճենումներ, որոնք հետագայում ճշգրտվում են: Հմմտ. *հորատապահիչ, փոշիաառաջացում, փրփրաառաջացում* (LSSՌՅԲԲ) և *հորատակալ, փոշեգոյացում, փրփրագոյացում* (ՌՅՊԲ):

Տերմինների համակարգայնության սկզբունքի խախտման հետևանք են նաև տարբերակային կազմությունները:

Այսպես, *газазационный* (*газазирующий*) բաղադրիչով կազմված ռուսերեն բառակապակցական տերմինների հայերեն համարժեքներում այն փոխառված է կամ պատճենված (հմմտ. *դեգազացիոն [մեքենա]* – *газазационная [машина]* /ՌՅՌԲ/, *ապազազավորող [նյութ]* – *газазирующее [вещество]* /Ն.տ./, *դեգազացման/գազազերծման [միջոց]* – *[средство] газазац* /Ն.տ./, *գազազերծման [սարք]* – *газазационный [прибор]* /Ն.տ./): Մինչդեռ սրանցից համեմարարելի է *գազազերծում*-ը (կամ *գազազերծող*-ը որպես –*ующий* ածանցով կազմությունների համարժեք), մանավանդ որ *газазація, газазатор, газазировать* տերմինների համար միանշանակ առաջարկվում են *գազազերծում, գազազերծիչ, գազազերծել* համարժեքները (Ն.տ.):

---

<sup>1</sup> Երբեմն գոյականի արժեքով նմանատիպ կազմությունները միանգամայն ճիշտ են, ընդ որում իմաստային տարբերակում են դրսևորում: Այսպես, օրինակ, *ականորս* «ականներ որսացող գտնող *գ ո թ ի թ*» (նաև մարդ), իսկ *ականորսիչ* («սակրավոր») բառի մեջ առկա է իմաստային մասնավորում «ականներ հայտնաբերող և վնասագերծող *մ ա ռ ղ*»:

Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ «սակրավոր» իմաստով գործածել *ականորս*-ը (հմմտ. *ծկնորս, թռչնորս*), իսկ գործիքի իմաստով *ականորսիչ*-ը (հմմտ. *բրիչ, սրիչ, փորիչ*), մանավանդ որ վերջինիս պես տեխնիկական բազմաթիվ տերմիններ ունենք, օրինակ *մեկուսիչ, ցեռուցիչ, օդափոխիչ, գտիչ* և այլն:

Հաճախ ստեղծվում են միևնույն տերմինի տարբերակներ, որոնք թեև ճիշտ են, բայց դրանց գոյությունը ցանկալի չէ, քանի որ տերմինները պետք է զերծ լինեն հոմանիշությունից: Օրինակ՝ *глаголютель*-ն ունի երկու համարժեք՝ *խլարար*//*խլացուցիչ*, *участвует*-ը՝ *ուժեղարար*//*ուժեղացուցիչ* և այլն: Այս կապակցությամբ կարելի է մի հետաքրքրական դիտարկում անել: Հայտնի է, որ հայերենում բայահիմքերից ենթակայական դերբայի նշանակությամբ բառեր կարող են կազմվել *-իչ* (օրինակ՝ *ջեռուցիչ* /ՈՒՅՊԲ/, *էլեկտրաօդակոխիչ* /ՀՀ, 04.10.1997/ և այլն) և *-արար* (օրինակ՝ *փոշարար* /ԸԱԺ, էջ 121/, *կայունարար* /ԳՏ, 1989, 4, էջ 6/ և այլն) ածանցներով: Համաժամանակյա ընկալմամբ պարզ բայերից տերմիններ կարելի է կազմել միայն *-իչ* ածանցով (օրինակ՝ *մեղմիչ*, *մամլիչ*, *չափիչ*, *խթանիչ*, *օդամաքիչ* և այլն), իսկ ածանցավորներից՝ թե՛ *-իչ*-ով, թե՛ *-արար*-ով: Մեր կարծիքով, նպատակահարմար է ածանցավոր բայերից տերմիններ կազմել *-արար* ածանցով, քանի որ անցյալ կատարյալի ցոյական հիմքից *-իչ* ածանցով բաղադրված կազմությունները (օրինակ՝ *օդախոնավացուցիչ*, *օդազովացուցիչ* /ԳՏ, 1988, 7, էջ 6/, *ակտիվացուցիչ*, *կայունացուցիչ* /ՈւԷՌՅԲ/ և այլն) ասես զուգորդվում են *ցուցիչ* բաղադրիչով կազմված միավորներին, որոշակիորեն անբարեհունչ են, ուստի սրանց համեմատությամբ ավելի հաջող ու բարեհունչ են թվում *օդախոնավարար*, *օդազովարար*, *ակտիվարար*, *կայունարար* և նման կազմությունները: Այս մտեցումը թերևս նպաստի ստեղծվող տերմինների միօրինականացմանը:

Այսպիսով, հայերենի տարբեր օրինաչափությունների խախտումով կազմված (նաև տարբերակային) տերմինները երբեմն արդյունք են թարգմանիչների որոշակի անտեղյակության կամ անհետևողականության: Դրանց մեջ քիչ չեն բառարանային արձանագրում ունեցողները: Սակայն ժամանակի ընթացքում նման կազմությունները ճշգրտվում են, և կայունանում են իմաստով ու բառակազմորեն առավել հաջողվածները:

### *Համառոտագրություններ*

ԱՅԲԲ - Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

ԳՏ - «Գիտություն և տեխնիկա» ամսագիր

ԼՏՏՌՅԲԲ - Գ.Խաչատրյան, Լեռնատեխնիկական տերմինների ռուս-հայերեն բացատրական բառարան, Ե., 1985:

ՀՀ – «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ  
Շ, ԱԺ – Լ.Շուվալով, Ավտոնոբիլ «Ժիգուլի» (ՎԱԶ-2101), (թարգմ.  
Հ.Կ.Մարգարյան, Թ.Ա.Ղազանջյան), Ե., 1975:  
ՌԷՌ-ՀԲ - Ռ.Գասպարյան և ուրիշներ, Ռադիոէլեկտրոնիկայի ռուս-  
հայերեն բառարան, Ե., 1982:  
ՌՀՊԲ - Զ.Հացագործյան և ուրիշներ, Ռուս-հայերեն պոլիտեխ-  
նիկական բառարան, Ե., 1988:  
ՌՀՌԲ - Ս.Ասլանյան, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Ե., 1991:  
ЛРС – Дворецкий И.Х., Латинско-русский словарь, изд. 3-е.  
М., 1986:



**ՕՏԱՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ  
ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐՈ ԱՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ  
/անգլերենի նյութի հիման վրա/**

Ներկա ժամանակաշրջանում օտար լեզուների լիարժեք ուսուցումն անհնար է իրականացնել առանց հասարակական-քաղաքական բնույթի տեքստերի ուսուցման: Ավելին՝ մենք կասեինք, որ դրանք երևի արդեն խլել են առաջնությունը գեղարվեստական խոսքի ձեռքից, քանի որ այսօր օտար լեզուներով հաղորդակցական շփումն իրականանում է ոչ թե գեղարվեստական գրականության, այլ հասարակական կյանքի ոլորտում:

Հատկապես հրատապ է տնտեսագիտական և ֆինանսաբանկային տերմինաբանության ուսուցման հարցը, քանի որ օտար լեզուների ֆակուլտետների շրջանավարտների զգալի մասը, աշխատանքի անցնելով զանազան արտասահմանյան և տեղական կազմակերպություններում, գրասենյակներում, առնչվում է այդ բնագավառի լեզվական դժվարություններին:

Դժվարությունների գլխավոր և հիմնական պատճառը տվյալ բնագավառների մասնագիտական տերմինաբանության չիմացությունն է:

Հայ բառարանագրությունը, որն այդքան հարուստ ավանդույթներ ունի, խորհրդային ժամանակաշրջանում հիշյալ ոլորտում մեծ ձեռքբերումներով չի փայլել: Բացի Թադևոս Ավդալբեկյանի «Տնտեսագիտական տերմինների ռուս-հայերեն բառարանից», ուրիշ նշանակալի գործ չի եղել: Այդ բառարանը, լինելով խորհրդային գաղափարախոսության և ռուսաբան դպրոցի ուժեղ ազդեցության տակ, շատ մեծ տեղ է տվել օտար և օտարաբան հայակազմ տերմինաբանությանը: Ինչ վերաբերում է հեղինակի կողմից ստեղծված կամ շրջանառության մեջ մտցված տերմիններին, ապա դրանք հիմնականում արտահայտում էին քաղաքական բնույթի գիտություններին այն ժամանակ հատուկ գաղափարական ենթիմաստները:

Այս պայմաններում ոչ վաղ անցյալում տնտեսագիտական տեքստերի ուսուցումն ուղեկցվում էր մեծագույն դժվարություն-

ներով, որոնցից խուսափելու լավագույն միջոցն առհասարակ նման տեքստերին չանդրադառնալն էր:

Ետխորհրդային շրջանում մասնավոր սեփականատիրական հարաբերությունների սկզբնավորման ու զարգացման ընթացքին զուգահեռ մեծացավ հետաքրքրությունը համապատասխան գիտական ենթալեզուների նկատմամբ: Դա մասնավորապես դրսևորվեց նաև տերմինարանների ու գրուցարանների կազմությամբ և հրատարակմամբ:

Այսօր հրապարակի վրա են թարգմանական մի շարք տնտեսագիտական աշխատությունները, ինչպես, օրինակ, Փոլ Սանուելսընի և ուրիշների երկհատոր «Տնտեսագիտությունը», Ալեքսանդր Աղաբեկյանի տնտեսագիտական տերմինների անգլերեն-հայերեն բառարանը, տնտեսագիտության ինստիտուտի հեղինակային խմբի ստեղծած տնտեսագիտական տերմինների բառարանը և այլն<sup>1</sup>: Այս շարքի առաջին աշխատությունը մեր կազմած ֆինանսաբանկային տերմինների անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն երկհատոր բառարանն է /1994 թ./, որը USAID ամերիկյան կազմակերպության պատվերով ստեղծված լինելով՝ առ այսօր չի տպագրված և համակարգչային եղանակով բազմացված կարելի է գտնել Հայաստանի ամերիկյան համալսարանի գրադարանում:

Տնտեսագիտական բնույթի տեքստերի օգտագործման միջոցով բուհերի բարձր կուրսերի ուսանողներին ուսուցանվում են տվյալ գիտաճյուղի ամենագործածական տերմինները և այդ բնագավառում գրավոր ու բանավոր հաղորդակցության առանձնահատկությունները:

Այս ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ մի շարք ուշագրավ գործոններ:

Առաջին առանձնահատկությունն այն է, որ օտար լեզվի ուսուցման ժամանակ տնտեսագիտական գիտելիքների հաղորդումը չէ ուսուցման գործընթացի հիմնական նպատակը: Դա, փաստորեն երկրորդային, ածանցյալ նպատակ է: Գիտական տեղեկույթը հաղորդվում է ընթերցանության տեքստերի միջոցով և հետապնդում է ուսուցողական նպատակ՝ այդ բնագավառում հաղորդակցական հմտություններ մշակելու համար:

---

<sup>1</sup> Տես Ա. Աղաբեկյան, Անգլերեն- հայերեն բառարան:

Գործարարություն, տնտեսագիտություն, Երևան, 1998 թ.:

Գ. Կիրակոսյան, Հ. Դուլչյան, Ի. Տիգրանյան, Տնտեսագիտական բացատրական բառարան, Երևան, 1999 թ.:

Գիտական տեքստերի ընթերցանության, մեկնաբանման և վերլուծության ընթացքում ուսումնական գործընթացի գաղափարական, գիտական և դիդակտիկական մակարդակի որոշման հիմնական գործոնների թվում անկարևոր չէ տերմինաբանության դերը, որը օտարալեզու տեքստի ուսուցման ժամանակ դրսևորվում է տերմինների թարգմանության կամ համարժեքներով փոխարինելու ձևով:

Այդ խնդիրը հաջողությամբ լուծելու համար ուսուցանողն ինքը պետք է տեղյակ լինի տվյալ տերմինաբանությանը: Այդ գործում նրան կարող են օգտակար լինել վերը նշված և այլ տեղեկատու նյութերը:

Ժամանակակից լեզվաբանության մեջ գերիշխող հայեցակերպի համաձայն տերմինները գիտական հասկացություններ ճշգրիտ արտահայտող բառեր են կամ բառակապակցություններ: Ուստի տնտեսագիտական և ամեն մի այլ գիտական տերմինի առկայությունը տեքստում առաջ է բերում երկու անհրաժեշտություն.

ա/ տվյալ տերմինով արտահայտված հասկացության բացահայտում, պարզաբանում,

բ/ տերմինների թարգմանություն կամ պատճենում:

Նման դժվարությունները բացակայում են, երբ օգտագործվող տերմինները փոխառելի են կամ արդեն փոխառնված: Դա մեծ մասամբ վերաբերում է տարբեր պետությունների արժույթների անուններին:

Օրինակ՝

«Բրիտանական ֆունտի գինը՝ դոլարով արտահայտված, վերջերս կազմում էր 1,8 դոլար: Փոխարժեքներ գոյություն ունեն բոլոր երկրների արժույթների և դոլարի միջև: 1991 թ. կեսերին արտարժույթի փոխարժեքը կազմում էր 56 ցենտ՝ գերմանական մարկի համար, 16 ցենտ՝ ֆրանսիական ֆրանկի, 87 ցենտ՝ կանադական դոլարի, 0,72 ցենտ՝ ճապոնական իենի դիմաց» /Սամուելսըն, «Տնտեսագիտություն», էջ 458/:

Այս հատվածում արժույթների անուններն իրենք բնորոշում են իրենց, նամանավանդ, որ երկրանուններից կազմված որոշիչները կոնկրետացնում են դրանք: Այդ որոշիչների բացակայությունը կղձվարացներ գործը, քանի որ մի շարք արժույթներ կրում են նույն անունը /դոլար - ԱՄՆ, Ավստրալիա, Բահամյան կղզիներ, Կանադա, Չինբաբվե, Լիբերիա, Նոր Ջելանդիա, Թայվան և այլն, մարկ - Գերմանիա, Ֆինլանդիա, ֆրանկ – Ֆրանսիա, Բելգիա, աֆրիկյան մի շարք երկրներ և այլն/:

Դժվարություններ կարող են ծագել այնպիսի տերմինների հարցում, ինչպիսիք են՝ արտարժույթ, փոխարժեք և այլն:

Այստեղ կարող են օգտագործվել մի շարք լեզվական և արտալեզվական պատճառներով պայմանավորված զանազան մեթոդներ: Դրանցից կարևորը, ինչպես նկատում է Ա. Ն. Բատաշևան, տերմինի «բառային թափանցիկությունն է, այսինքն, թե տերմինի ներքին ձևը որքանով է նպաստում նրա իմաստի ըմբռնմանը:»<sup>2</sup>

«Ներքին ձև» ասելով՝ պետք է հասկանալ բառակազմական կաղապարը, որը թելադրում է բաղադրիչների առանձին- առանձին արտահայտած իմաստների փոխադարձ կապը: Այսինքն՝ արտարժույթը արտաքին արժույթն է, ոչ երկրի ներքին դրամական միավորը, փոխարժեքը՝ փոխանակման արժեքը, այսինքն երկու արժույթների արժեքային հարաբերակցությունը:

Տերմինների ներքին ձևն ակնառու է, եթե նրանք բաղադրյալ են /բարդ կամ բառակապակցական/, ուստի բավական է, որ ուսանողն իմանա նման տերմինների հիմնաբառը կամ գլխավոր բաղադրիչը, նամանավանդ, որ դրանց զգալի մասն այսօր խոսքում ոչ տերմինային նշանակությամբ են գործածվում:

Օրինակ՝ account բառի իմաստների /հաշիվ, հաշվետվություն, հաշվառում/ իմանալու դեպքում հեշտ կյուրացվեն նրանով բաղադրված բազմաթիվ տերմիններ, ինչպես, օրինակ՝

account current – ընթացիկ հաշիվ,

accounting system – հաշվառման համակարգ,

accounting year – հաշվետու տարի,

account administrator – հաշվի վարիչ /անձ, որ պատասխանատու է որոշակի հաշիվներով գործարքների համար/,

account holder – հաշվետեր / բանկում հաշիվ ունեցող անձ/,

accountant – հաշվապահ,

account general - գլխավոր հաշվապահ,

accounting department – հաշվապահություն, բանկի հաշվապահական հաշվառման բաժին,

accounting firm - հաշվապահական ֆիրմա,

accounting period – հաշվետու ժամանակահատված և այլն:

---

<sup>2</sup> Стѹ (Л.А.Баташева. Влияние фактора “формы речи” на приемы объяснения терминов в учебной лекции. “Вопросы стилистики”. Саратов 1989 г. стр. 84.



Մեկ հողվածում հնարավոր չէ խոսել տերմինաբանության ուսուցման բոլոր հարցերի մասին, ուստի բավարարվենք մեկ այլ կարևոր խնդիր արժարժեցնելով:

Ինչպես սկզբում նշվեց, վերջին տարիներին տարբեր կազմակերպություններ և հեղինակներ ձեռնարկում են նույն բնագավառի տերմինաբանության հայացման գործը և հաճախ տալիս են հակառակ, իրարամերժ լուծումներ: Ժամանակակից հայերեն տերմինաբանության մշակման հարցում նկատելի է երկու միտում: Առաջին միտումը, որ ձևավորվել է 60-ական թթ. քաղաքական ձեռնարկից հետո, ենթադրում է օտար բառերի ու տերմինների պատճենում բոլոր այն դեպքերում, երբ դա հնարավոր է, պահպանելով հետևյալ կանոնները. հայերեն նորաստեղծ տերմինը պետք է լինի համեմատաբար կարճ, դյուրահունչ, չաղավաղի հասկացության իմաստը, հնարավորություն տա ածանցյալների շարքի ստեղծման:

Այս միտումը թույլ է տալիս պահպանել նախկինում գործածված և համընդհանուր ճանաչում ստացած փոխառյալ տերմիններ, ինչպես՝ բանկ, ակրեդիտիվ, կլիենտ, չեկ, ինկասո և այլն:

Երկրորդ միտումը մաքրամոլական է, քանի որ պահանջում է առհասարակ հրաժարվել օտար բառերից, նույնիսկ նախկին փոխառություններից: Այս դեպքում բանկը փոխարինվում է դրամատունով, ակրեդիտիվը՝ փոխանցումով, կլիենտը՝ հաճախորդով, չեկը՝ վճարագիրով, ինկասոն՝ բանկային գանձմամբ և այլն:

Այսպիսի մոտեցման դեպքում, թեև հնարավոր է ելակետային բառը տառացի կամ մոտավոր թարգմանել, բայց նորակազմությունից ածանցյալներ կազմել՝ ոչ:

Օրինակ՝ կա չեկագրքույկ տերմինը, բայց չեկը վճարագիր դարձնելով՝ կոժվարանանք ասել վճարագրային գրքույկ: Իսկ ուրիշ բառ առայժմ չկա: Նույնը՝ բանկային հաշիվ և դրամատնային հաշիվ, բանկիրը՝ դրամատնատեր, թե դրամատեր, պարզ չէ: Մենք առաջին տեսակետին ենք կողմնակից:

Երրորդ դժվարությունը նույն օտար տերմինի դիմաց մեկից ավելի հայերեն համարժեքների գոյությունն է: Օրինակ՝ inflation տերմինը նախկինում գործածվում էր գրեթե անփոփոխ /ինֆլյացիա/: Վերջին ժամանակներս դրա դիմաց հայտնվել են երեք նոր համարժեքներ. 1/ արժեզրկում, որ ինֆլյացիա օտար բառի հետ համագոր գործածվում էր և ընդունվել էր հասարակության կողմից և բառացի մշանակում է դրամի արժեքի անկում, դրամի արժեզրկում: Հայերեն զուգաձևությունների մեջ արևմտահայերեն բառերին առաջնություն տալու կողմնակիցները մեջտեղ են բերել

սղաճ տերմինը, իսկ Ալ. Աղաբեկյանի բառարանում էլ ներկայացվում է երրորդը՝ գնաճ: Չնայած վերջին երկու բառերն ավելի մոտ են inflation–ի ուռճացում ընդհանուր իմաստին, բայց արժեզրկումը արդեն սովորական է և այդ պատճառով էլ նրա դուրսմղումը արդարացի է:

Օտար բառերի հայացման հարցում արևմտահայերենն աննախընթաց հաջողությունների է հասել, բայց երբեմն դա հասնում է չափազանցության: Ուստի չի կարելի կուրորեն ընդօրինակել նրան՝ մեր բառապաշարից դուրս մղելով արդեն տարածված նույնպես հայերեն բառերն ու տերմինները:

Նամանավանդ, եթե հաշվի առնենք, որ արևմտահայերեն պատճենումները, որքան էլ ճշգրիտ կամ անճշգրիտ լինեն, կենսունակ չեն, գործառույթ չունեն, քանի որ առայժմ ոչ մի օտար երկիր, ուր ապրում են սփյուռքահայեր, ֆինանսաբանկային համակարգում դրանք չի գործադրում և հայ քաղաքացիներն էլ իրենց խոսքում ստիպված օգտագործում են տվյալ երկրի պետական լեզվի տերմինաբանությունը:

Բերենք մի շարք օտար տերմինների հայերեն զուգաձևությունների օրինակներ, որոնցից առաջինը արևմտահայերեն է, երկրորդը՝ արևելահայերեն.

account number – հաշվեթիվ – հաշվեհամար,

bank agio – դրամատան միջնորդչեք /միջնորդության վարձ, չեկի հետ կապ չունի/ - բանկի միջնորդավճար,

balance – հաշվեփակ – հաշվեկշիռ,

bank guarantee – դրամատնային երաշխավորում - բանկային երաշխիք,

loan – փոխատվություն – վարկ,

banker – դրամատեր, դրամատնատեր - բանկիր,

cheque – փոխգիր – վճարագիր /չեկ/,

blecked account – կողպիաշիվ – սառեցված հաշիվ,

bonus – վարձատրամիշ, արժանավարք – պարգևավճար, հավելավճար,

broker – սեղանավոր – միջնորդ,

brokerage – միջնորդչեք – միջնորդավճար,

bourse – սակարան - բորսա,

depositor – դրամադիր - ավանդատու, ավանդադիր,

finance - ելմուտ – ֆինանս և այլն:

Տնտեսագիտական տերմիններ կարող են հանդիպել ոչ միայն մասնագիտական, այլև ոչ մասնագիտական տեքստերում: Ամեն դեպքում դրանց պետք է բավարար մասնագիտական բացա-

տրություն տրվի, որպեսզի ուսանողները կարողանան հասկանալ, տիրապետել և իրենց հաղորդակցական գործունեության մեջ ճիշտ գործածել դրանք:

Այսպիսով՝ տնտեսագիտական բնույթի տեքստերի օգտագործումը օտար լեզվի ուսուցման ժամանակ երեք դեր կարող է խաղալ՝ ա/ ուսանողներին ծանոթացնել համապատասխան տերմիններին, բ/ հաղորդել մասնագիտական ընդհանուր տեղեկություններ, գ/ ճանաչել մայրենի տերմինաբանությունը և նպաստել դրա գործառույթի կայունացմանը և զարգացմանը:



**ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՏՈՐԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԲԱԶՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՂԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ**

Բառաիմաստային փոխակերպումների ուսումնասիրությունը բանաստեղծական տեքստում սերտորեն առնչվում է մի կողմից իմաստային բազմաձայնության, մյուս կողմից՝ բանաստեղծական տեքստի իմաստային միավորների՝ իմությունների և դրանց բաղադրիչ տարրերի՝ իմակների ստորակարգված համակարգի առանձնահատկությունների վերլուծության հետ:

Իմաստային բազմաձայնության երևույթը, այն է՝ միևնույն իմաստային միավորի մեկից ավելի իմաստների համաժամանակյա առկայացման հնարավորությունը, դիտվում է որպես գեղագիտական հաղորդակցության անհրաժեշտ նախապայման, գեղարվեստականության էությունն իսկ արտահայտող զանազան նշանակցումային, զուգորդական և անվանողական իմաստների համագոյակցում:

Բառիմաստի մակարդակով կատարված ուսումնասիրություններում հիշյալ երևույթը նկարագրելիս օգտագործվում են «բառի խորքային իմաստներ» (Ի.Ռ.Գալպերին), «բանաստեղծների լեզվի բազմակի գործառնություն» (Ռ.Ա.Բուդագով), «նշանակության տատանվող հատկանիշներ» (Յու.Ն.Տինյանով) բնութագրումները:

Առանձնապես հետաքրքրական է Յու.Մ.Լոտմանի կարծիքը բառի ներունակային բազմաձայնության վերաբերյալ, որի մեխանիզմները գիտնականը բացատրում է ոչ թե տարբեր նշանակությունների ստատիկ և համաժամանակյա գոյությամբ, այլ բազմաթիվ ներունակությունների անդադար գիտակցումով: «Յուրաքանչյուր իմաստավորում ի հայտ է բերում առանձին գոյություն ունեցող ընկալման մակարդակ, սակայն վերջինս իր հիշողության մեջ ամփոփում է նախորդ և ապագա իմաստավորումների բոլոր հնարավորությունները» (4-182):

Այս մեջբերումն արժևորվում է առնվազն երկու տեսանկյունից: Այն կարևորում է գեղարվեստական հաղորդակցության հասցեատիրոջ դերը՝ վերջինիս դիտելով որպես ստեղծագործող, արարող էություն: Միաժամանակ շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ յուրաքանչյուր ընկալում ստեղծում է իր որոշակի

իմաստների մակարդակը, որն այդուհանդերձ դիտվում է իբրև բոլոր հնարավոր ընթերցումների ներուճակություն:

Բազմաձայնության երևույթն իր արտահայտությունն է գտնում կառուցվածքային իմաստաբանության շրջանակներում: Յնարավոր է դառնում գեղարվեստական տեքստի ընկալումը բացատրել այսպես կոչված «ազատ» իմակների գոյությամբ, որոնք կրկնվելով բանաստեղծական խոսքի տարբեր իմաստային միավորներում ստեղծում են համարժեք իմաստաշարեր: Նման իմակներն ունակ են գործելու որպես բանաստեղծական պատկերները համակարգող դասույթների գերիմույթների կազմում՝ ստեղծելով ստորակարգված իմաստային կառույցներ: Վերջին հանգամանքը թույլ է տալիս ասելու, որ «բանաստեղծական հաղորդակցությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ համաստորադասության (տաքսիդոմիայի) խոսքաշարային դրսևորում» (1-136):

Իմաստաբանական վերլուծությունն, այսպիսով, ենթադրում է տարբերակիչ իմաստաշարերի հայտնաբերում և մեկնաբանություն: Ստորակարգված համատեքստի հայեցակետը թույլ է տալիս տեքստը դիտարկել իբրև փոխկապակցված համատեքստերի կառույց-համակարգ, որտեղ առկայացվում են ուսումնասիրվող իմույթների առանձին իմակներ և առաջացնում բանաստեղծական պատկերների համակցված դաշտեր: Այս տեսանկյունից դիտարկենք Vent իմույթի առկայացման հնարավորությունները Սեն-Ջոն Պերսի «Քամիներ» պոեմի հետևյալ հատվածում:

”C’étaient de très grands vents sur toutes faces de ce monde,

De très grands vents en liesse par le monde, qui n’avaient d’aire ni de gîte,

Qui n’avaient garde ni mesure, et nous laissaient hommes de paille,

En l’an de paille sur leur erre... Ah! oui, de très grands vents sur toutes faces de vivants!...

... Sur toutes choses périssables, sur toutes choses saisissables, parmi le monde entier des choses”.

Հասկացական մակարդակում տրոհվելով air և mouvement բաղադրիչների՝ Vent իմույթը համատեքստային պլանում հաղորդում է ուժգնության, ցնծության, թափառականության, անհագության, անհոգության, ամենուր լինելու հատկության իմաստներ, կազմելով իմույթի հարատեքստային իմակային միջուկը: Այս իմույթին վերագրվող հատկանիշները արձանագրվում են հնչյունափոխադասության մվազագույն կառույցներում, որպիսիք են՝

1. très grands vents (ուժգնություն)

2. vents en liesse (ցնժություն)
3. qui n'avaient d'aire ni de gîte (թափառականություն)
4. qui n'avaient garde ni mesure (անհագություն)
5. sur toutes faces de ce monde } (ամենուր լինելու հատկություն)
- sur toutes pistes de ce monde }

Իմակային միջուկն ընկալման ընթացքում կարող է համալրվել նոր բաղկացուցիչ տարրերով՝ հարատեքստային և համատեքստային իմակներով, ինչը հանգեցնում է բառույթի անդադար «ընդարձակմանը» բովանդակության սուբստանցի մակարդակով:

Լեզվաբանական նշանը, բանաստեղծական տեքստում ի սկզբանե ազատված լինելով որևէ օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկայի կամ երևույթի վերաբերելու պարտականությունից, վերածվում է միջուկային փոխակապակցված ինքնանշանի, որը պատկանում է միայն բանաստեղծական հաղորդակցության անդամներին: Ընկալումը նման պայմաններում ինքնաբերաբար տեղի է ունենում հարատեքստային զուգորդումների շնորհիվ, երբ իմույթի բաղկացուցիչ իմակները փոխակապակցվում են ներտեքստային այլ իմույթների իմակների հետ՝ ստեղծելով ընկալման ներունակային մակարդակ:

Օրինակ՝ sur toutes faces de ce monde  
sur toutes faces de vivants  
sur toutes choses périssables

Նշված կառույցներում Vent իմույթին վերագրվող հատկաճիշները փոխադարձաբար լրացնում են իրար և հակադրվում Homme իմույթին, ստեղծելով հարատևություն / անցողիկություն, գերմարդկային / մարդկային երկատումները:

Տվյալ երկատումն արդարացվում է նաև "Et d'éventer l'usure et la sécheresse au coeur des hommes investis..." տողում, "Vent" իմույթին հաղորդելով նորոգման առաքելության լրացուցիչ նշանակություն: Խիստ հետաքրքրական է դիտարկվող իմույթի ընկալման համար "le goût de paille" փոխաբերության նշանակությունը "ils (les vents) produisaient le goût de paille" հարատեքստում: Իմաստաստեղծումը կարող է կատարվել զուգորդվելով հետագայում հնչող "le goût de sécheresse" և "homme de paille" շարույթների հետ համակցման միջոցով: Առաջին դեպքում իմաստաստեղծումը կատարվում է sécheresse իմույթի շնորհիվ, որն ի թիվս այլ զուգուրդումների կարող է նշանակել «ծերություն»՝ առկայացված վերը նշված "usure et sécheresse" պատկերի միջոցով: Նշենք նաև, որ sécheresse իմույթի «աշուն, արև, տապ, երաշտ, ծարավ» և բազմաթիվ այլ իմակներ

նշված հարատեքստում մնում են դեռևս ներունակային մակարդակում:

Երկրորդ համակցման դեպքում “*le goût*” ինույթը կարող է առկայացնել “*langue*” ներունակային իմակը: Արդյունքում կստանանք հետևյալ տարբերակիչ իմաստաշարը.

Vent → *goût de paille* → *langue de paille* → *mutisme*

”*Mutisme*” ներունակային իմակը իր բացահայտ արտահայտությունն է ստանում հետագայում հնչող տողերում.

”*Je t’interroge, plénitude! – Et c’est un tel mutisme...*”

”...*De hautes pierres dans le vent occuperaient encore mon silence...*”

Բացահայտված իմաստաշարը կարող է հակադրվել Vent → *foi* → *inspiration poétique* իմաստաշարին, քանի որ պոեմում առկայացվող “*aile du Vent*” նվազագույն կառույցում “*aile*” ինույթը ենթադրում է “*ange, esprit, vol, vitesse, oiseau...*” ներունակային իմակների հարացույցը կամ ընտրության առանցքը, որից կարող է առանձնացվել “*esprit*” իմակը և ստեղծել հավատի ու ներշնչանքի նշանակումներ պոեմի հետևյալ տողերի ընկալման ընթացքում:

”*Et contre les sollicitations du doute, les exactions de l’âme sur la chair*

*Nous tiennent hors d’haleine, et l’aile du Vent soit avec nous!*”

Շարունակելով “*Vent*” ինույթի ուսումնասիրությունը կանգ առնենք “*Je mènerai au lit du Vent l’hydre vivace de ma force.*” տողի վրա: Այս դեպքում ուսումնասիրվող ինույթը իմաստավորվում է *lit du Vent* և *l’hydre de ma force* շարույթների համատեքստում: Ակնհայտ է, որ *lit* ինույթի իմակային հարակարգում տեղ են գտնում այնպիսի իմակներ, ինչպիսիք են՝ ծնունդ կամ միություն “*mariage*” բառի ամենալայն ըմբռնումով, միևնույն ժամանակ առկա է *հուն* – ջրի, գետի հուն իմաստը: Այս անգամ Vent ինույթը միահյուսվում է Eau ինույթի հետ, որոնց կապող իմակը “*mouvement*” (շարժում) իմակն է: Vent ինույթի արդեն առկայացած *Esprit* իմակը իր հաստատումն է ստանում միահյուսվելով Eau ինույթի հետ, որը դիցաբանական մտածողության նախատիպերի համատեքստում կանացիության, ոգեղենության մարմնացումն է: Արդյունքում հնարավոր է դառնում

Vent → Eau → *Naissance* → *Féminité*

փոխակերպումը, որը վկայում է Vent և *Féminité* ինույթների հոգեբանական ընդհանուր կենտրոնի մասին: Պատկերը ամբողջացնելու համար դիտարկենք *l’hydre de ma force* շարույթը: “*Hydre*” ինույթը բաղկացած է հետևյալ իմակներից՝

- *eau* - (տես՝ *հուն*. *hudra* – *hudôr* = *eau douce*)

- *serpent* - (վիշապ), որն իր հերթին տրոհվում է

ա/ վերածնունդ (տես՝ hydre de Leme - դիցաբանական կերպարը)  
բ/ վերականգնվող կամ հարատևող վտանգ իմակների:

Վերջին նշանակցումը թույլ է տալիս աղերսներ արձանագրել Vent, hydre իմությունների և Je դերանունով արտահայտված «բանաստեղծական ես –ի» միջև հարատևություն ներունակային իմակի շնորհիվ:

Vent → hydre → Eau → Je

տարբերակիչ իմաստաշարը հնարավորություն է ստեղծում ընկալել «բանաստեղծական ես –ը» իբրև ինքնավերարտադրվող, ինքնավերակերտվող մի էություն:

Արձանագրելով, այսպիսով, *esprit renaissant* հոգեբանական կենտրոնը, մենք հնարավոր ենք համարում *esprit agressif* կամ *esprit infernal* տարբերակները:

*Renaissant* և *infernal* իմաստային բաղադրիչների ընթերցումը հնարավոր է դառնում l'hydre de ma force շարույթի հարատեքստում, որն ի թիվս վերոհիշյալ իմակների ներունակային մակարդակում, հիմնվում է «eau douce» իմաստային միավորի վրա:

Վերադառնալով հողվածի սկզբում արձանագրված

très grands vents

sur toutes faces de ce monde

qui n'avait garde ni mesure

շարույթներին, կարող ենք փաստել *immensité* համակցող իմակի գոյությունը: Միաժամանակ “goût de paille”, “homme de paille” շարույթները շաղկապվում են “Sécheresse” իմույթին, որը sécheresse = désert արտատեքստային զուգորդման շնորհիվ կարող է ոչ բացահայտ մակարդակում ներառել “immensité” իմաստային բաղադրիչը: Այս դեպքում

Vent → Sécheresse → Destruction → Mutisme → Mort →

Immensité

իմաստային համարժեքությունը հակադրվում է

Vent → Eau → Mer → Silence → Naissance → Immensité

համարժեքությամբ, որտեղ Immensité բաղադրիչը ստանում է դասույթի կարգավիճակ, օժտելով mutisme և silence միավորները հակադրվող արժեքաբանական իմաստներով: Սակայն ընկալման թվացյալ հակադրությունն իր լուծումն է գտնում Sécheresse → Désert → Immensité և Eau → Mer → Immensité համակցումների շնորհիվ, ուր Immensité բաղադրիչը գործում է ոչ միայն որպես ներակա գերիմույթ, ներառելով և ստորադասելով Vent, Eau, Mer, Sécheresse միավորները, այլ նաև որպես համակցող իմակ, ընկալվելով իբրև հիշյալ իմույթների բաղադրիչ տարր:



Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող իմաստային միավորները գտնվում են փոխադարձ և փոխադարձ կախվածության մեջ՝ ստեղծելով իմաստային բազմաձայնություն: Այն իր հերթին փոխարկելիության հարաբերություններ է հաստատում միաժամանակ գործող իմաստային ստորակարգության և համարժեքության առանցքների միջև: Իմաստային ստորակարգության ամենավերին սանդղակին գտնվող գերիմությունը (Immensité, Je), ներառելով ստորին մակարդակի միավորները, ունակ են դրանց միջև իմաստային համակցումների արդյունքում համարժեքություններ հաստատել՝ ապահովելով բանաստեղծական խոսքի ընկալման յուրահատկությունների դրսևորումը բազմաձայնության բաց համատեքստում:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. A.J.Greimas "Sémantique structurale", Paris, 1966
2. Է.Ռ.Աթայան «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը», Երևան, 1981
3. Э.Г.Аветян "Смысл и значение", Ереван, 1979
4. Ю.М.Лотман "Структура художественного текста", Москва, 1970
5. Saint-John Pers "Vents", Paris, 1975



**ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՑ ԱԾԱՆՑՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ  
ՀՈՄԱՆԻՇՆԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հոմանիշությունը դրսևորվում է լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակներում, այդ թվում նաև ձևաբանության, որի միավորներից են ածանցները, որպես բառակազմական ձևաբանություններ: Հոմանիշության ընդհանուր սահմանումն ածանցների համար էլ լիովին կիրառելի է: Հոմանիշ են համարվում այն ածանցները, որոնք իրենց արտահայտած բառակազմական նշանակությամբ մոտ են /հարաբերական հոմանիշներ/ կամ նույնական /բացարձակ հոմանիշներ/: Հինք ընդունելով վերը նշված սահմանումը՝ անգլերենում և հայերենում սահմանազատել ենք բառակազմական միջառոտ կաղապարներ, որոնք կազմում են բառակազմական ընդհանուր և մասնակի իմաստային շարքեր և այդ ընդհանուր իմաստների մեջ ունեն տեսակային որոշակիացումներ: Հարկ է նշել, որ ածանցավոր բառերի կաղապարների շարքում բառակազմական հոմանիշությունը դրսևորվում է տարբեր զուգորդումներով: Դա առավել հատուկ է հայերենի բառաածանցմանը: Այսպիսի հնարավոր զուգորդումներից են նույն նախատիպի վրա դրվող հոմանիշ ածանցների զուգորդումը.

հայերենում՝ *զվարճանք-զվարճալիք*,

անգլերենում՝ *healthatorium – healthateria*:

Բացի այդ, նույնափունք ածանցավոր բաղադրություններում ածանցները կարող են որպես հոմանիշներ հանդես գալ տարբեր դիրքերում.

ա. նախածանցը հոմանիշ է վերջածանցին *անպոչ- պոչատ* unhelpful- helpless,

բ. հոմանիշ ածանցներով կազմված դասերի հոմանիշություն. *անխղճաքաղ* - *անզթորեն*, unfaithful – dishonest,

գ. բառի և նրանցից ածանցված բաղադրության հոմանիշություն. *դրոշ- դրոշակ*, topic- topical,

դ. ոչ հոմանիշ նախատիպերից հոմանիշ ածանցներով բաղադրված բառերի հոմանիշություն.

*մացառուտ- թավուտ*, *pointless- useless*:

Յոդվածում հիմնականում նկատի ենք ունեցել գոյակա-  
նակերտ ածանցների հոմանիշային շարքերը՝ հետևյալ բառակազ-  
մական նշանակություններով. ա) որակի, հատկանիշի և վիճակի  
անվանում, բ) գործողի անուն, գ) գործողության անվանում, դ)  
առարկայականություն, ե) տիտղոս, կոչում, պաշտոն և սոցիալա-  
կան պատկանելություն, զ) նվազականություն, փաղաքշանք,  
է) նվաստականություն, արհամարհանք:

I. «Որակ, հատկանիշ և վիճակ» վերացական բառակազ-  
մական նշանակությունն անգլերենում մեծ մասամբ արտա-  
հայտվում է -ness, -ity, -acy, -aty, -hood, -or, -ion, ence/ance, -th,  
-ude, -ism, -dom վերջածանցներով: Այս շարքում է, որ առավե-  
լագույնս դրսևորվում է բառակազմական հոմանիշությունը: Շարքի  
առավել մանրամասն նկարագիրը հետևյալն է.

-th

broadness/breath-լայնություն, լայնք

Այս վերջածանցն արտահայտում է հատկանիշ, որակ,  
վիճակ, դրվում է գլխավորապես ածականների, նաև այլ խոսքի  
մասերի հիմքերին: Յայերենում նույն նշանակություններն արտա-  
հայտում են *-ություն*, *-ք*, *-ույթ*, *-անք* վերջածանցերը ածական  
հիմքի վրա դրվող կաղապարներով: Բերված շարքում -th վերջ-  
ածանցը հոմանիշային սակավ դրսևորում ունի:

-ity

paucity

անբավարարություն

պակասություն, սղություն

acidity - թթվայնություն,

թթվություն,

sourness - թթվություն, թթվայնություն:

-acy—ություն,անք

intimacy - մտերմություն, familiarity-մտերմականություն, arro-  
gancy/arrogance - մեծամտություն, ինքնահավանություն, delicacy-  
նրբանկատություն, ուշադրություն tenderness-քնքշանք, նրբանկա-  
տություն, ուշադրություն, զգայունություն, հոգատարություն:

Այս շարքում ևս ակնառու է -acy և -ity վերջածանցներով  
բառակազմական շարքերի հոմանիշությունը՝ հայերենի *-ություն*,  
երբեմն նաև *-անք* վերջածանցներով բառակազմական շարքերի  
հարաբերակցությամբ «հատկանիշ» բառակազմական նշանակու-  
թյամբ:

-ace վերջածանցը հատկանշական չէ վերացական բառակազմական նշանակությամբ ածանցավորների համար, այնպես ինչպես՝ doctorate - դոկտորական աշխատություն է:

-or/ior-ություն, fulgor/dazzling brightness, splendour- կուրացուցիչ պայծառություն, dom-ություն, wisdom-իմաստություն ude-ություն, multitude/greatness (of number) բազմաթվության «վիճակի» բառակազմական նշանակությամբ:

-ion և -ence վերջածանցները գրեթե չեն դրսևորում բառակազմական հոմանիշություն երկու լեզուներում էլ:

union- միություն, opinion- կարծիք, session - /նիստ/, հավաք, խորհրդակցություն, /նստաշրջան/, existence - գոյություն, indifference- անտարբերություն:

-ism վերջածանցն արտահայտում է «որակ կամ հատկանիշ» և վիճակ, ինչպես՝ objectivism - /օբյեկտիվիզմ/, blackguardism – ստորություն , սրիկայություն

Վերջին երկու բառերում «հատկանիշ» բառակազմական նշանակությունը զուգորդված է «նվաստական, արհամարհական» նշանակությամբ:

-asm/-ism զույգը հանդես է գալիս «վիճակի և հատկանիշի» ընդհանուր նշանակության շարքում, ինչպես նաև «զաղափարախոսությունների, տեսությունների»իմաստային կոնկրետացումով բառերի շարքում՝ enthusiasm - խանդավառություն:

– t/-th վերջածանցով բառերի շարքում, ինչպես՝ growth- աճ, flight- թռիչք, -t/-th ածանցներին համադրելի են –ություն և -ք վերջածանցները:

Այսպիսով, անարտադրողական ածանցները բառակազմական հոմանիշություն գրեթե չեն դրսևորում, իսկ երկու լեզուները համադրելիս անգլերենի հիշատակված շարքի վերջածանցները, լինելով անհամեմատ ավելի գործածական, հարաբերակցվում են հայերենի -ություն, -ում, -ույթ, -ույք, -անք, -ք վերջածանցների հետ, որոնցից ամենամեծ հաճախականությունն ունի -ություն ածանցը:

Յետաքրքրական է այն հանգամանքը, որ երկու լեզուներում էլ «վերացական» բառակազմական նշանակությամբ շարքերում ածանցավորները մեծ մասամբ ածականի հիմքից ածանցված բառեր են, չնայած լեզուներից որևէ մեկում լինում են նաև բայի կամ գայականի հիմքով ստեղծված կաղապարներ, ինչպես՝ A+ suf enthusiasm- խանդավառություն, freedom - ազատություն V+suf կամ N+ suf opinion- կարծիք, matrydom – նահատակություն:

«վերացական» բառակազմական նշանակությամբ կաղապարները հայերենում կազմվում են հիմնականում -ություն, -ում,

-ույթ, -այք, -անք, -ք, վերջածանցներով: Ըստ որում, ինչպես նկատելի դարձավ նկարագրությունից, -ություն-ը գերակշռում է՝ արտահայտելով «որակ», «վիճակ», «հատկանիշ» ընդհանուր վերացական բառակազմական նշանակությունը՝ հանդես գալով մի քանի մասնակի բառակազմական նշանակությամբ շարքերում:

«Հատկանիշի անուն» բառակազմական նշանակությամբ՝ *ընկերականություն, ցուցադրականություն, իրականություն:*

«Գործողություն կատարելու ունակություն» մասնակի բառակազմական նշանակությամբ՝ *գործնականություն, կշռելիություն, լսելիություն, ընկալելիություն:*

«Վիճակի անուն» բառակազմական նշանակությամբ՝ *կտրրվածություն, կաշկանդվածություն, լարվածություն:*

Հարկ է նշել, որ հայերենում շատ են –ություն վերջածանցով բարդածանցավոր բաղադրյալները: Ինչպես՝ *ընչազրկություն, զթասրտություն, գունագեղություն* և այլն:

Լինելով արդի հայերենի ամենագործուն ածանցը՝ -ություն-ը մասնակցում է հոմանիշային բազմաթիվ շարքերի կազմությանը:

-ություն/ -ուկ հոմանիշությունը առկա է հիմնականում մասնագիտական տերմինաբանության մեջ. *կարմրություն - կարմրուկ:*

-ություն/ -ուկ հոմանիշային շարքերում ածանցները միանում են բայական հիմքերի հետ. *առարկություն - առարկում, ահաբեկություն - ահաբեկում:*

Համեմատաբար քիչ են -ություն/ -ույթ և այլ զույգերով հոմանիշները, ինչպես՝

*բնություն - բնույթ ավանդություն - ավանդույթ:*

**-ություն/ -ույթ -անք.** *կահավորություն- կահույթ – կահավորանք,*

**-ություն/ -ունք.** *իրավասություն- իրավունք,*

**-ություն/ -ուրդ, -որդ.** *բավարարություն - հագուրդ:*

Վերը նկարագրվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ թե՛ անգլերենում, թե՛ հայերենում մեծաթիվ են վերացական հատկանշային բառակազմական նշանակությամբ ածանցավոր բառերը:

II.«Գործողի անուն» բառակազմական նշանակությամբ վերջածանցներով շարքը անգլերենում ներկայացվում է հետևյալ օրինակներով.

-er/-or spectator –հանդիսատես,

-at/-ate diplomat –դիվանագետ magistrate-դատավոր,

-ary prebendary-կաթոլիկական եկեղեցական կոչում,

-ard /-er steward/ waiter-ստյուարդ/մատուցող (մավում կամ օդանավում),

- ant/ -ent resident/ in habitant- բնակիչ,
- y/-ie dominie -դպրոցի տնօրեն,
- ee examinee –քննվող/ը/,
- ist biologist-կենսաբան,
- ess murder- ess-կին մարդասպան,
- ienne comedienne - կատակերգակ դերասանուհի:

Եկարագրված օրինակներից ակնհայտ է, որ «գործողի անուն» նշանակությամբ շարքում անգլերեն ու հայերեն համար- ժեքները բառակազմորեն միայն մասնակիորեն են համապա- տասխանում: Անգլերենի վերջածանցավոր կաղապարները մեծ մասամբ հայերենի բարդ բառերի են համապատասխանում և միայն մասնակի դեպքերում ածանցավորների: Օրինակ՝ -ary վերջ- ածանցը “obedientary” բառում «վանական» ածանցավոր համ- արժեքով, -er/or “collector” բառում «հսկիչ» ածանցավոր համար- ժեքով, -ent-ով բառը «ուսանող» համարժեքով և այլն :

Հայերենում «գործողի անուն» բառակազմական նշանա- կությամբ վերջածանցները հետևյալն են՝ -ան, - ակ, - որդ, - իչ, - որ/ -վոր/- ավոր, - իկ, - ող, - ապան/-պան, -արար, - ու:

- ակ. *խոսնակ* /հաղորդավար, նախագահ/կոչնակ:

Օրինակներից ակնհայտ է - ակ/ող, -ակ/ու, -ակ/վար, -ակ/ իչ զույգերի հոմանիշությունը:

- որդ. *որսորդ, լողորդ, հեծանվորդ, հետնորդ, առաջնորդ,*
- իչ. *նկարիչ, վարիչ, լուսավորիչ, սահիւրիչ, ուսուցիչ, եր- գիչ, փրկիչ,*
- որ, -/ա/վոր. *հնձվոր, դարձվոր, բանվոր, զինվոր, տնվոր, դատավոր, աշխատավոր,*
- ա/պան/ -պան. *շնապան, ծիապան, կառապան, դռնապան, խանութպան,*
- իկ. *շրջիկ, մարզիկ, ռազմիկ,* բարդ հիմքերով՝ *շրջմուլիկ, թափառաշրջիկ,*
- արար. *ներկարար, լվացարար, գյուտարար, փրկարար, խոշովարար:*

Վերջին չորս –որ/, ա/վոր, -ա/պան/-պան, -իկ, -արար վերջածանցներով կաղապարները «գործողությունը կատարողի» բառակազմական կաղապարի ենթակաղապարներն են, որտեղ առկա են «գործողությունը կատարողի զբաղմունք, պաշտոն, ար- հեստ ունեցող» բառակազմական նշանակությունները, ըստ որում, այստեղ- իկ-ով բաղադրյալներում ակնհայտ է -իկ և -ող-ի հոմանի- շությունը, իսկ -արար -ով շարքում նրա հոմանիշությունը -իչ, -ող վերջածանցների հետ միայն առանձին դեպքերում:

- ու. խուզարկու/ խուզարկող, կատակերգու/ կատակերգակ:

Յատկապես բարդ նախատիպերով ածանցավոր բաղադրյալներով հոմանիշային շարքերում են ի հայտ գալիս –ու/ -ող,-ու/ -ակ հոմանիշային զույգերը: Յետաքրքրական է –կան վերջածանցի հոմանիշային հարաբերությունը –կոտ վերջածանցի հետ, մի կողմից՝ *մրսկան/ մրսկոտ քնկան/ քնկոտ*, մյուս կողմից՝ –կան / -որդ զույգը հոմանիշային հարաբերությամբ. *որսկան- որսորդ*:

«Գործողի անուն» բառակազմական նշանակությունը –կան վերջածանցում զուգորդվում է «նվաստական, արհամարհական» իմաստի հետ, ինչպես՝ *մրսկան, լացկան, խռովկան* և այլ բաղադրություններում: Ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է նշել, որ երկու լեզուներում էլ առկա է բառակազմական հոմանիշությունը այնպիսի հարաբերակցությամբ, երբ հայերենի բարդ նախատիպերով բաղադրյալներին համապատասխանում են անգլերենի պարզ նախատիպերով ածանցավորները :

III.«Գործողության անվանման», «գործողության արդյունքի» բառակազմական նշանակությամբ կաղապարներն անգլերենում կազմվում են հետևյալ ածանցներով.

-ure, -ion, -ment, -age, -ance/-ence, -oon

-ure. –«գործողության արդյունք» բառակազմական նշանակությամբ.

expenditure- ծախսեր, fracture-ծակ /կոտրվածք/,

-ion –«գործողության անվանում» բառակազմական նշանակությամբ.

infraction-խախտում, detection –հետախուզում

-ment –«գործողության անվանում» և «գործողության արդյունք» իմաստների զուգորդմամբ.

agreement- համաձայնություն, համաձայնագիր,

arrangement-կարգավորում, դասավորվածություն,

- ance վերջածանցը նույն զուգորդությամբ.

insurance ապահովագրում, ապահովագրություն

resistance - դիմադրում, դիմադրություն, դիմադրողականություն:

Վերջին օրինակում ի հայտ է գալիս նաև երրորդ՝ «վերացական հատկանիշ» իմաստը:

- age վերջածանցը՝ espionage - *լրտեսություն* բառում նույնպես «գործողության անվանում» բառակազմական նշանակությամբ, իսկ portage /տեղափոխում, առաքում/, ferriage /փոխադրում/, leakage /հոսք/, drainage /դրնաժ, չորացում/ բառերում

առկա է «գործողության և նրա արդյունքի» իմաստների զուգորդումը: Նույն զուգորդումն ակնհայտ է նաև -asm վերջածանցով սակավաթիվ բառերում, ինչպես՝ shediasm – հապճեպ, տեղում կատարվող գործողություն, նրա արդյունքը, iconoclas-պատկերամարտություն /կրոն/:

Հայերենում «գործողության անուն» բառակազմական նշանակությունն արտահայտվում է հետևյալ վերջածանցներով.

-ում -*ծգում, հետածգում, հանգում, ժառանգում, խոշտանգում վտանգում, ոռոգում, նորոգում, օծում,*

-անք/ -յուն հոմանիշային զույգը ևս հաճախ արտահայտում է «գործողության անուն» բառակազմական իմաստը. *տրտնջանք/ տրտնջյուն*

-ում ածանցը ևս որոշ դեպքերում հոմանիշ է դառնում նախորդ զույգին, ինչպես՝ *գեղգեղանք-գեղգեղյուն-գեղգեղում ջախջախանք-ջախջախում* շարքերում,

-անք/ -նունք վերջածանցներն ունեն «գործողության անուն», ինչպես նաև «գործողության արդյունք» բառակազմական իմաստներ. *աշխատանք, նազկտանք, սեթևեթանք, պարապմունք, զբաղմունք, սխալմունք:*

«Գործողության արդյունք» բառակազմական նշանակությունն ունեն նաև - վածք, - ակ/ -ում, -իք/ -ում ածանցները:

-վածք- *ճեղքվածք, բացվածք, նայվածք, պատմվածք,*

-ակ/ -ում- վրիպակ –վրիպում,

-իք/ -ում- *կեղծիք- կեղծում,*

Վերջին երկու հոմանիշային շարքերում – ում վերջածանցը հանդես է գալիս «գործողության անուն» և «գործողության արդյունք» իմաստների զուգորդությամբ:

-ոց ածանցն արտահայտում է «բնածայն գործողության անուն» իմաստը. *բզզոց, քրթմնջոց:*

-անք/ոց/ յուն վերջածանցների հոմանիշության մասին են վկայում *հեծկտանք/ հեծկտոց, բլբլոց/ թոթովանք* շարքերը:

Այս դեպքերում - անք-ը հոմանիշային հարաբերության մեջ է գտնվում – ություն ածանցի հետ . *հակակրանք - հակակրություն:*

Վերջինս, ի դեպ, բազմանդամ շարքերից ամենագործունն է: Կա նաև -անք -ք զույգը, ինչպես՝ *բանադրանք - բանադրություն - նզովք* շարքը.

-անք-ութ-ունք-ք

*փշուրք-փշրունք-փշրութ-փշրանք* և այլն:

Ավելի սականաթիվ են՝

-ունք-եղեն. *համենունք-կանաչեղեն,*



-անք-ինք. փականք-կողպեք,

-անք-ինք. բանադրանք- նախատինք և այլն:

-անք վերջածանցով հոմանիշային զույգերով կազմված շարքեր են նաև նույնահիմք՝ *սադրանք-սադրում* և տարահիմք՝ *գարհուրանք- տուկում*:

«Գործողության արդյունք» իմաստով հոմանիշային շարքեր են կազմում

-անք/-ունք. *տականք,*

-անք/-ուկ. *տականք-ավելցուկ,*

-անք/- որդ. *տականք-մնացորդ* զույգերը:

Ավելի մեծ հոմանիշային շարք են կազմում -անք-ուք-ոն-որդ- ուրդ-ուք վերջածանցները. *տականք* /ավելցուկ/ *մնացուկ* /թափուկ/ *թափոն* /մնացորդ/ *փշրանք* /մանք/ *փշուր*:

Հոմանիշային այլ զույգեր, ինչպես՝ -անք/-ունք. *մտմտանք- մտորմունք, փշրանք-փշրունք* և «գործողության արդյունքի» իմաստ են արտահայտում: «Գործողության արդյունքի» նշանակություն ունեն նաև -անակ, -վածք, -ք, -իք, ածանցները. *մրցանակ, վայելք, կեղծիք*:

Ընդհանրացնելով «գործողության անուն», «գործողություն կատարելու գործիք, միջոց», «գործողության արդյունք» բառակազմական նշանակությամբ ածանցավոր շարքերի նկարագիրը հայերենում՝ պետք է նշել թե՛ ածանցների մեծաթվությունը, թե՛ գործողությունը, վերջինիս շնորհիվ նաև հոմանիշության զարգացումն այստեղ:

IV.«Առարկայականություն» բառակազմական նշանակությամբ վերջածանցները անգլերենում հետևյալն են.

-ment, -ure,- age, -ion, -let, -um/ium, oon

-ment pavement- մայթ,

-ure architecture- ճարտարապետություն,

-age heritage- ժառանգություն,

-ion foundation- հիմք,

-let partlet-օձիք /հագուստի/,

-um/-ium titanium- տիտան /քիմ. տարր/,

-oon saloon- սրահ,

«Առարկայականություն» բառակազմական նշանակությամբ վերջածանցների նկարագրից ակնհայտ է, որ թեև դրանք գործում են, այնուամենայնիվ նրանց հատուկ չէ բառակազմական հոմանիշությունը, իսկ հայերենում նրանք իրենց գտնում են թե՛ պարզ, թե՛ բարդ բառերի կամ բառակապակցությունների միջոցով, ավելի քիչ նաև -ություն –ուն -ակ –ուրդ -ոց –ք և այլ վերջածանցավոր

բառերով: Անհրաժեշտ ենք համարում նաև հիշատակել այն հանգամանքը, որ նկարագրված ածանցներով շատ բառեր էլ կան, որտեղ «առարկայական» իմաստը այլ բառակազմական իմաստների հետ զուգորդված է հանդես գալիս, օրինակ՝ -age ածանցով – espionage, patronage բառերը բացի «գործողություն» իմաստից նաև «առարկայականություն» են արտահայտում: Այսպիսի իմաստային զուգորդումը հատուկ է հատկապես այն ածանցներին, որոնք թե՛ գործողության անվան, թե՛ գործիքի կամ արդյունքի իմաստ են արտահայտում.

-ion - demonstration, translation,

-ment - government, agreement,

-ure - pressure, magistrature,

Նույն առանձնահատկությունը կարելի է վերագրել շատ այլ ածանցավոր գոյական բառերի «առարկայականություն» բառակազմական նշանակությանը: Ինչպես ակնհայտ է «գործողության արդյունք» բառակազմական նշանակությանը ածանցավոր շարքերի նկարագրությունից, հայերենում նույնպես ի հայտ է գալիս իմաստային զուգորդում «առարկայի» բառակազմական նշանակության հետ: Օրինակ՝ -ուկ, -վածք ածանցներով կազմված բառերում. *կապուկ, հեղուկ, հյուծվածք* և այլն: Ժամանակակից հայերենում -ուկ -ով առարկայականությունն առկա է տերմիններում.

բժշկական և քիմիական տերմիններ՝ *խոզուկ, կարմրուկ, գյուղատնտեսական տերմիններ՝ թերհնձուկ, թերվարուկ, տեխնիկական տերմիններ՝ ներդրուկ, թափուկ, բուսանուններ և կենդանիների անուններ՝ դաշտավուկ, հազարոտնուկ,*

-ուկ ածանցը բարբառային - խոսակցական է :

-ույկ ածանցը պահպանված է գործածական մի քանի բաղադրություններում, ինչպես՝ *խարույկ, պարույկ, գրքույկ*: Վերջին բառում ածանցն ունի նաև նվազական նշանակություն:

-ույցը հակում ունի օգտագործվելու տեխնիկական գրականության մեջ, ևս «առարկայի» նշանակություն ունի. *մատույց, կառույց, ազույց*:

-ույք-ը մի քանի գործածական բառերում է հանդես գալիս. *կահույք, հաճույք*:

-ունդ ածանցով արտահայտվում է «առարկայի» իմաստը . *անունդ, ծնունդ* բառերում, որոնցից վերջինում առկա է «գործողության արդյունք» իմաստը:

-ուտ ածանցով կազմվում են մի քանի քիմիական տարրերի անուններ, ինչպես՝ *թթվուտ, անջրուտ*: Այսպիսով, թե՛ անզլերենում,

թե՛ հայերենում բազմաթիվ են «առարկայականության» իմաստով վերջածանցավոր բառերը, ըստ որում դրանցում հաճախ առարկայական իմաստը զուգորդված է այլ բառակազմական իմաստների հետ:

V.«Տիտղոսի, պաշտոնի և սոցիալական պատկանելության» բառակազմական նշանակությամբ կաղապարներ են կազմվում հետևյալ վերջածանցներով. – ship, -ette, -ity/ -ty, -acy, -dom, -hood, -age:

- ship                      premiership – *վարչապետություն, վարչապետի պաշտոն, speakership – խոսնակի պաշտոն*
- ette                        baronette - *բարոնուհի:*
- ity/ - ty                deputy – *տեղակալ,*
- cy/ -acy                abbacy- *աբբայություն,*
- dom                      dukedom- *դքսություն, դքսի տիտղոս ունենալը,*
- hood                     priesthood – *քահանայի պաշտոն,*
- age                        orphanage – *որբություն:*

Ակնհայտ է, որ – dom, - hood, - age վերջածանցներով բառերում առկա է «առարկայության» իմաստների զուգորդումը: «Տիտղոսի, պաշտոնի և սոցիալական պատկանելության» բառակազմական նշանակությամբ ածանցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերենի այդ ածանցավոր բաղադրությանը մեծ մասամբ համապատասխանում են հայերենի բառակապակցությունները և միայն մասամբ՝ ածանցավորները՝ հիմնականում **-ություն** ածանցով: Հայերենում որևէ պաշտոնում պաշտոնավարելը արտահայտվում է **-ություն** ածանցով, ինչպես՝ *դիրեկտորություն, դեկավարություն*, կրոնական տերմիններից՝ *կաթողիկոսություն, քահանայություն*, «կոչում և աստիճան» բառակազմական նշանակությամբ՝ *դոկտորություն, թեկնածություն* և այլն: Պետք է նշել, որ հայերենում նույնպես նշված իմաստները կարող են ուղեկցվել «հավաքականություն» նշանակությամբ:

**-ունի** ածանցը ևս հատուկ է այս շարքին իր «տոհմին, սոցիալական խմբին հատուկ անձնավորություններ» իմաստով, ինչպես՝ ծերունի:

**-ուչ** ածանցը իր «պաշտոնի» իմաստով ներկայանում է *տեսուչ* բառում: Ակնհայտ է, որ նկարագրված ածանցները հայերենում ավելի սակավաթիվ են, քան անգլերենում:

VI.«Նվազական փաղաքշական» բառակազմական նշանակությամբ վերջածանցների շարքը անգլերենում ներկայանում է. –ule, –ette, –kin, –let, –ling, –ock, – y(ie), –ish վերջածանցներով կազմված կաղապարներով:

- ock hillock- *բլրակ* bullock- *ցլիկ*,

- kin lambkin- *գառնուկ* princekin- *արքաորդի*,

- ie laddie- *պատանեկիկ* doggie- *շնիկ*, girlie- *աղջնակ*,

- ule globule- *գնդիկ*,

- ette pianette- *փոքրիկ դաշնամուր*,

- ish hardish- *մի քիչ դժվար*:

Այս շարքում առկա է սաստկական - փաղաքշական իմաստը:

-ling kidling- *մանկիկ*,

-let booklet- *գրքուկ*:

Նկարագրությունից ակնհայտ է, որ «նվազական, փաղաքշական» շարքի ածանցավոր բառերը երկու լեզվում համադրելի են ըստ կաղապարների: Անգլերենի նշված վերջածանցներն արտահայտվում են հայերենի **-իկ, -ակ/յակ, -ուկ/ -ույկ** ածանցներով: Հայերենում «նվազական» բառակազմական նշանակությամբ վերջածանցներն են՝ **-իկ, -ակ/-յակ, -ուկ/-ույկ**:

**-ակ**-ը ցույց է տալիս նախատիպ գոյականի ֆիզիկական փոքրությունը, ինչպես՝ *տուն- տնակ գետ-գետակ*:

**-յակ** - *լուսնյակ, հարսնյակ* /բոժոժ/, *ամուսնյակ*, ուր առկա է փաղաքշական իմաստը: Պետք է նշել, որ **-ակ**-ով ածանցված հին բաղադրություններում նրան **-իկ** ածանցն է փոխարինում՝ *մկնիկ, սփռոցիկ*: **-ակ**-ով այլ բաղադրություններում վերջածանցի նվազական նշանակությունը հաճախ փաղաքշական երանգ է ստա-

նում, ինչպես՝ *որդյակ, պատանյակ, կղզյակ* և այլն: **-իկ**-ով այլ օրինակներում ևս «նվազականին» ավելանում է «փաղաքշական»-ը, ինչպես՝ *դատրիկ, քույրիկ*: Այս շարքի ածանցավոր բառերում նկատվում է նաև իմաստային այլ տարբերակում: **-իկ, -ուկ** վերջածանցով բառերում երբեմն նաև նվաստական - արհամարհական իմաստ է ավելանում, օրինակ՝ *մարդուկ*:

Ուսումնասիրված օրինակներից ակնհայտ է դառնում, որ անգլերենում կարելի է առարկայի իմաստի «փոքր, նվազական և նվաստական, արհամարհական» իմաստային երանգները սահմանազատել. դրանք առանձին ածանցավոր շարքերում են արտահայտվում: Օրինակ՝ առարկայի փոքր բառակազմական նշանակությունն արտահայտվում է հետևյալ վերջածանցներով. *-ule, -ee, -ette, -kin, -let, -ling, -ock, -y, -ie*, իսկ արհամարհական արտահայտվում է առանձին ածանցներով, ինչպես՝ *-ish, -id, -ard, -aster, -een, -ling, -oon, -ster, -ism, -dom*, մինչդեռ հայերենում նույն ածանցը կարող է «նվազականի» հետ ներառել նաև «արհամարհական» երանգը իմաստային փոխաբերական անցումներով: Օրինակ՝ *գրչակ* բառի իմաստն արտահայտվում է «հեղինակություն չունեցող» արհամարհական երանգով իմաստների զուգորդմամբ:

VII. «Նվաստական, արհամարհական» բառակազմական նշանակությունը ներկայացվում է հետևյալ ածանցների միջոցով.

*-ard dastard- վախկոտ, սրիկա* (*-ard* վերջածանցով բառերը հիմնականում համապատասխանում են հայերենի բարդ բառերի), *-ling middling(a)- միջակություն, changeling(n)- անկայուն մարդ, -een buckeen- երիտասարդ՝ աղքատ ազնվականի ընտանիքից*, որ կարևորում է հարսնությունը, *-oon poitroon- վախկոտի մեկը, pica-roon- խաբերք, -ism babyism(n) -երեխայնություն, blackguardism- ստորություն*: *-dom* ածանցին ևս բնորոշ է «նվաստական, արհամարհական» իմաստային երանգը, թեև սակավ դեպքերում, օրինակ՝ *gangsterdom-gangsterism, attoredom- attoreysm* /որպես գաղափարախոսություն/ օրինակներում ակնհայտ է «նվաստականի» և «հավաքականի» իմաստային զուգորդումը: «Նվաստական, արհամարհական» բառակազմական նշանակությամբ վերջածանցավոր կաղապարները բառակազմորեն մասնակի համապատասխանություն են դրսևորում դրանց հայերեն համարժեքների հետ: Վերջիններս, մասամբ բարդ բառերի կաղապարների հետ են հարաբերակցվում, մասամբ էլ բառակապակցությունների: Հայերենում «նվաստական արհամարհական» բառակազմական նշանակությամբ ածանցները շատ չեն: Այդ իմաստը դրսևորվում է **-իկ** և

-ակ ածանցներով կազմված մի քանի բառերում, որոնք գերազանցապես փոխաբերական նշանակություն ունեն: Օրինակ՝ *գրչակ - միջակ* գրող: Ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները կարելի է նշել, որ

1. Երկու լեզուներում էլ կան բառակազմական հոմանիշներ, որոնք լինում են հարաբերական և բացարձակ, ըստ որում բառածանցումը հանդես է գալիս բառակազմական տարբեր զուգորդումներով:

2. Երկու լեզվում էլ առկա են հետևյալ բառակազմական շարքերը.

«որակի, հատկանիշի և վիճակի» անվանում բառակազմական նշանակությամբ,

«գործողի անուն» բառակազմական նշանակությամբ,

«գործողության անվանման», «գործողության արդյունքի» բառակազմական նշանակություններով,

«առարկայականության» բառակազմական նշանակությամբ,

«տիտղոսի կամ կոչման, պաշտոնի և սոցիալական պատկանելիության» բառակազմական նշանակություններով,

«նվազական, փաղաքշական» բառակազմական նշանակությամբ,

«նվաստական, արհամարհական» բառակազմական նշանակությամբ:

3. Այն հայտ է, որ անգլերենում վերջածանցավոր բառերը հիմնականում պարզ նախատիպերով են կազմվում, որոնք հարաբերակցվում են հայերենի կամ բարդ բառերի, կամ բարդ ածանցավոր բառերի հետ:

4. Հայերենի վերջածանցները մասնակցում են մի շարք հոմանիշային շարքերի կազմությանը: Հայերենում ածանցների փոքր քանակով է պայմանավորված այն, որ նույն վերջածանցը, ի տարբերություն անգլերենի, մասնակցում է տարբեր բառակազմական շարքերի կազմությանը՝ դրանով դրսևորելով ածանցների բազմիմաստություն: Օրինակ՝ հայերենի ամենագործուն ածանցներից **-ություն**-ը մասնակցում է նկարագրված գրեթե բոլոր շարքերի բառակազմությանը: **-ություն**-ը «որակի հատկանիշ» վերացական բառակազմական շարքում հարաբերակցվում է բոլոր վերջածանցների հետ, ինչպես *-acy, -ity, -ate, -or/ior, -dom, ude, -ion, -ence, -ism/asm*, նույնիսկ շարքի ամենաքիչ արդյունավետ *th*-ի հետ: Միաժամանակ հայերենի ածանցն առկա է մյուս բոլոր շարքերում, բացի «գործողի անուն» շարքից, իսկ «գործողության անուն» շարքում համեմատաբար քիչ է հանդիպում *-ance*-ով,

-ment-ով, -ion-ով, ավելի քիչ –ure ածանցով շարքերի հետ հարաբերակցվելով:

5. Հոմանիշությունը հատկապես ակտիվ է դրսևորվում երկու լեզուներում «որակի, վիճակի, հատկության, պայմանի» բառակազմական շարքերում:

6. Նույն ածանցը երկու լեզուներում էլ կարող է դրսևորել իմաստային զուգորդումներ:

7. Թե՛ հայերենում, թե՛ անգլերենում միևնույն ածանցները կարող են հանդես գալ տարբեր բառակազմական շարքերում:

### **Օգտագործված գրականության ցանկ**

Зятковская Р.Г Суффиксальная система современного английского языка. М.Высшая школа, 1971,187с

Каращук П.М Аффиксальное словообразование в английском языке. М.Высшая школа, 1971,187с

Мешков О.Д Словообразование современного английского языка. М.Наука, 1976,245с

Царев П.В Продуктивное именное словообразование в современном английском языке М.МГУ,1984,225с

Գալստյան Ս.Ս. Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում.Եր.,1978

Հայոց լեզվի հանգաբառարան

Աշխ. դեկ. Վ. Գրիգորյան

Walker's Rhyming Dictionary of the English Language

London, Routledge and Kegan Paul, 1979



**ՀԱՅԵՐԵՆՈՒՄ \*b, \*b, \*p > ւ (վ, ու) ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԵՐԱ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հնդեվրոպական \*b, \*b, \*p հպական բաղաձայնների փոխարեն հայերենը բառամիջի որոշ դիրքերում ի հայտ է բերում ւ (վ, ու) շրթնային շփական հնչույթը (հմմտ. \*septō- > **եւթն**, \*alñbh- > **աղաւնի**): Բայց հնչյունական նման անցում տեղի չի ունեցել, եթե վերոհիշյալ բաղաձայնները գտնվել են \*r, \*l, \*m ձայնորդների մոտ: Այս փաստը լավագույնս ապացուցվում է հայերենում հնդեվրոպական նախալեզվի գործիական հոլովի \*-bhis վերջավորության արտացոլմամբ: Եթե այն կցվել է ձայնավորահանգ հիմքի, այսինքն՝ \*b-ն հայտնվել է միջձայնավորային դիրքում, ապա այդ հպական բաղաձայնը հնչյունափոխվել է շփական ւ, (վ)-ի (հմմտ. **բանիւ, ամաւ, քնով**), իսկ ձայնորդահանգ հիմքերից հետո դրա հպականությունը պահպանվել է (հմմտ. **գառանբ, հարբ, աստեղբ**) (տե՛ս A.Meillet, 1936, էջ 18):

Ինչպես երևում է, հնչյունափոխություն տեղի չի ունեցել նաև \*s շփականի մոտ (հմմտ. \*sp´r- > **սպառիլ**, \*spōami > **սպառնամ**, \*spel- > **առասպել**) (Գ.Բ.Ջահուկյան, 1987, էջ 150):

Ինչ վերաբերում է հնդեվրոպական ոչ շնչեղ \*b-ին, ապա հետազոտողները հայերենում այդպիսի բաղաձայնի շփականացում չեն արձանագրում (հմմտ. \*steibe- > **ստիպեմ**, \*steibo- > **ստեպ**) (A.Meillet, 1936, էջ 19, Г.Б.Джаукян, 1982, էջ 90-92): Սակայն պետք է նկատել, որ հնդեվրոպական նախալեզվի համար շնչեղ ձայնեղ և մաքուր ձայնեղ հպական բաղաձայններով հնչութային համակարգ կանխադրելու դեպքում \*b-ի գոյության փաստը կասկածի տակ է դրվում, քանի որ դրանով նախաձևեր գրեթե չեն վերականգնվում (տե՛ս, Т.В.Гамкрелидзе, Вяч.Вс.Иванов, էջ 7-12): Այս դեպքում կարելի է ենթադրել, որ այդպիսի ձևերը հայերենում օրենքը դադարելուց հետո ներթափանցած փոխառություններ են:

Հայերենը, այնուամենայնիվ, հարևան լեզուներից կատարած հնագույն փոխառություններում, որոնց մասին կխոսվի ստորև, փոխատու լեզվի b-ի դիմաց նույնպես բառամիջի նշված դիրքերում հայտաբերում է ւ (վ, ու) համապատասխանություն: Ուրեմն՝ օրենքը կարելի է ներկայացնել որպես բառամիջում \*b, \*b, \*p > հայ. ւ (վ, ու) հնչյունափոխություն: Այն գործել է հետևողականորեն և բավա-



կան երկար ժամանակ, քանի որ ընդգրկել է հնդեվրոպական նախալեզվին հանգող հայերեն բառերը և հնագույն փոխառությունները:

Ե՞րբ է գործառել նշված հնչյունական օրենքը: Ճշգրիտ ժամանակը, ինչպես նախագրային շրջանին վերաբերող յուրաքանչյուր լեզվական փաստի դեպքում, դժվար է որոշել: Հետո չէ անգամ դրա հարաբերական ժամանակագրության վերականգնելը:

Հայերենում բառի մեջ՝ հատկապես ձայնորդային դիրքում, շրթնային (կամ շրթնատամնային) շփական արտասանություն են ստացել նաև \*m, \*n, \*t հնչյունները (հմմտ. \*am<sup>h</sup>r- > հայ. **աւր**, **աւուր**, \*ang<sup>h</sup>i- > **աւծ**, \*ar<sup>h</sup>-tro-m > **արաւր**) (տե՛ս, A.Meillet, 1977, էջ 19, Г.Б.Джаукян, 1987, էջ 112-113):

Արդյո՞ք քննված բոլոր հնչյունները միաժամանակ են շփականացել, թե՞ այդ գործընթացը տարբեր հնչյունների դեպքում տարբեր ժամանակագրություն ունի: Թվում է, թե շրթնային շփական արտասանություն առաջին հերթին պետք է ստանային շրթնային հպականները և շրթնային ձայնորդը: Սակայն \*t > հայ. **ւ** անցում, որ դիտվում է \*r ձայնորդից առաջ՝ նախքան \*tr > հայ. **րտ** դրափոխությունը (հմմտ. սեռ. \*p<sup>h</sup>ntros > **հաւր**, \*matros > **մաւր**), հայերենի հնագույն համարվող փոխառություններում չի հանդիպում: Ուրեմն՝ այն նախորդել է բառամիջում շրթնային հպականների շփականացմանը:

Բոլոր դեպքերում, կարելի է եզրակացնել, որ, հատկապես միջձայնավորային դիրքում, հայերենի շրթնային հպական բաղաձայնները շփականացել են \*ḫ > հայ. **գ** հնչյունափոխությունից հետո միայն (հմմտ. \*g<sup>h</sup> oḫ-i > **կոգի**, \* úaḫa-> **սագ**), այլապես նշված դիրքում \*bh, \*b, \*p հնչյունների դիմաց նույնպես կունենայինք **գ** հետնալեզվային բաղաձայն: Ավելին, պետք է ենթադրել, որ հենց \*ḫ > հայ. **գ** օրենքի գործառությամբ է պայմանավորված հատկապես շրթնային հպական բաղաձայնների շփականացումը հայերենում: Շրթնային շփական բաղաձայնը բառում հետնալեզվային հպականի է վերածվել (\*ḫ>g) բոլոր դիրքերում, բացառությամբ այն դեպքի, երբ միջձայնավորային դիրքում նրան հաջորդել է շրթնային ձայնավոր (հմմտ. \*g<sup>h</sup>oḫ-o > **կով**, **-ոյ**, **-ու**, \*reḫ-o- > **արեւ**, **ու**) (տե՛ս, Մ.Աղաբեկյան, էջ 104):

Հետևաբար՝ ինչ-որ ժամանակահատվածում հայերենը բառում, բացառությամբ վերը նշված դիրքի, շփական շրթնային \*ḫ բաղաձայն չի ունեցել: Չայնորդային գործառությամբ, այսինքն՝ որպես երկբարբառի տարր, \*ḫ-ն պահպանվել էր միայն **աւ** և **եւ**

երկբարբառներում (հմմտ. \*aēdh > հայ. աւղ, \*bhreǵr- > աղբեր), քանի որ հնդեվրոպական \*ou և \*eu երկբարբառները վերածվել էին ոյ-ի (հմմտ. \*leǵko- > լոյս, \*moǵ-no > մոյն): Այսպիսով՝ հայերենի հնչութային համակարգում շրթնային շփականի գործառական բեռնվածությունը խիստ փոքրացել է: Լեզուն, բնականաբար, պետք է ձգտեր լրացնել համակարգի այդ բաց վանդակները, որի հետևանքով բառի համապատասխան դիրքերում աստիճանաբար շփական արտասանություն են ստացել շրթնային հպականները:

Այնուամենայնիվ, հայերենը իր ներքին միջոցներով շրթնային շփական բաղաձայնի գործառական լիարժեքություն չի ապահովել, քանի որ բառասկզբում \*bh, \*b, \*p > հայ. վ հնչյունափոխություն տեղի չի ունեցել: Այդ բացը հետագայում լրացվել է փոխառություններով: Իսկ մինչ այդ, երբ շրթնային շփական բաղաձայնն ուներ դիրքային սահմանափակություն, փոխառյալ բառերի այդ հնչյունը բառասկզբում, բնականաբար, պետք է փոխարինվեր համապատասխան շրթնային հպականով կամ սղվեր, ինչը վկայում է, օրինակ, իրանական vaspur բառի հայերենում **ասպուր** ձևով փոխառությունը (հետագայում նաև՝ **վասպուր**): Հավանաբար հայերենում հենց այդ շրջանի խեթական փոխառություն պետք է համարել **բաղխեմ** (խեթ. 𐎧𐎠𐎢𐎡- «խփել, բախել»), **ափն** (խեթ. 𐎠𐎧𐎡𐎢𐎡 «գետափ») տիպի բառերը, որոնց ստուգաբանությունները կասկածի տակ են դրվում փոխատու լեզվի ձևերի հետ բառասկզբում թվացող հնչյունական անհամապատասխանությունների հետևանքով (տե՛ս, Г.Б.Джаукян, 1987, էջ 317, 318):

Հայերենի հնագույն փոխառություններում b, p > ւ (**վ, ու**) հնչյունական անցում ոչ միշտ է դիտվում: Սակայն կարելի է նկատել, որ հայ – սեմական համապատասխանություններում, օրինակ, հայերեն բառում փոխատու լեզվի b, p-ի դիմաց ւ (**վ, ու**) է, եթե հայերենին ամենից մոտ կանգնած սեմական ձևը ավելի հին է, ինչպես՝ հայ. **քաւլ** «արու այծ», հմմտ. ակկադերեն kabsu, իսկ ասորերեն kebīa «մատաղ խոյ»: Հայերեն **հալալ** բառի դիմաց ունենք միայն ակկադերեն 𐎶𐎠𐎢𐎡(m) «ներս սողոսկել, հագնել» ձևը: Հայերեն **ծիւթ**-ը ավելի մոտ է արամեերեն zīat<sup>Ⓢ</sup>, քան ասորերեն z'pta ձևին: Այս բառը արաբերեն և նոր պարսկերեն zift-ից բխեցնելը համոզիչ չէ՝ բառասկզբի շփականի փոխարեն հայերենում կիսաշփականի առկայության պատճառով (տե՛ս, Գ.Բ.Ջահուկյան, էջ 458-461):

Հայ-ուրարտական համապատասխանություններում բվում է, թե այս օրենքը և՛ գործել է, և՛ չի գործել, ինչպես՝ **աւելի** ~ abili-d(u) – «միացնել, ավելացնել», **հովիտ** ~ Ծubi, բայց և՛ **բաբա** ~ baba «բլուր»: Պետք է նշել, որ բառապաշարում ուր. b, p-ի դիմաց **ւ** (**վ**) շփականով հայերեն ձևերը կա՛մ ունեն այլ ստուգաբանություն (**աւելի** < հ.-ե. \*obhel-), կա՛մ էլ՝ հնչյունական անհամապատասխանություններ (ուր. Ծ ~ հայ. **խ** փոխարեն) (տե՛ս, Գ.Բ.Ջահուկյան, էջ 430-433), ինչը հարցականի տակ է դնում հայերենում դրանց ուրարտական ծագման վարկածը:

Հայ-ուրարտական տեղանունների ընդհանրությունները, կարծում ենք, ստուգաբանորեն ավելի վստահելի նյութ են մատուցում, քանի որ դրանք նույնանում են նաև համապատասխան վայրերով: Սակայն այստեղ նույնպես միմյանց հակասող օրինակներ կարող ենք բերել, ինչպես՝ **Ջաւախ-ք**, հմմտ. ուր. Zabaša, **Հաւնունիք**, հմմտ. ուր. Abuni, **Երեւան**, հմմտ. ուր. Er(e)buni, բայց և՛ **Աբեղեանք**, հմմտ. ուր. Abiliani, **Գաբեղեանք**, հմմտ. ուր. Qabiluši (տե՛ս, Н.В.Арутюнян, 1985):

Առկա փաստերից կարելի է եզրակացնել, որ ուրարտերենում շրթնային բաղաձայնները բառամիջում ունեցել են որոշ շփականություն, որը հիմք է ծառայել հայերենում դրանց երկակի արտացոլմանը (**ւ**, **ք**) (տե՛ս, Գ.Բ.Ջահուկյան, էջ 431): Նման շփոթ, սակայն, պետք է լիներ նաև արձանագրությունների՝ ուրարտերեն բառերում, ինչը չի դիտվում (տե՛ս, И.И.Мещанинов, 1978): Մի դեպքում միայն կարելի է վստահորեն խոսել հայերենում կատարված փոխառության մասին, եթե հայերենի և փոխատու լեզվի ձևերի վերը նշված դիրքերում (հիմնականում ձայնավորների միջև) առկա է b, p ~ հայ. **բ**, **պ** համապատասխանություն: Հայերենը \*bh, \*b, \*p > **ւ** (**վ**, **ու**) օրենքի դադարելուց հետո այդ դիրքերում **բ**, **պ** հպականներ է ձեռք բերել փոխառություններով:

Հայերեն **ւ** (**վ**) ~ ուր. b, p համապատասխանություններով տեղանունները կարող են ունենալ տարբեր բացատրություններ: 1. Հայերենը դրանք ուրարտերենից վերցրել է նախքան \*bh, \*b, \*p > հայ. **ւ** (**վ**, **ու**) օրենքի գործառելը, որոնք այնուհետև ենթարկվել են այդ հնչյունափոխությանը: 2. Ուրարտերենին և հայերենին այդ տեղանունները հայտնի են եղել նախքան ուրարտական արշավանքները Հայկական բարձրավանդակ, և ուրարտերեն ձևերում պահպանվել են սկզբնական b, p հպականները, իսկ հայերենում այդ բաղաձայնները շփականացել են: Այս երկու դեպքում էլ միջձայնավորային դիրքում հայ. **բ**, **պ** ~ ուր. b, p համապատաս-

խանութամբ տեղանունները հայերենին կարող էին անցնել հիշյալ օրենքի դադարելուց հետո միայն: Բայց դա պետք է տեղի ունենար ոչ ուշ, քան վաղ իրանական փոխառությունների հայտնվելը հայերենում, որոնցում նման հնչյունափոխություն չի դիտվում: Այս փաստը քիչ հավանական է դարձնում հատկապես առաջին վարկածը:

Եվ, վերջապես, կարելի է ենթադրել, որ ուրարտերենին այդ տեղանուններն անցել են հայերենից, որտեղ **ւ** (**վ**) շփականը, այդ ժամանակ ունենալով երկշրթնային արտասանություն, ուրարտերենում արտացոլվել է որպես շրթնային հպական **b**, **p**: Այս վարկածի օգտին են խոսում որոշ փաստեր:

Ուրարտերենը, ինչպես երևում է, շրթնային կամ շրթնատամնային շփական բաղաձայն (**w**, **v**) չի ունեցել: Նրա սեպագիր նշաններում, որ հիմնականում վերցված են ասուրական համակարգից, ի տարբերություն վերջինիս, այդ բաղաձայնը արտացոլված չէ: Կարելի էր մտածել, որ շրթնային շփական բաղաձայնը արտահայտվում է **u** պարունակող նշանով: Սակայն շրթնային **u**-ն այդ վանկագրերում ի հայտ է գալիս միայն ձայնավորային դիրքերում, այսինքն՝ նա մյուս բաղաձայնների նման այս կամ այն ձայնավորի հետ զուգորդվող նշան չունի (տե՛ս, Г.А.Меликишвили, էջ 36-38): Ուրեմն՝ ձայնավորի մոտ, ինչպես նաև միջձայնավորային դիրքերում հանդիպող **u**-ն կամ առանձին ձայնավոր է, կամ էլ երկբարբառի բաղադրիչ տարր: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ուրարտերեն լեզու թափանցած օտար բառերում շրթնային շփական բաղաձայնը պետք է փոխարինվեր համապատասխան հպականով (**b**, **p**):

Վերն արդեն նշեցինք, որ բառասկզբում հայերենը շրթնային հպականը չի շփականացրել: Բայց ուր. **Biaina** և հայ. **Վան** (սեռ. **Վանայ**) տեղանունների ընդհանրությունն ակնհայտ է: Այս տեղանունը հայերենի համար բնիկ համարել չենք կարող, քանի որ հայերենը բառասկզբում **վ** ունի միայն փոխառություններում: Այն անմիջապես ուրարտականից ծագել նույնպես չէր կարող. բառասկզբում հիշյալ օրենքից շեղվող դեպքեր չունենք: Այդ դիրքում հայերենը և ուրարտերենը ունեն հայ. **բ** և ուր. **b** համապատասխանություն (հմմտ. **բաբայ** «բլուր» ~ **baba**, **բուրզն** ~ **burgana**): Ուրեմն պետք է ենթադրել, որ այդ տեղանունը հայերենին է անցել մեկ այլ լեզվից, հավանաբար՝ պարսկերենից (հմմտ. իրան. **avan** «բնակավայր, ավան»): Իսկ ուրարտներն այն վերցրել են հայերենից և իրենց լեզվում բացակայող բառասկզբի շրթնային շփա-

կան ձայնեղ բաղաձայնը փոխարինել են համապատասխան հպականով:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ հայ-ուրարտական ընդհանրություններում հայ. **լ (վ, ու)** ~ ուր. **b, p** համապատասխանության դեպքում ուրարտերեն ձևերն են փոխառվել հայերենից, իսկ միջձայնավորային դիրքում հայ. **բ, պ** ~ ուր. **b, p** ունեցող բառերը հայերենին են անցել ուրարտերենից: Յետևաբար՝ հայերենում \*bh, \*b, \*p > **լ (վ, ու)** հնչյունական օրենքը ուրարտական տիրապետության շրջանում (մ.թ.ա. IX-VII դարեր), հավանաբար, այլևս չէր գործում: Այս դեպքում պետք է ենթադրել, որ այն գործառել է մ.թ.ա. IX- VIII դարերից առաջ:

Ասվածին հակասող փաստ կարող է թվալ, այն, որ Er(e)buni (Irpuni) ամրոցը, ասենք, ուրարտական թագավոր Արգիշտի I-ի արձանագրության համաձայն կառուցվել և անվանակոչվել է մ.թ.ա. 782 թվին (Н.А.Арутюнян, 1985): Բայց և չի բացառվում, որ այդ ամրոցի մոտակայքում եղել է նաև **Երեւան** (<h.-ե. \*prep-) հայկական անվամբ բնակավայր, որի ազդեցությամբ էլ ուրարտական Irpuni ամրոցի անունը հնչվել է նաև Er(e)buni ձևով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

**Ս. Աղաբեկյան**, Յնդեվրոպական \*E բաղաձայնը հայերենում, ՊԲՀ, 1981, 4:

**Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

**A. Meillet**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936.

**A. Meillet**, Etudes de linguistique et de philologie arméniennes, Louvain, 1977.

**Н.В. Арутюнян**, Топонимика Урарту, Ереван, 1985.

**Т.В.Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов**, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984.

**Г.Б.Джаукян**, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.

**Г.Б.Джаукян**, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982.

**Г.Л.Меликишвили**, Урартские клинообразные надписи, Москва, 1960.



#### 4. Վեյյան

### ԱՐԿԱՅԱՎԱՆ ՏՐՈՂՄԱՆ ԿԱՐՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ՉԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Վերջին շրջանում անգլերենից հայերեն թարգմանության տեսական և գործնական հարցերի նկատմամբ հետաքրքրությունն անընդհատ աճում է, ինչի մասին է վկայում թե՛ գեղարվեստական, թե՛ գիտական գրականության թարգմանությունների աճող ծավալը: Թարգմանության հիմնահարցերից առավել կարևոր են թարգմանության իմաստային-շարահյուսական խնդիրները: Նախադասությունը, որպես հաղորդակցման նվազագույն միավոր, իրենից ներկայացնում է թեմայի և ռեմայի՝ նախադասության առկայական (հաղորդակցական) տրոհման պարտադիր բաղադրիչների անբաժանելի միասնություն: Այս առումով թարգմանության ճշգրտությունը, մեր կարծիքով, կախված է նախ և առաջ բնագրի «թեմա-ռեմա» կամ «ռեմա-թեմա» կառուցվածքի ճշգրտությունից: Անհրաժեշտ է նշել, որ բանավոր և գրավոր խոսքում նախադասության առկայական տրոհման արտահայտման հիմնական միջոցներից մեկը շարադասությունն է: Սույն հոդվածում փորձ է արվում ցույց տալ անգլերենից հայերեն թարգմանության ժամանակ շարադասության գործոնի կարևորությունը նախադասության հաղորդակցական տրոհման կառուցվածքի պահպանության համար: Որպես ցուցադրական նյութ բերվում են անգլերեն գեղարվեստական գրականության և նրանց բարձրակարգ թարգմանիչների կողմից կատարված հայերեն թարգմանությունների օրինակները:

Թարգմանությունում տեղեկատվության համարժեք արտահայտման նպատակով հարկ է նախ և առաջ ճշգրիտ որոշել նախադասության առկայական տրոհումը, այսինքն՝ ճշգրիտ որոշել թեմա-ռեմային սահմանը, ինչը հաճախ շարադասությամբ է պայմանավորվում: Սույն տեսակետն ապացուցելու համար քննենք հետևյալ նախադասությունը՝

He stood there small, brown-faced and embarrassed. (Hemingway, 18).

Տվյալ դեպքում վերադիրների (small, brown-faced and embarrassed) հեռացումը կարելի է բացատրել հետևյալ գործոնով: Ինչպես հայտնի է, վերջադաս դիրքն ամենառեմայինն է և հաղորդակցորեն դիմամիկ, ուստի գտնվելով նախադասության վերջում համասեռ վերադիրները իմաստորեն առավել սաստիկ են ընդգծվում և գրավում ընթերցողի ուշադրությունը: Շարահյուսական այլ կառույցի ենթ հանդիպում հայերեն թարգմանությունում, քանզի այստեղ փոքր-ինչ այլ է անգլերեն small, brown-faced, embarrassed վերադիրների համարժեքների շարահասությունը, այն է՝

*Կարճահասակ, թխադեմ, շփոթված, կանգնել էր իմ առաջ* (Յենիմգուեյ, 64):

Նախադասության անդամների նման շարահասության հետևանքով փոխվում է նաև իմաստային կառուցվածքը, քանի որ ռեման այս դեպքում կլինի *կանգնել էր իմ առաջ* ստորոգյալի խումբը՝ *կանգնել էր* իմաստային միջուկով, իսկ օժանդակ բայը (տվյալ դեպքում՝ *էր*) հայերենում համարվում է ռեմայի գլխավոր ցուցիչներից մեկը: Մեր կարծիքով, թարգմանությունը նախադասության տրոհումը պահպանելու առումով կշահեր, եթե թարգմանիչը կիրառեր նույն շարահասությունը, ինչը անգլերեն բնագրում է՝

*Կանգնել էր նա իմ առաջ՝ կարճահասակ, թխադեմ և շփոթված:*

Այս տարբերակը, մեր կարծիքով, առնվազն իմաստորեն ավելի ճշգրիտ է:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայերեն թարգմանություններում է բայ-հանգույցի (կամ օժանդակ բայի) ոչ ճշգրիտ շարահասումը կարող է աղավաղել բնագրի նախադասության հաղորդակցական տրոհման կառուցվածքը, որի հետևանքով թարգմանությունը, չհամապատասխանելով բնագրի հաղորդակցական գործառական ուղղվածությանը, ճշգրիտ չի համարվի: Այս առումով հատկապես ցայտուն է հետևյալ օրինակը՝

Only upon the greatest, the most important provocation was it necessary to say anything open on Forsyte Change. (Galsworthy, 147).

Քննվող՝ շրջուն շարահասությամբ նախադասության մեջ ռեմայի կրողը հանդես է գալիս only upon the greagest, the most important provocation պարագայական ընդարձակ խումբը՝ provocation ռեմայի միջուկով: Ինչ վերաբերում է հայերեն

թարգմանությանը, ապա այստեղ մենք հանդիպում ենք հետևյալ տարբերակին.

*Միայն արտակարգ, չսփազանց կարևոր մի իրադրության դեպքում անհրաժեշտ էր բացահայտ բաներ ասել Ֆորսայթյան Բորսայում (Գոլստուդդի, 183):*

Բնագրի հաղորդակցական տրոհման կառուցվածքի ճշգրիտ արտահայտման նպատակով թերևս նախընտրելի կլիներ էր բայ-հանգույցը տեղադրել *անհրաժեշտ* բառից առաջ՝

*Միայն արտակարգ, չսփազանց կարևոր մի իրադրության դեպքում էր անհրաժեշտ բացահայտ բաներ ասել Ֆորսայթյան Բորսայում:*

Սույն տարբերակում ռեման կլիներ *իրադրության դեպքում* արտահայտությունը, ինչպես իր the most important provocation համարժեքը: Իսկ էր բայ-հանգույցի *անհրաժեշտ* բառից հետո գտնվելու դեպքում հաղորդակցական տրոհման կառուցվածքը որոշակիորեն փոխվում է. ռեմային միջուկը հանդիսանում է *անհրաժեշտ* բառը, որն էլ կրելով գլխավոր դարձվածային շեշտը՝ դառնում է ուշադրության կենտրոն:

Հատուկ կարևորություն է ստանում *ռեմա-թեմային* հաջորդականությամբ ոճականորեն և հաղորդակցորեն երանգավորված անգլերեն նախադասությունների թարգմանության հիմնախնդիրը: Այսպիսի նախադասություններում հաղորդակցական տրոհման բաղադրիչների հաջորդականությունը նշույթավորված է, քանի որ ռեման գտնվում է իր համար ոչ սովորական դիրքում՝ նախադասության սկզբում, որը և ամբողջ նախադասությանը նշույթավորվածություն է հաղորդում, ինչպես, օրինակ, հետևյալ նախադասությունում՝

On no account *would* he have pulled up to help the ruffian.  
(Galsworthy, 146).

Նման տեսակի շրջադասությամբ նախադասություններում ռեման բացասական նշանակությամբ առաջադաս պարագան է:

Հայերեն թարգմանությունում հանդիպում ենք հետևյալ տարբերակին.

*Նա ոչ մի դեպքում կանգ չէր առնի այդ սրիկային օգնելու համար (Գոլստուդդի, 181):*

Այս թարգմանությունում, որտեղ բացասական իմաստով պարագան միջադաս դիրք է զբաղեցնում, ինչպես ասույթի հուզարտահայտչականության ընկալումը, այնպես էլ արտահայտչական հազեցվածության աստիճանը, ըստ մեզ, փոքր-ինչ նվազում է, թեև պարագան ռեմա է մնում: Պարագայի տեղեկատվա-



կան-հաղորդակցական կշիռը ընդգծելու նպատակով այն պետք էր, ինչպես անգլերեն բնագրում, տեղադրել թերևս նախադասության սկզբում, քանզի առաջադաս դիրքը համարվում է հաղորդակցորեն ընդգծող և առավել աչքի ընկնող.

*Ոչ մի դեպքում նա կանգ չէր առնի այդ սրիկային օգնելու համար:*

Ակամա իր վրա ուշադրություն է հրավիրում կրկնակի շրջադասությամբ անգլերեն նախադասությունների թարգմանությունը: Այսպիսի շրջադասության կառուցվածքային հատկությունն այն է, որ վերջինս իրագործվում է ոչ միայն ստորոգյալի առաջադաս դիրքով, այլև ստորոգյալի բաղադրիչների շրջադաս ձևով. ստորոգյալի իմաստային մասը՝ դերբայը կամ վերադիրը, նախորդում է *be* օժանդակ բային (կամ բայ-հանգույցին):

Անգլերեն լեզվի համար կրկնակի շրջադասությամբ կառույցը շատ կիրառական չէ, գեղարվեստական գրականության մեջ բավականին հազվադեպ է գործածվում և ոճականորեն սաստիկ երանգավորված է: Հայերենում, ինչպես հայտնի է, կրկնակի շրջադասության հասկացությունը բացակայում է, թեև նման շարահյուսական կառույցով նախադասությունները բավականին հաճախ են հանդիպում: Այնուամենայնիվ, մեզ հանդիպել են դեպքեր, երբ այդպիսի նախադասությունների ռեմա-թեմային հաջորդականությունները ճշգրիտ չեն արտահայտվում: Որպես օրինակ բերենք հետևյալ անգլերեն նախադասությունը և համեմատենք այն հայերեն թարգմանության հետ.

*Sweet was that evening.* (Bronte, 396)

Սույն նախադասության մեջ *sweet* վերադիրի շրջադասությունը կիրառված է տվյալ անդամի՝ ռեմայի կրողի հաղորդակցական ընդգծման նպատակով, ուստի ամբողջ նախադասության հաղորդակցական կառուցվածքը կլինի ***ռեմա + թեմա***. Սակայն վերջադաս դիրքում վերադիրը նույնպես ռեմա կհանդիսանա.

*That evening was sweet.*

Սա մեզ հիմք է տալիս հաստատելու, որ վերադիրը տեղափոխվում է առաջադաս դիրք՝ արտահայտչականությունն ձեռք բերելու նպատակով, ինչը հուզարտահայտչականություն է հաղորդում ամբողջ նախադասությանը: Բերենք ևս մեկ օրինակ.

*Belknap is my name – Alvin Belknap.* (Dreiser, 641).

Հայերեն թարգմանություններում գտնում ենք հետևյալ տարբերակները՝

Դա մի հրաշալի *երեկո* էր (Բրոնտե, 454):

Իմ անունն է *Բելնեպ*, էլվին Բելնեպ (Դրալգեր, 148):

Ինչպես երևում է, շրջուն շարադասությամբ անգլերեն նախադասությունները հայերեն են թարգմանվել ուղիղ շարադասությամբ, որի արդյունքն է հաղորդակցական տրոհման չհամընկնելը անգլերեն բնագրի հետ, ընդ որում թարգմանությունը նաև որոշակի ոճական կորուստ է կրում: Այսպես, վերջին օրինակում (Իմ անունն է Բելնեպ) ռեման *անունն* վերադիրն է, մինչ անգլերեն բնագրում ռեման *Belnap* վերադիրն է, այսինքն, այն անդամը, որ անգլերեն բնագրում կրում է տեղեկատվական մեծ կշիռ, հայերեն թարգմանությունում նվազ տեղեկատվական է: Իսկ նախորդող նախադասության թարգմանությունում (*Դա մի հրաշալի երեկո էր*), թեև ռեման *հրաշալի* որոշիչն է, ինչպես իր անգլերեն համարժեքը՝ *sweet* վերադիրը, այնուամենայնիվ, նման շարադասության դեպքում նվազում է հուզարտահայտչականության այն հարանշանակությունը, որը հատուկ է անգլերեն բնագրին: Ըստ որում փոխվում է նաև նախադասության հաղորդակցական տրոհումը, քանզի տրոհման բաղադրիչների հաջորդականությունը կլինի *թեմա + ռեմա*, ի տարբերություն անգլերեն բնագրի: Մեր կարծիքով, թարգմանությունը կշահեր հուզարտահայտչականության առումով, եթե թարգմանիչը պահպաներ նույն շարահյուսական կառույցը, որը կիրառվում է անգլերեն բնագրում, այն է՝

*Պրաշալի էր (զեղեցիկ էր) այդ երեկուն:*

Բելնեպ է իմ անունը, էլվին Բելնեպ:

Հարկ է նաև նշել, որ այսպիսի շարադասությամբ պահպանվում է ինչպես նախադասության իմաստային - շարահյուսական կազմը, այնպես էլ այն իմաստային յուրահատկությունը, որը հատուկ է անգլերեն բնագրերին, ինչը և նպաստում է տեղեկատվության ճշգրիտ արտահայտմանը:

Շարադրածի լույսի ներքո պարզ է դառնում, որ կայուն շարադասություն ունեցող լեզվից ազատ շարադասություն ունեցող լեզու թարգմանելիս հարկ է նկատի ունենալ ռեմաարտահայտման, հուզարտահայտչության և նախադասության մեջ բառի դիրքի փոխհարաբերությունը:

Այլ կերպ ասած՝ թարգմանության ճշգրտությունը կախված է նախ և առաջ նախադասության առկայական տրոհման ճշգրիտ որոշումից, ինչը պետք է հաշվի առնել թարգմանության պրակտիկայում:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Bronte Ch. Jane Eyre. New York, 1960. - 461 p.
2. Dreiser Th. The American Tragedy. - Cleveland, 1925. - 874 p.
3. Galsworthy J. The Forsyte Saga. - M.: Progress Publishers, 1974, book 1. - 383 p.
4. Hemingway E. A Farewell to Arms. - M.: Progress Publishers, 1976, - 320 p.
5. Բրոնտե Շ., Ջեյն Էյր, թարգմ. Ա.Բուդաղյանի, Երևան, «Սովետական Գրող», 1988, 540 էջ:
6. Գոլստորդի Ջ., Ֆորսայթների պատմությունը, հ.1, թարգմ. Կ.Սուրենյանի, Երևան, «Հայաստան», 1975, - 510 էջ:
7. Դրայզեր Թ., Ամերիկյան ողբերգություն, թարգմ. Յ.Բարսամյանի, Երևան, «Հայաստան», 1972, հ.2. 470 էջ:
8. Հեմինգուեյ Է., Հրաժեշտ զենքին, թարգմ. Պ.Ջեյրոնցյանի, Երևան, «Հայաստան», 1972. 300 էջ:



**ՆՈՐԱՅԱՅՏ ԲԱՌԵՐ 5-րդ դարի ՀԱՅ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

5-րդ դարի գրաբարի բառապաշարն ըստ կարելվույն արտացոլված է բառարաններում: Եղած բացը հետազայում լրացվել է մի շարք հետազոտողների կողմից: Այդ գործում մեծ է հատկապես Արիստակես Վարդանյանի /Վիեննայի Մխիթարյան միաբանություն/ և Հ. Աճառյանի վաստակը, որոնք վեր են հանել մի քանի հարյուրի հասնող բառեր, առաջարկել ճշգրտումներ, ստուգաբանություններ: Այդ կարգի բառերի գերակշռող մասը արտացոլված է Արմատական բառարանում: Գրաբարի բառարան – ներում չվկայված, կամ այսպես կոչված, նորահայտ բառերի բացահայտման և ուսումնասիրության բուռն գործընթացը սկսվեց անցյալ դարի վերջին քառորդից և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

ա/ մի շարք նոր ձեռագրերի հայտնաբերմամբ,

բ/ բազմաթիվ բնագրերի հրատարակությամբ /նաև քննական/,

գ/ դեռևս 1830-ական թվականներից առաջ քաշված դասական և հետդասական գրաբարի հարցադրմամբ. հարցադրում, որի նախածեռնողները Վիեննայի Մխիթարյաններն էին, և որոնք առաջադիր խնդիրը գիտականորեն լուծելու համար կարևոր էին համարում 5-րդ դարի հայ մատենագրության մանրագնին ուսումնասիրությունը:

Ըստ արժանվույն գնահատելով երախտավոր հայագետների վաստակը՝ նկատենք, որ այդ բնագավառում անելիքներ չատ կան:

5-րդ դարի գրաբարի բառապաշարի ուսումնասիրության ընթացքում մեզ հաջողվել է գտնել մոտ 200 նորահայտ բառ: Դրանք հիմնականում թարգմանական գրականությունից են, թեև այդպիսիք կան նաև ինքնուրույն գրականության մեջ<sup>1</sup>: Նշենք միայն մեկ օրինակ Մ. Խորենացուց.

Արքայամանուկ «Կալաւաշխարհս մեր ամս քսան և վեց և յետ նորա որդի նորին, որ անուանեցան Շապուհ, որ լսի արքայամանուկ»:<sup>2</sup> Բառարանագիրները արքայամանուկը չեն զետեղել բառարաններում, ըստ երևույթին դիտելով որպես հատուկ անուն: Բառը իրոք իրանական Շապուհի ճիշտ թարգմանությունն է. sâh «թագավոր» puh  puh «որդի»: Նշված բառը ուշագրավ է մեկ

այլ առումով. մանուկ բառի համար ի հայտ է գալիս «որդի» իմաստը, որը չի նշում Առձեռնը, իսկ Նոր հայկազյան բառարանն էլ երկրորդական իմաստներից մեկն է համարում, թեև վկայած օրինակում որդի «մանուկ» իմաստը հստակ չէ: Հավանորեն բառը նշված իմաստով գործածական է եղել որևէ տարածքում:

Նորահայտ բառերը բազմազան են բառակազմական կաղապարների տեսակետից. հանդիպում են՝ ա/ պարզ կամ այդպիսին գիտակցվող բառեր. թարուք «հողագործ», շիշաղ «սատանա», ժիել «ժխտել, մերժել», բ/ածանցավոր բառեր. անգրական «չգրված», երբեմնական «փոփոխվող, ժամանակավոր», թողացուցիչ, պաշտաւնիկ, գ/ բարդ բառեր. աղբաման, արմատակայեմ, արտաքսրնկեցիկ, ինքնաչու, հանոգակերութիւն, կանխանկար...<sup>3</sup>

Ստորև այբբենական կարգով ներկայացնենք մի քանի նորահայտ բառեր, որոնք ուշագրավ են բառակազմական, վկայության ժամանակաշրջանի, ստուգաբանության և այլ առանձնահատկությունների նկատառումով:

Աղբաման - «...զի յորժամ սիրտն հանճարական հպարտանայցէ, սաստեսցէ ի նա փորն աղբաման» /Եմես. ճառ ԺԲ/: V դարի մեկ այլ հեղինակ՝ Հ. Մանդակունին նույնպես օգտագործում է նմանատիպ մի մակդիր՝ աղբաբոյն որովայն:<sup>4</sup> Աղբաբոյնը, որ դարձյալ եզակի վկայություն է, բառարաններում արձանագրված է, իսկ աղբամանը՝ ոչ:

Ամուսնել - «...զի չամուսնել և չամուսնանալ ոչ մերոյ բնութեան է, այլ հրեշտակաց» /Եմես. ճառ Զ/: Բառը վրիպակ համարելու հիմք չունենք: Եթե այն ուղղենք չամուսնանալ, ապա նույն բառի կողք կողքի կիրառությունը անիմաստ կլինի: Մեր կարծիքով հայ թարգմանիչը այդ զուգածներով փորձել է սեռային /իգական-արական/ տարբերակում տալ: Հիշենք, որ սեռային տարբերակման որոշ արհեստական ձևերի կիրառման փորձեր զրաբարում եղել են /խոսքը հունբան դպրոցի նորանուծությունների մասին չէ/: Օրինակ՝ Եվսեբիոսի Եկեղեցական պատմության մեջ հայ թարգմանիչը օգտագործել է ասորական իգականակերտ մասնիկը. «Եւ ասաց զնոցանէն, եթէ կոչին հանգստարարայք և կանայք հանգստարարիթայք»:/Եւս պայմ. Բ. էջ 17/:

Արմատակայել - «Քանզի որ ի հեթանոսաց հաւատացեալքն արմատակալեալ կոճոպեալ համարէին զիրեական հաւատացեալսն» /Եմես. ԺԱ/: Ղարաբաղի բարբառում հաճախական է տրկորկայիլ / տակոլի «արմատ»/: Ուրեմն բառակազմությունը հին ակունքներ ունի:

Գրոհ - «Ձոր օրինակ գրոհ ոք երթիցէ ի քարի, քարին ինչ ոչ ստնանէ, այլ զհւր գլուխն ողջ ոչ ասրեցուցանիցէ» /Եւս. ճառ Բ./:

Բարբառներում գործածվում է գիրդ «կտրուկ, միանգամից» բառը, այդ նույն բառի *հ* –ով մակբայական ձևն է և գրաբարում, որն առայժմ եզակի վկայություն է:

Երեկի - «Եւ աստ է տեսանել նորագործ նորանշան գործ, որ երեկի որսացեալ, այսար զայլս որսայ» /Եմես. ճառ Թ/։ Ըստ երևույթին հին բարբառային կամ ժողովրդախոսակցական ձև է. հմմտ. Ղարաբաղի բարբառի Յըրկէ «երեկ»:

Դաստաւէր - «Վերք ի վիրաց ի վերայ դնէին, հաստաւէր լինէր բանսարկուն» /Եմես. ճառ Դ/։ Գրաբարում գործածվում է խստաւէր -ը: Հմմտ. «Ձգուշանամք ի չար նետից նորա և խստաւէր հարուածոցն» /Մանդակ. Բ/։ Դա իրավունք չի տալիս սակայն հաստաւէր –ը ուղղել խստաւէր: Մանդակումին օգտագործում է հաստ բաղադրիչով մեկ այլ հոմանիշ. «Հաստախոց ի գաղտնի նետից սատանայի» /Մանդակ. ԺԷ/:

Մաղ –մաղ - «Հաց կսկուծ, որ նկանակ կոչի և լինէր այսպէս, սալ ջեռուցանէին, յորոյ վերայ զճարպն քացեալ անաստառ անդ դնէին և ապա մաղ մաղ ի վերայ արկանէին»:<sup>5</sup> Մաղ մաղ կարելի է քարգմանել «դանդաղ, մեղմ, կամաց կամաց»: Բառն այս իմաստով հանդիպում է Ղարաբաղի բարբառում՝ մրդորմրդ: Ծագում է թերևս հ.-ե. mel արմատից, որից՝ մեղմ, մայեմ...

Չիշաղ/ք/ - Արմատական բառարանը հղելով Երեմիա Մեղրեցուն՝ նշում է այս բառը չիշաղք ձևով /հասկանալի է առանց վկայության/: Համեմատելով ասորերենի հետ Աճառյանը ենթադրում է չիղշալ ձևը: Մենք այդ բառին հանդիպել ենք ոչ թե մեկ, այլ երկու համատեքստում. ահա այդ օրինակները: «Ձդեւս հալածեաց, զչիշաղս խռովեաց, զմահ մեռոյց, զթշնամին սպան, զանէծս եքարծ» /Եմես. ճառ Է/։ «Ուտեն զհաստեայս ընդ շիշաղս և ընդ սուրբս զարբութիւն»:<sup>6</sup> Երկու վկայությունների հիման վրա բառի ճիշտ ձևը պետք է համարել չիշաղ/ք/՝ «դև, սատանա»:

Պատման – Ոսկեբերանի՝ Եփեսացու մեկնության մեջ կա այսպիսի մի հատված.« նուազագույն քան զնոսա արար զսա չափով, մարմնով փոքր ինչ հասակու պատման»:<sup>7</sup> Բանասեր Ե. Դուրյանը իր ուսումնասիրություններից մեկում պատմանը փորձում է ուղղել պայման:<sup>8</sup> Իմաստի տեսակետից այս ուղղումը մերժելի չէ: Արմատական բառարանում պայմանը բացատրվում է «դաշն, դաշինք, ձև, կերպ», բայց այն ունեցել է «չափ» նախնական իմաստը:

Պայման- ը իրանական փոխառություն է mǎ «չափ» արմատից: Իրանական լեզուներում բառի տարբերակներից մեկն ամենայն հավանականությամբ եղել է patmān հմմտ. patmānak, դաշինք»: Այժմ իրանագիտությանը հայտնի է, որ պարթևերենի pat մասնիկին միջին պարսկերենում համապատասխանում է pay: Ըստ այդմ հայերենի իրանական բառաշերտի մեջ պարթևերենից կամ հյուսիս-արևմտյան լեզուներից են պատմուճակ, պատմուճան, պատուաստ, պատկեր, պատրաստ..., միջին պարսկերենից կամ հարավ-արևմտյան լեզուներից՝ պայթար, պայագատ, պայուսակ և այլն: Ուրեմն՝ պատման-ը չպետք է ուղղել պայման: Առաջինը ավելի հին ձև է, և ենթադրում է փոխառության այլ ակունք: Միջանկյալ նշենք, որ Ոսկեբերանի նշված գործի հայ թարգմանիչը օգտագործում իրանական հնագույն և հայերենում ոչ հաճախական ձևեր. պարշարել /փխն. պաշարել/, պարհել /փխն. պահել/, վիհուկ /փխն. վիուկ/:

Պատուաստիկ - «Զի եթէ Աստուած ի բուն ոստն ոչ խնայեաց, ի քեզ, ի պատուաստիկդ զհարդ խնայեսցէ» /Եմես. ճառ ժԱ/: Նկատի ունի Պողոս առաքյալի «Առ հռովմեացիս» թղթի ժԱ 20-21 հատվածը. «Իսկ արդ ասիցես. ոստքն փշրեցան, զի ես պատուաստեցայց... Աստուած ի բուն ոստն ոչ խնայեաց, զուցէ երբեք և ի քեզ ոչ խնայեսցէ»: Եմեսացին ի քեզ բառին ավելացրել է պատուաստիկը գեղեցիկ մակդիրը, որը զարմանալիորեն տեղ չի գտել գրաբարի բառարաններում:

Սրուի - «Սրուիլս հարկանեն երիտասարդք և ջնարաւորք երգեն ջնարիւք երգեցիկք փողովք իւրեանց և արուեստական նուգաւք իւրեանց<sup>9</sup>»: Երաժշտական գործիքի անուանում է: Իմաստի տեսակետից ակնհայտ զուգահեռներ են. ռուս. свирель, բուլղ. сѣирѳл «շվի»՝ սլավ. \*svьr-ից: Սակայն դժվար է որոշակի բան ասել փոխառության բուն աղբյուրի հարցում:

Տարեւածեմ - «Մարմնոյ բարի է ի միայնում տան, քանզի ոչ տարեւածեն զնա ցանկութիւնք» /Ն.տ., Դ, 6/: Տարեւածեմ-ը հոմանիշ է տարուբորեմ-ին: Առկա է ածեմ «բերել» բառով կազմված մի գեղեցիկ վկայություն, որն ըստ երևույթին հաճախական չի եղել V դարում:

V դարի մատենագրությունը իրամցնում է ոչ միան մոր բառեր, այլև մոր իմաստներ: Բերենք երկու օրինակ:

Տոգոր բառը վկայված է չորս անգամ Գ.Մագիստրոսի թղթերում: Նոր Հայկազյան բառարանը այս չորս խրթին օրինակների հիման վրա նշում է հետևյալ իմաստները. «թաթաւումն, աղախումն, ներկումն, հմտութիւն, ուսումն, մակացութիւն»: Տոգոր

բառի «ներկ» նշանակության վերաբերյալ, որ տալիս է դեռևս Երեմիա Մեղրեցու բառարանը, Գ.Մենելիշյանը գրում է. «Իհարկե տեղ մը գործածուած պիտի ըլլա այս նշանակութամբ ալ, ապա թէ ոչ այն բառագրողները չէին յիշատակէր. բայց ու՞ր, անծանօթ է այժմ»:<sup>10</sup>

Եմեսացու ԺԲ ճառում հանդիպում ենք այդ բառին, այդ իմաստով. «Ձոր օրինակ, որ ներկանիցէ ինչ, ստեպ ստեպ մխեն անդրէն ի տոգորսն, զի ի խոր առնուցուն նարօտքն զներկուածն»:

*Կորեակ* «աչքի ոսպնյակ» - Վկայված է նույն ճառում. «Յաստատեաց ի նմա և աչս և փոքրիկ կորեակն, որ ի մէջ բբացն, այն է, որ տեսանեն և սակայն փոքր կորեկահատաւն տեսանէ զամենայն արարածս»: Ո՛չ կորեակը, ո՛չ կորեկահատը «աչքի ոսպնյակ» իմաստով բառարաններում արձանագրված չեն:

Ամփոփենք: V դարի մատենագրության մանրագնին քննութիւնը բացահայտում է բառարաններում չարձանագրված բառեր, բառիմաստներ: Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել թարգմանական գրականությանը, որն ըստ հնարավորին ուսումնասիրված լինելով բանասիրական, պատմական, դավանաբանական և այլ հայեցակետերով, բավարար չափով քննված չէ լեզվական, բառապաշարային առանձնահատկությունների տեսակետից:

Նորահայտ բառերի վերհանումն ու ուսումնասիրությունը մեծապես կնպաստի հայերենի պատմական բառապաշարի համակողմանի քննությանը. այն անգնահատելի նյութ է նաև հրատարակվելիք պատմական բառարանի համար:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Լ.Յովհաննիսյան, Նոր հայկազյան բառարանում չավանդված բառեր V դարի ինքնուրույն գրականությունից /«Պատմա-բանասիրական հանդես», 1990, N2/:
2. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, 216:
3. Այս օրինակները քաղված են Եվսեբիոս Եմեսացու ճառերից, որը, հրատարակել է Ն. Ակինյանը «Հանդես ամսօրյայի» 1956-1959 թթ. համարներում: Համառոտության համար այսուհետև կնշենք Եմես, ճառ և ճառի թվահամարը:



4. Տե՛ս Տեառն Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք, Վենետիկ, 1860, ժՁ, 127/: Այն, որ գրաբարում որովայն, փոք բառերը երբեմն փոխարինվում են աղք արմատով այլ բառերով հաստատում է Խորենացու հետևյալ օրինակը «Ծառայ և ստրուկ որովայնի արդարեւ լինելով զաղբիւս մեծածուցաներ» (137): Աղբեւք-ը թարգմանվել է «աղբանոց», այնինչ այն փոխաբերական կիրառություն ունի և նշանակում է «որովայն»:
5. Տե՛ս Եմեսացու մեկ այլ գործը՝ «Մեկնութիւն ութամատեան գրոց Աստուածաշնչին» /աշխատասիրութեամբ. Վահան Վարդ. ի Յովհաննէսեան, Վենետիկ, 1980/:
6. Տե՛ս «Սիոն», 1929 թ. էջ 188:
7. Մատենագրութիւն նախնեաց. Ոսկեբերան. Վենետիկ, 1862, էջ 867:
8. Ե.Դուրեան, Ուսումնասիրութիւնք և քննադատութիւնք. Երուսաղէմ, 1935, էջ 392:
9. Կցուրոք ս. Եփրեմի Խորին Ասորոյ, հրատարակեց հանդերձ ներածութեամբ Խ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1957, Դ. 6/:
10. Տե՛ս «Հանդես ամսօրյա» 1911 թ. էջ 665:



**ՎԱՅՐԻ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՀՆՂԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԻՄԱՍՏԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հնդեվրոպական դիցաբանական հայեցակետով ողջ աշխարհը (և՛ շնչավոր, և՛ անշունչ) ներկայացվում է որպես «Կենաց ծառի» տարբեր մասերում տեղադրված գոյեր, ընդ որում ծառի բունը կազմում է միջին աշխարհը, զագաթը՝ վերին, արմատները՝ ստորին: Նման պատկերացմամբ վայրի կենդանիները բաժանվում են միջին, ստորին և վերին աշխարհների միջև:

Միջին աշխարհի մեջ մտնում են չորքոտանի վայրի կենդանիները: Հնդեվրոպական (հ.-ե.) լեզուներում այս իմաստն արտահայտվում է \*medhǵo- (հայ. **մէջ**) արմատից առաջացած ձևերով: Հայերենում պահպանվել են միջին աշխարհի մեջ մտնող կենդանիների հետևյալ անվանումները՝ **առիւծ (-եւծ), գայլ, ինձ, լուսան, արջ, աղուէս, բորենի, եղն:**

Ստորին աշխարհը հ.-ե. լեզուներում ներկայացված է \*bhud(h)-n- (հայ.՝ **ան-դունդ-ք**) արմատից առաջացած ձևերով: Ըստ հնագույն դիցաբանական պատկերացման՝ այն տեղադրված էր ստորգետնյա թագավորությունում կամ ջրում: Այս աշխարհի կենդանիների թվին են դասվում՝ **աւծ, իծ, քարք, մուկն, գորտ, ձուկն, անիծ, լու, մաթիլ, մլ-ուկ** «փայտոջիլ», բրբ. **մղմող** «ցեց», **մրջին** (բրբ. **մորմոնջ**), **սարդ, տիգ, բռռ, կէտ** «իշամեղու», **մուն, մլակ, թրթուր, ոզնի:** Վերջինս ծագում է «օծ» նշանակությամբ \*og'hiǵo- արմատից: Հ.-ե. ավանդույթում այն գիտակցվել է իբրև «օծ սպանող, ոչնչացնող»:

Վերին աշխարհի կենդանիների անվանումը կապվում է հ.-ե. \*Hǵe(i)-, արմատի հետ, որի մեկ այլ տարբերակն է \*aǵei- (հայ.՝ **հաւ(ք)**): Հայերենում առկա են վերին աշխարհի ներկայացուցիչների հետևյալ անվանումները՝ **հաւ(ք), արծուի (-ծիւ), ագռավ, բու, բոււճ, ծիծառն, կկու** (բրբ. **կուկու**), **կռունկ, յոպոպ, որոր, ցին, ուրուր, բիբի:**

Թեմատիկ իմաստային այս խմբի մեջ մտնող բառերը բնորոշվում են հնչյունական ձևաբանական և իմաստային մի շարք առանձնահատկություններով: Այդ պատճառով էլ տարբեր տեսանկյուններով այս կարգի բառերը միշտ եղել են համեմատաբանների ուշադրության կենտրոնում:

Ներկա հոդվածի նպատակը թեմատիկ-իմաստային այս խմբի մեջ մտնող բառերի տարածքային բաշխման, ինչպես նաև դրանց իմաստային և ձևաբանական կառուցվածքներում կատարված պատմական տեղաշարժերի առանձնահատկությունների բացահայտումն է:

Նյութի ընդգրկումը կատարվել է ըստ Գ.Բ.Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն» (նախագրային շրջան) աշխատության, քանի որ այստեղ արտացոլված են ոչ միայն Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի նյութը, այլև նորագույն ստուգաբանություններն ու հայերենի բարբառների տվյալները: Քննության են ենթարկվել շուրջ քառասունչորս արմատներ:

Վերլուծությունը կատարվել է տարածքային լեզվաբանության մեջ ընդունված մեթոդներով ու սկզբունքներով: Ըստ ցեղակից լեզուների մասնակցության աստիճանի՝ առանձնացվել են **մեծ, փոքր, մեկուսացած** տարածքներ: **Մեծ տարածքների** մեջ մտցվել են այն զուգաբանությունները, որոնք առկա են հայերենում և հ.-ե. լեզուների մեծ մասում:

**Փոքր տարածքներում** ներկայացվել են ցեղակից քիչ թվով լեզուներում արտացոլված զուգաբանությունները, իսկ, այսպես կոչված, **արտառական** (էքսկլուզիվ) զուգաբանություններն ընդգրկվել են **մեկուսացած տարածքներում** (հայերեն և ցեղակից որևէ լեզու), քննությունից դուրս են թողնվել ոչ հավաստի ստուգաբանությունները (**սարեակ, կորին, կաքավ, կերկեր, տատրակ, ո(ր)ջիլ, բորեղ, բրետ** և այլն):

Հնդեվրոպական նույն արմատից եկող բառերը այս կամ այն տարածքին են հատկացվել ըստ տարածքային հատկանիշների ընդհանրության: Իբրև բառային զուգաբանության՝ արտահայտության պլանի տարածքային հատկանիշներ ընտրվել են մեծ մասամբ **իմաստագատիչ գործառություն** ունեցող լեզվական տարրերը: Դրանք հիմնականում բառակազմական տարբեր միջոցներն են (ածանց, աճական, ձայնդարձ և այլն): Բովանդակության պլանի տարածքային հատկանիշներ են ընտրվել նույնիմաստությունը, մերձիմաստությունը և տարիմաստությունը: Այսպես, օրինակ, հայերենի **եղն** (ձայնորդահանգ ն հոլովման) «եզ ջեջերու» բառը կապվում է հ.-ե. \*el-, \*ol- (**կարմիր, գորշ, թխաթույր**) արմատի հետ, հմմտ., օր., թոխ. A yal «այծեղջուր», ylem «այծեղջուրին պատկանող»: Հ.-ե. այս արմատը ցեղակից լեզուներում հանդես է գալիս տարբեր ածանցներով:

Հայերենը և հետևյալ լեզուներն ունեն -\*en-, \*-ú- ածանց և միևնույն ձայնավորումը, հմմտ. հայ. **եղն**, հուն. -11Ås «եղնիկ»

(<\*el-n-os- ħg), -λαφος, «եղն, եղջերու» (<\*el-ú-bho-s), միկեմ. հուն. e-ra-pi-ja, իգ. ս. «եղնիկ», հ. իռլ. elit «եղնիկ» (<\*el- ú-thō -ħg), լիտ. élnis «եղն», պրուս. alne «արու եղջերու», հսլ. jelenĀ, alĕnijĀ «եղն», ռուս. олень, лань (հայ-հունա-կելտա-բալթիա-սլավոնական):

Յ.-ե.\*-նհ-ածանցն առկա է՝ \*(e)l-նհ-ħg առաջացած ձևերում, հմմտ. հ. հնդկ. Āśya, («Ռիգվեդայում», հմմտ. նույն տեղում Ծśya-dā «այծեղջյուրի ծուղակ», Ծśa «այծեղջյուրի արուն», հուն. ελκη «եղջերվակով», լատ. alc', ս. հ. alc's, «եղջերվակով», հ. ռուս. лось, նույնը, հ. վգերմ. Țho, Țaho, գերմ. Elch, հ. անգլ. eolh, հ. իսլ. elgr «եղջերվակով», որից անգլ. elk (հնդկա-հունա-լատինա-սլավոնա-գերմանական): Յ.-ե. այս արմատի ածանցական երկու ձևերը բացահայտում են նաև իմաստային բաշխվածությունը նշված տարածքներում՝ առաջին տարածքին բնորոշ են «եղնիկ», իսկ երկրորդին՝ «այծեղջերու, եղջերվակով» իմաստները: Պարզ արմատ դրսևորող թոխարերենի yäl ձևը իմաստով հարուն է վերջին տարածքի լեզուներին: Յ.-ե. որոշ բարբառներ արդեն վաղ շրջանում տաբուի էին ենթարկել եղնիկի անվանումը՝ այն փոխարինելով այլ անվանումներով (տես Դամքրելիզե, Իվանով, էջ 518): Իրանական լեզուներում, օրինակ, որտեղ **եղնիկը** բնորոշվում էր հատուկ ծիսական-պաշտամունքային արժեքով, այդ անվանումը փոխվել է բարդ \*gav- az- (na-) «ցուլ, այծ» բառով, ինչպես ավ. gavasna- «եղնիկ», պրթ. gavazn, սոգդ. γ'wzn և այլն: Ավելի ուշ այս անվանումը իրանական առանձին լեզուներում դարձյալ տաբուի է ենթարկվում՝ փոխարինվելով տարբեր արտահայտչական անվանումներով, ինչպես՝ «եղջերավոր, ճյուղավոր» և այլն (տես Ածաբ, հ. II, էջ 320, Դամքրելիզե, Իվանով, էջ 519):

Ստորին աշխարհի կենդանիներից տարածքային լայն ընդգրկում ունեցողը **մուկն** բառն է, որը զարգացել է հ.–ե. \*mās- արմատից: Չայերեն բառում առկա է \*-ko- ածանցը (հիմտ. **ձուկն** և այլն): Այս արմատը ցեղակից լեզուների մեծ մասում ունի և՛ **մուկ**, և՛ **մկան** նշանակությունները: Իմաստի նմանօրինակ զարգացումը հայերենում անկախաբար չի առաջացել, այլ հատուկ է եղել հ.–ե. նախալեզվին, որից էլ ժառանգաբար անցել է նոր լեզուներին: Չավանաբար բառը եղել է համահնդեվրոպական համանունություն: Ըստ երևույթին **մարմնի մասի** և **կենդանու անվանումները** տարբերակելու համար լեզուները ստեղծել են ձևաբանակն տարբեր միջոցներ: Չայերենում և մի շարք այլ լեզուներում ի հայտ եկող \*-ko- ածանցը բառին հաղորդել է մարմնի մասի իմաստ, ինչպես՝ լատ. musculus, հ. սլ. μυςъса «մկան», հ. հնդկ. muskā

«ծվարան, կանացի սեռական օրգան», հուն. *μυσχον* «սեռական անդամ» և այլն (հայ-հնդկա-հունա-լատինա-սլավոնական): Արմատական ձևով սրանց հակադրվում են՝ հ. հնդկ. *mēs* «մուկ», «առնետ», պրսկ. *mēsš*, օսս. *myst* «մուկ», հուն. *mñs*, հսլ. *myšĀ*, ալբ. *mĀ*, լատ. *mēs*, հ. իսլ., հ. վգերմ., հ. անգլ. *mēs* «մուկ» (զերմ. *Maus*, անգլ. *maus*) (հնդկա-իրանա-հունա-լատինա-գերմանա-ալբանա-սլավոնական): Բառը բացակայում է միայն բալթիական և կելտական լեզուներում, որոնց մեջ տաբուի պատճառով այն փոխարինվել է «սև, մոխրագույն» արմատից առաջացած ձևերով: Նման վերլուծության են ենթարկվել նաև մնացած բառերը:

Լեզուների տարածքային կազմերը բացահայտելու նպատակով կազմվել են աղյուսակներ՝ հետևյալ սկզբունքներով՝

ա) Տարածքային տվյալ հատկանիշի առկայությունը լեզուներում արտահայտվել է (+) նշանով, իսկ բացակայությունը (–)–ով չի բերվել, քանի որ տրվել են նաև հակադիր տարածքները: Բառիմաստի համար +, ±, – նշաններով արտահայտվել են համապատասխանաբար՝ նույնիմաստությունը, մերձիմաստությունը, տարիմաստությունը: Միևնույն լեզվում մեկից ավելի տարածքային հատկանիշների առկայությունն արտահայտվել է նույն սյունակում՝ գծիկով (/):

Վիճակագրություն կատարելիս հաշվի է առնվել բառային զուգաբանությունների տարածքային հատկանիշների ոչ միայն համընկնումները, այլև դրանց՝ տվյալ աղյուսակում հանդես գալու հնարավորություններն առհասարակ:

Ալբաներենից, խեթերենից, թոխարերենից, իտալյան որոշ լեզուներից քիչ թվով տվյալներ են պահպանվել, այդ պատճառով էլ հայերենի և ցեղակից մյուս լեզուների մերձավորության աստիճանը պարզելիս դրանք բերվում են հարցականով:

Ստորև բերում ենք վերլուծական զուգաբանությունների աղյուսակների մեկ նմուշ (տե՛ս աղյուսակը):

Հայերեն բառը	Հ.-ե.	Տարածքային հատկանիշներ	Հայ.	Հ.հնդ.	հրան.	Հուն.	Լատ.	Իտալ.	Կելտ.	Պերս.	Բալթ.	Սլավ.	Խեթ.	Թրիս.	Ալբ.	
Եղ(ն)	[*el-,*ol-] *el-en	*-en-,*-ú- ածանց	+			+			+		+	+				
		*-ú <sup>(h)</sup> ածանց		+		+	+			+		+				
		պարզ արմատ													+	
		իմաստ	+	±		+/-	±			+	±	+	+/-		±	
Մուկն	[*mǎs-] *mēs-	*-ko- ածանց	+	+		+	+					+				
		պարզ արմատ		+	+	+	+				+		+			+
		իմաստ	+	+/-	+	+/-	+/-				+		+/-			+
Արջ	[*ðk'-po-s-] *ðk'tio-s ?	*-to- ածանց	+			+			+					+		
		*-so- ածանց		+	+		+									
		իմաստ	+	+	+		+			+				+		
Առիւծ	[*r' u-] *reu-g'- կամ *reëǎg'-	*-g'- ածական	+			+	+		+	+		+				
		պարզ արմատ					+									
		իմաստ	+				±	±			±	±		±		
Ոգնի	[*eg'hi-] *og'hiniǎo-	*-n- ածական	+		+	+										
		*  - ածական									+					
		իմաստ	+		+	+										
Ինձ	[*simg'h-] *simg'h-	մեկուսացած	+	+												
		իմաստ	+	+												

Աղյուսակներից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Բննարկված զուգաբանությունների մեջ չեն պահպանվել համահնդեվորոպական ընդհանրություններ: Եղած բոլոր բառերն էլ հանդես են բերում ավել կամ պակաս չափով տարծքային սահմանափակումներ: Նման փաստի պատճառը հավանաբար այն է, որ հ.–ե. ցեղերը հաճախ են ենթարկվել տարածքային տեղաշարժերի, որոնք ուղեկցվել են ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհների փոփոխությամբ (հմնտ. նաև Աղաբեկյան, էջ 77): Այս առումով հայերենը հարաբերականորեն կայուն տարածք է կազմում հունարենի, հնդ-իրանական մասամբ նաև սլավոնական լեզուների հետ: Հայերենի հետ բավականին ակտիվություն են հանդես բերում նաև խեթերենը, գերմանակն և բալթիական լեզուները: Բառերի ոչ մեծ մասն է ընդգրկված մեծ տարածքներում (**եղն**, **մուկն**, **որոր**, **կռունկ մուն** և այլն), չորս բառ էլ՝ **քարթ**, **գորտ**, **սարդ**, **բիբի**, կազմում են մեկուսացած տարածքներ:

2. Իմաստային տեսակետից թեմատիկ այս խմբին բնորոշ են հետևյալ հատկանիշները. ա) շատ բառեր բնածայնական ծագում ունեն, հմնտ. **առիծ**, **հոպոպ** և այլն, բ) անվանակազմության համար շատ դեպքերում հիմք է հանդիսացել կենդանու գույնը, բնորոշ հատկանիշը և այլն: Անվանափոխությունը հաճախ կատարվել է տաբուի պատճառով (**արջ**, **գայլ**, **օձ**, **մուկ** և այլն): Լեզուներում նկատվում են նաև կենդանիների անունների փոխանցումներ (ինչպես՝ հայ. **իճձ**, հ. **հնդկ**. առիծ):

3. **Ձևաբանական առանձնահատկությունները:** Վայրի կենդանիների անվանումների մեծ մասը վերախմբավորվել է **-ու**-ով հիմքերի շուրջը (հմնտ. **աղուէս** – **առիծ**, **իճձ** և այլն): Սրանց մեջ կան այնպիսիները, որոնք շարունակում են հ.–ե. **\*-u**-ով հիմքերը, ինչպես **\*alʰpeku** – **աղուէս** (**-ու**-), մի մասն էլ հետագայում է խմբավորվել այս հիմքերի շուրջը՝ իբրև կենդանիների անվանումներ նշանակող բառեր: Որոշ դեպքերում հ.–ե. ածանցական հիմքերը հայերնում դարձել են արմատական բառեր՝ կառուցվածքային այլ կաղապարով, օրինակ՝ **մուն** < \*mu-no-ից, **սարդ** < \*kñ-ti-ից և այլն: Այս բոլորից բացի հ.–ե. նույն արմատից ածանցումով հայերենում զարգացել են տարբեր նշանակությամբ բառեր, ինչպես \*egʰi- արմատը **\*-no**-ով աճած՝ \*egʰino-, ձայնավորման փոփոխությամբ և երկրորդային **-\*Áo-** ածանցով՝ \*ogʰiniÁÁo-, որից հայ. **ոզնի** (ավելի մանրամասն տե՛ս Specht, Джаукян, Туманян):

4. Հնչյունական տեսակետից քննվող խմբի բառերը հիմնականում յուրահատկություններ հանդես չեն բերում: Այս առումով որոշ դժվարություններ է հարուցում **գայլ, արջ** բառերի ստուգաբանությունը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

**Абаев В.И.**, Историко-этимологический словарь оситинского языка, 1958-73, т. II.

**Гамкрелидзе Т.В., Иванов В.В.**, "Индоевропейский язык и индоевропейцы", Тбилиси, 1984.

**Джаукян Г.Б.**, Сравнительная грамматика армянского языка, Е., 1984.

**Туманян Э.Г.**, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978.

**Specht F.**, Der Ursprung der indogermanischen Deklination, Göttingen, 1947.

**Աղաբեկյան Մ.Ա.**, Հնդեվրոպական բուսանունները հայերենում, «Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ» գրքում, Երևան, 1979:





**ՔՄԱՅԻՆ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐՈՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՎԱՄՊՈՒՐՎԱԿՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Վասպուրական աշխարհը տարբեր դարերում տարածքային տարբեր ընդգրկումներ է ունեցել: Թուրքական տիրապետության ժամանակ այն մի քանի անգամ վերածնվել է, որի ընթացքում Վասպուրականի մեջ մտել կամ նրանից անջատվել է այս կամ այն գավառը: Վասպուրական տեղանունը՝ որպես թուրքական վարչաքաղաքական միավորի անվանում, չի կիրառվել: Սակայն հայ ժողովուրդն այն մշտապես գործածել է, և այսօր, Վասպուրական ասելով, ընկալում ենք հիմնականում Արևմտյան Հայաստանի Վանի նահանգը 19-20-րդ դարերի դրությամբ: Այդ ժամանակ նրա գավառներն էին՝ Վան-Տոսպ, Թիմար, Արճակ, Աղբակ, Բերկրի, Արճեշ, Արծկե (Ադիլջևագ), Հայոց ձոր, Խոշապ, Ոստան, Կարճկան, Շատախ, Նորդուզ (Անձևացյաց), Մոկս և Կառկառ գավառի մի մասը (տե՛ս Յ.Պողոսյան, էջ 18-27):

Վերոհիշյալ տարածքի բարբառային միավորները, ըստ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման, հիմնականում մտնում են Վանի բարբառի մեջ: Դրանք են՝ Վանի, Շատախի, Մոկսի, Ոզմի, Բաստի խոսվածքները (Գ.Ջահուկյան, էջ 134-135): Այս տարածքի խոսվածքային մյուս երկու միավորները՝ Արծկեն և Արճեշը, պատկանում են Մուշի բարբառին (տե՛ս նույնը, էջ 134):

Հիշյալ բարբառային միավորների վերաբերյալ հրատարակված աշխատանքներում և ԳԱԱ լեզվի ինստիտուտի կողմից հավաքված համապատասխան նյութերում այլ լեզուներից՝ տվյալ բարբառային միավորներում կատարված փոխառությունները ուսումնասիրության առարկա չեն դարձել: Մ.Մուրադյանը և Ն.Հովսեփյանը իրենց աշխատանքներում փորձում են ներկայացնել արաբերենից, պարսկերենից, թուրքերենից ու քրդերենից Շատախի և Ոզմի խոսվածքներում կատարված փոխառությունները (Մ.Մուրադյան, էջ 81, Ն.Հովսեփյան, էջ 318-321): Սակայն այդ լեզուների և հայերեն բարբառների՝ հեղինակների կողմից բերվող համապատասխան ձևերը հաճախ հնչյունական անհամապատասխանություններ են դրսևորում: Պարզված չեն նաև դրանց ժամանակագրությունը, միջնորդավորված, թե անմիջական փոխառություններ լինելը:

Հայ ժողովրդի բազմադարյա շփումները հարևանների հետ իրենց ազդեցությունն են թողել հայոց լեզվի վրա՝ նրա զար-

զացման բոլոր փուլերում: Հայերենի բարբառները՝ որպես լեզվի կենդանի խոսակցական տարբերակներ, ավելի զգայուն են եղել օտար թափանցումների նկատմամբ, քան գրական լեզուն:

Հայերեն բարբառների բառային փոխառությունները սովորաբար ուսումնասիրողները ժամանակագրորեն բաժանում են երկու հիմնական խմբի. հնագույն, այսինքն՝ հայ մատենագրությամբ ավանդված, հետևաբար տվյալ բարբառի պատմական հնչյունական օրենքներին ենթարկված և նոր՝ դասական մատենագրության մեջ չվկայված և տվյալ բարբառի պատմական հնչյունական հիմնական օրենքներին չենթարկված: Առաջին խմբի փոխառությունները հետազոտողները համարում են անմիջապես գրաբարից բարբառներին անցած ձևեր: Նրանց տեսանկյունով դրանք բարբառի հնչյունական օրենքներին ենթարկվել են հետագայում՝ ետգրաբարյան շրջանում: Իսկ նորագույն կոչվող օտար փոխառությունները բարբառներ են թափանցել գրաբարի՝ որպես կենդանի խոսակցական լեզվի գործառույցում դադարելուց հետո: Այսպիսի բացատրությունը հենվում է այն վարկածի վրա, ըստ որի հայերեն բարբառները զարգացել են գրաբարից: Սակայն բարբառագիտական հետազոտությունների արդյունքներն ավելի ու ավելի համոզիչ են դարձնում այն տեսակետը, ըստ որի բարբառային որոշ յուրահատկություններ գալիս են հնագույն, այսինքն՝ նախագրային ժամանակներից (տե՛ս Ա.Ղարիբյան, էջ 23, Գ.Ջահուկյան, էջ 246, Յ.Սուրադյան, էջ 51):

Վասպուրականի տարածքի խոսվածքներում այդպիսի հնչյունական հնարանություն է համարվում, օրինակ, **հ>խ** (բրբռ.) անցումը: Ա.Ղարիբյանն այս երևույթը բացատրում է ուրարտական ենթաշերտով (տե՛ս Ա.Ղարիբյան, նույն տեղում): Իսկ Գ.Ջահուկյանը, նույն միտքը զարգացնելով, գրում է. «Բառասկզբի **հ**-ի դիմաց **խ**-ի առկայությունը, անշուշտ, ենթաշերտային, թերևս, ինչպես կարծում են, ուրարտական ազդեցության արդյունք է, մասնավորապես այդ երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում» (Գ.Ջահուկյան, էջ 267): Հետևությունը մեկն է՝ **հ>խ** անցումը հայերենի բարբառներում կատարվել է մ.թ.ա. 9-6-րդ դարերում: Դա ժամանակաշրջան էր, երբ Հայկական բարձրավանդակում իշխում էր Ուրարտուն:

Հնագույն տարածքային հատկանիշ է համարվում նաև որոշ հայերեն բարբառներում սկզբնական ձայնեղ հպական բաղաձայններից հետո ետին շարքի ձայնավորների առաջնալեզվային արտասանության երևույթը (Աճառյանի օրենքը) (Հ.Աճառյան, էջ 19): Ձայնավորների քմայնացման և փակ արտասանության մասին

խոսելով՝ Գ.Ջահուկյանն իր՝ վերը նշված աշխատության մեջ գրում է. «... այդ պրոցեսները շատ դեպքերում բավականաչափ հին են և հասնում են մինչև նախագրային շրջանը» (Գ.Ջահուկյան, էջ 269, տե՛ս նաև Յ.Սուրադյան, էջ 49):

Հենվելով նման փաստարկների վրա՝ կարելի է ենթադրել, որ հայերենի հնագույն փոխառությունների առնվազն մի մասը բարբառներին են անցել գրաբարի (գրական լեզվի) գրավոր վկայվելուց ավելի շուտ և ենթարկվել նրանց՝ կոնկրետ ժամանակաշրջանի հնչյունական օրենքներին: Այդ դեպքում չի բացառվում, որ, օրինակ, Վասպուրականի տարածքի խոսվածքներում առկա **պ՞րօկ**, **պ՞ժնել**, **կ՞՞զօն**, **կնմեշ**, **տ՞՞շտ**, «դաշտ», **տ՞րմօն** և նման այլ ձևերը, որոնցում գործել է Աճառյանի օրենքը, խնդրո առարկա տարածքի հայ բնակչությունն անմիջապես փոխառել է դրացի իրանական ժողովուրդներից և ոչ թե միջնորդավորված ձևով, ասենք, գրաբարից:

Այսպես կոչված նոր փոխառությունները Վասպուրականի տարածքի խոսվածքներում հեշտությամբ են առանձնանում, եթե դրանցում կան ձայնեղ հպականներ: Օրինակ. **բիբօր**, **դօն** «անգամ», **դնշապ**, **գնզլիկ** «ակնոց» և այլն: Անշուշտ, նշված բառերը այս խոսվածքներ են թափանցել վերջիններիս հնչյունական համակարգերում ձայնեղ հպականների խլացման օրենքի դադարելուց հետո: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ քմային ձայնավորները վերոհիշյալ բառերում հենց փոխատու լեզվի հնչյուններն են:

Որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, իրանական փոխառություններում, քմային **ա** ձայնավորին փոխատու լեզվում համապատասխանում է կարճ **a**, որն այժմ ունի առաջնալեզվային արտասանություն (տե՛ս Յ.Աճառյան, էջ 17, Г.Асагрян, էջ 18): Այսպես. **բօխտ**, պրսկ. baxt, **նօմ**, պրսկ. nom, **վօխտ** պրսկ. vaxt, **վորթ**, պրսկ. vart: Մինչդեռ քմային ձայնավորներով հարուստ մեկ այլ, ասենք, Ղարաբաղի բարբառի խոսվածքների մեծ մասում, այդ նույն բառերում **ա** հնչյունը առաջնային շարքի ձայնավոր չէ. **բախտ**, **նամ**, **վախտ**, **վարթ**: Հավանաբար դա պետք է բացատրել Ղարաբաղի և Վանի բարբառներում **ա**-ի քմայնացման աստիճանի տարբերությամբ: Վասպուրականի տարածքի խոսվածքների առաջնային շարքի **ա**-ն արտաբերման տեղով մոտենում է պարսկերենի առաջնալեզվային **a** ձայնավորին, որի քմայնացումն ավելի թույլ է, քան, ասենք, Ղարաբաղի բարբառի համապատասխան հնչյունինը: Դրա հետևանքով Ղարաբաղում այն՝

որպես քմային, չի ընկալվում: Ի դեպ, իրանական կարճ **a**-ն խուլերից հետո այս բարբառում արտացոլված է ո՛չ առաջնալեզվային ձայնավորով, այսինքն՝ այն ենթարկվել է խուլերից հետո գործող այն օրենքին, ըստ որի ձայնավորներն իրենց արտաբերման տեղով ետ են շարժվում:

Քանի որ Վասպուրականի տարածքի խոսվածքներում (նաև՝ Ղարաբաղի բարբառում) ռնգայինների մոտ բառամիջում ձայնեղ հպականները և կիսաշփականները պահպանվել են (**պ<sup>ո</sup>նջ<sup>ո</sup>ր**, **կ<sup>ո</sup>նգ<sup>ո</sup>տ** և այլն), տվյալ դիրքում ձայնեղներ ունեցող փոխառությունների (**ս<sup>ո</sup>ր<sup>ո</sup>ր**, **զ<sup>ո</sup>նգ<sup>ո</sup>կ** և այլն) հարաբերական ժամանակագրությունը որոշելը դժվարանում է: Ե՞րբ են դրանք բարբառ թափանցել՝ Աճառյանի օրենքի գործառուծմից առա՞ջ, թե՞ հետո:

Հիշյալ տարածքի խոսվածքներում ձայնեղներից հետո ետին շարքի ձայնավորների առաջնային արտասանության օրենքը **օ**, **ու**-ի դեպքում նույն հետևողականությամբ չի գործել, ինչպես՝ **ա**-ի: Դրա հետևանքով առաջնային և ետին շարքի հակադրությամբ նույն որակի ձայնավորների գործառական հարաբերակցությունը խոսքում խիստ անհամաչափ է եղել: Եթե **ա** և **օ** ձայնավորների գործառական ծանրաբեռնվածությունները գրեթե հավասար էին, ապա նույնը չի կարելի ասել **օ** և **ու**, **ու** և **օ** հնչույթների մասին: Շրթնային **ւ** և **օ** ձայնավորներն ավելի քիչ էին հանդիպում խոսքի շղթայում, քանի որ Աճառյանի օրենքին սկզբում ենթարկվել է հիմնականում **ա** ձայնավորը: Համակարգի այս բացը կարծես լրացվել է համապատասխան հնչյուններ ունեցող փոխառություններով: Օրինակ՝ թուրքերեն **քնք** «ծառի բուն», **գննիկ** «բռունցք», **գնզիկ** «ակնոց», **զօռ** «թեժ», **քօլաշ** «ծղոտ», **սօրօ** «ոչխարի հոտ» և այլ ձևերով մեծացել է առաջնային շարքի շրթնային ձայնավորների գործառական ծանրաբեռնվածությունը:

Վանի բարբառի և Արծկեի, Արճեշի խոսվածքների **ժ**, **զ**, **վ** ձայնեղ շփականներով բառերի բավական մասը իրանական փոխառություններ են: Եվ հաճախ դժվար է որոշել, թե բարբառային այս կամ այն ձևը հին, ասենք, պարթևական շրջանի՞ց է գալիս, թե՞ նոր պարսկական քմային ձայնավորով փոխառություն է. **ժ<sup>ո</sup>մ**, **ժ<sup>ո</sup>նգ**, **վ<sup>ո</sup>ստ<sup>ո</sup>կ**: Մի բան պարզ է, սակայն, որ բնիկ հայերեն համարվող այնպիսի բառերում, ինչպես՝ **լըվ<sup>ո</sup>ցք**, **երվ<sup>ո</sup>լ**, **Սեվ<sup>ո</sup>ն**, **ծըվ<sup>ո</sup>զեղ**, **զ<sup>ո</sup>տ** «առանձին», **զ<sup>ո</sup>րթուն**, **զ<sup>ո</sup>րմ<sup>ո</sup>նալ** և այլն, ձայնեղ շփականներից հետո **ա**-ն նույնպես քմայնացել է (°):

Աճառյանի օրենքի գործառության ժամանակ, երբ ձայնեղ հպականները դեռ չէին խլացել, քմային ձայնավորները տվյալ հնչույթի դիրքային տարբերակներն են եղել: Օրենքը դադարելուց

հետո դրանք դարձել են ինքնուրույն հնչույթներ (հատկապես՝ ա-ի դեպքում): Օրինակ՝ կարի՛ («կարել» բայի հիմ.), կ՞րի «գարի», տասս (թվականը), տ՞սս (դաս): Նույնը կարելի է ասել նաև հին փոխառությունների վերաբերյալ: Դրանցում քմային ձայնավորները, եթե նույնիսկ փոխատու լեզվից նույնությամբ բարբառին անցած հնչյուններ են եղել, դարձյալ գործառել են որպես համապատասխան ձայնավորների դիրքային տարբերակներ:

Այսպիսով՝ Վանի բարբառի և Մուշի՝ խնդրո առարկա խոսվածքների հնչյունական համակարգերը ձևավորվել են ինչպես ներքին օրինաչափությունների գործառնման հետևանքով, այնպես էլ օտար լեզուների հնչյունական ներթափանցումների շնորհիվ:

Վասպուրականի տարածքի խոսվածքների, բացառությամբ Արծկեի ու Արճեշի, հնչյունական յուրահատկությունների զարգացումը հանգեցրել է համակարգում ետին շարքի ձայնավորների քմայնություն – ո՛չ քմայնություն հատկանիշների հնչույթային հակադրության: Գրեթե նմանատիպ հակադրություն գոյություն ունի նաև հարևան ժողովուրդների լեզուներում: Հետևաբար՝ դրանցից կատարված փոխառությունների միջոցով Վանի բարբառում ավելացել են քմային և ո՛չ քմային հակադրությամբ բառերի քանակը: Սա էլ նպաստել է բարբառում այդ հակադրության կենսունակության պահպանմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

**Հ.Աճառյան**, Զննություն Վանի բարբառի, Երևան, 1953 թ.:

**Ն.Հովսեփյան**, Ոգմի բարբառը, Երևան, 2001 թ. (ատենախոսություն):

**Ա.Ղարիբյան**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, «ՊԲՀ», Երևան, 1958, թիվ 3:

**Մ.Մուրադյան**, Շատախի բարբառը, Երևան, 1962 թ.:

**Հ.Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, Երևան, 1982 թ.:

**Հ.Պողոսյան**, Վասպուրականի պատմությունից. 1850-1900, Երևան, 1988 թ.:

**Գ.Զահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

**Г.Асатрян**, Контакты армянского с новоиранскими языками, автореферат докторс. диссертации, Ереван, 1992 г.



**ՖՐԱՆՍԵՐԵՆ ԴԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱՂԱՐՁՄԱՆ ՇՈՒՋ**

Ժամանակի ընթացքում օտար բառերի տառադարձման կանոնները փոփոխման ու ճշգրտման կարիք են զգում, որը պայմանավորված է մի քանի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: 30-ական թվականներից հայերենի նորմավորման ու տառադարձության հարցերով զբաղվել է տերմինաբանական կոմիտեն: «Ռուսերեն և օտար բառերի ու տերմինների տառադարձության նորմերի» մասին առաջին որոշումը ընդունվել է դեռևս 1939թ., այն չէր ընդգրկում բոլոր հիմնական դեպքերը: Այնուհետև մի շարք որոշումներում կոմիտեն փոփոխել ու լրացրել է ընդունված սկզբունքները: «Հայոց լեզվի նորմավորման ընդհանուր սկզբունքներում» օտար փոխառությունների հիմնական աղբյուրը համարվում էր ռուսաց լեզուն և միաժամանակ սահմանվում էր, որ օտար բառերի հայերեն գրության ու արտասանության մեջ պետք է հաշվի առնել նաև աղբյուր լեզվի արտասանությունը: Նման երկակի մոտեցումը զուգաձևությունների պատճառ է հանդիսանում մեր օրերում նույնպես: Մոտ 800 աշխարհագրական անունների և պատմական անձնանունների տառադարձությունը ճշտվել է թարգմանիչ և բառարանագիր Վ.Փոթեյանի (1958թ.) նախագծերով: Վերջին չորս տասնամյակների ընթացքում դրանցում տեղ գտած որոշ անունների տառադարձումներում կատարվել են մասնակի փոփոխություններ: Անգլերեն, ինչպես նաև հունական ծագում ունեցող բառերի հայերեն տառադարձությունը կանոնակարգվել է ակադեմիկոս Գ.Զահուկյանի նախագծերով (1983թ., 1985թ.): Այսուհանդերձ, օտար բառերի տառադարձության հարցը մնում է հայոց լեզվի զարգացման արդիական և հրատապ լուծում պահանջող խնդիրներից մեկը: Մեր ժամանակներում դեռևս շատ կան չկանոնավորված գրություններ ու տարընթերցումներ, այնուամենայնիվ, ռուսերենին հատուկ արտասանությունից հրաժարվելու, տառադարձությունը աղբյուր լեզվի արտասանությունը մոտեցնելու միտումներն ակնհայտ են:

Ուղղագրական և արտասանական զուգաձևություններ շատ են հանդիպում հատկապես ֆրանսերեն անունների հայերեն տառադարձումներում: Պատճառն այն է, որ այս բառերը թափանցել են գրական արևելահայերեն երեք ճանապարհով՝ արևմտյան հայերենից, ռուերենի միջնորդությամբ և անմիջապես ֆրանսե-

րենից:

Արևմտահայերենից եկած հատուկ անունները, երբեմն, հնչմամբ ավելի մոտ են աղբյուր լեզվին, քան ռուսերենի միջոցով թափանցած բառերը, սակայն դրանք տառադարձված են արևմտահայերենի ուղղագրական նորմերին համապատասխան:

Չնայած ռուսերենը շուրջ մեկ տասնամյակ է, ինչ դադարել է այլ ժողովուրդների մշակութային նվաճումներին հաղորդակից դարձնող լեզվի դերը կատարելուց, այն ժամանակներից հայերենին անցած բազմաթիվ օտար տեղանուններ և անձնանուններ հայերենում շարունակում են ունենալ այլ հնչողություն, քան աղբյուր լեզվում: Այսպես՝ ռուսերենի միջոցով թափանցած որոշ անուններ ամրապնդվել են լատինական հնչմամբ, աշխարհագրական անունների մի մասն ունի ռուսաց լեզվի իզականին հատուկ սեռային վերջավորություն: Օրինակ՝ **Մառն, Լուար, Սեն** տառադարձումներին զուգահեռ հանդիպում ենք **Մառնա, Լուարա, Սենա** ձևերին:

Շատ են այն դեպքերը, երբ հենվելով միայն ռուսերենի տառադարձման վրա, հաշվի չառնելով աղբյուր լեզուն, հայերենի համապատասխան հնչյունը օգտագործելու փոխարեն ֆրանսերեն բառերը տառադարձվում են միջնորդ լեզվին՝ ռուսերենին՝ համարժեք հնչյունով: Այսպես՝ **Լեսաժ՝ Լըսաժի** փոխարեն, **Սեն Դենի՝ Սեն Դընիի** փոխարեն և այլն:

Երբեմն հայերեն տառադարձումներում զգացվում է մի այլ միջնորդ լեզվի ազդեցություն, որն իր հերթին կրել է ռուսերենը: Այսպես, հետևյալ օրինակներում ռուսերենը (հետևաբար նաև հայերենը) պահպանել է ավանդական գերմաներեն արտասանությունը՝ **Alsace**→**Վեսսաճ**→**Էլսազ**, **Lorraine**→**Էլ Ծաձեի ձեյ**→**Լոթարինգիա**, **Vosges**→**Վոսճեզ**→**Վոզեզներ**:

Մի քանի այլ տառադարձումներում էլ զգացվում է իտալական ազդեցությունը. օրինակ՝ **Nice**→**Նիս**, **Corse**→**Էլ Ծիս**→**Կորսիկա**:

Ամմիջապես ֆրանսերենից տառադարձված անունները իրենց հնչմամբ բնականաբար ավելի հարազատ են աղբյուր լեզվի ձևերին: Օրինակ՝ Փարիզ(←**Paris**) բառում հնչյունական պատկերի «շեղում» է նկատվում այն պատճառով, որ այն տառադարձվել է շատ վաղուց՝ հին ֆրանսերենի հնչողությամբ:

Թարգմանված գեղարվեստական գրականության և ժամանակակից մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաբաղադրիչ բառերի տառադարձումներում առկա է ուղղագրական շփոթ՝ բաղադրիչների մասին, անջատ կամ զծիկով գրելու հար-

ցում: Իսկ ֆրանսերեն տեղանուններում բազմաբաղադրիչ բառերը չափազանց շատ են. օրինակ. Bar - le - Duc→Բար-լը-Դյուկ, Clichy - sous - Bois→Կլիշի-սու-Բուա, Pic du Midi de Bigorre→Պիկ դյու Միդի դը Բիգոր:

Հարկ է նշել, որ հայերեն տառադարձման համար որոշակի դժվարություն է ներկայացնում նաև ֆրանսերեն անձնանուններում և տեղանուններում ապաթարցի, հողերի, նախդիրների և շաղկապների առկայությունը:

Մամուլի էջերում երբեմն հանդիպում ենք գրադարձման՝ տառադարձման փոխարեն: Այսպես՝

Իվ Սենտ-Լորան (←Yves Saint-Laurent)՝ Իվ Սեն-Լորանի փոխարեն,

ժան-Պոլ Գոլթիե (←Jean-Paul Gaultier)՝ ժան-Պոլ Գոթիեի փոխարեն:

Խնդրահարույց է նաև **Սեն, Սենտ** (←**Saint**) մասնիկով հատուկ անունների տառադարձումը հայերենում: Այս մասնիկներով բառերը հայերեն են թափանցել ոչ միայն ֆրանսերենից, այլև՝ անգլերենից, իտալերենից, իսպաներենից, պորտուգալերենից: Սեն-ժյուստ←Saint-Juste, Սեն-ժերմեն←Saint-Germain (քաղաք), Սեն-Մարտեն←Saint-Martin, Սեն-Սիմոն←Saint-Simon, Սեն-ժոն Պերս←Saint-John Perse, Սենտ-Բյով←Sainte-Beuve, Սենտ-Էքզյուպերի←Saint-Exupéry և շատ ուրիշ հատուկ անուններ գրվել են գծիկով (թվարկված օրինակները հանված են Հայկական հանրագիտարանից), իսկ Սենտ Էտիեն←Saint-Etienne(քաղաք), Սենտ Լյուիս←Saint Luis(քաղաք), Սենտ Լյուիսա←Saint Lucia (պետություն), Սենտ Կատարինս←Saint Catharines (քաղաք), Սենտ Վինսենտ←Saint Vincent (քաղաք) անգլերենից և պորտուգալերենից տառադարձված տեղանունները՝ առանց գծիկի: **Սանկտ Պետերբուրգ** բառը, որը ստուգաբանորեն նույն բաղադրիչով է կազմված, մամուլի էջերում հանդիպում է գծիկով (ինչպես ռուսերենում է) և առանց գծիկի: Բոլոր լեզուների համար միասնական մոտեցում դրսևորելիս հնարավոր է երեք սկզբունքի կիրառում: Կամ բոլոր բաղադրիչները միացվում են գծիկով, կամ անջատ՝ առանց գծիկի, կամ ուղղակի հետևելով փոխատու լեզվի ուղղագրությանը:

Ակադեմիկոս Ս.Աբրահամյանի վերջերս լույս տեսած «Հայերենի կետադրություն» ուսումնական ձեռնարկում հեղևնակը **սենտ** մասնիկը դնելով **դա, դը, վան, ֆոն** մասնիկների շարքում առաջարկում է դրանք գրել անջատ՝ առանց գծիկի, օրինակ՝ **Լեոնարդո դա Վինչի, Լյուդվիգ վան Բեթհովեն, Վիլհելմ ֆոն Հումբոլդտ:**



Հանդգլած ենք, որ նման առաջարկը կօգնի խուսափել գրության մեջ տեղ գտած զուգաձևություններից: Սակայն, դժվար է համաձայնել **սենտ** բաղադրիչը **դա, դը, վան, ֆոն** նախդիրների հետ նույն շարքում դասելու հետ, որովհետև ի տարբերություն վերոհիշյալների, որոնք նախկինում ցույց են տվել ազնվական ծագում կամ պատկանելություն որևէ հին կամ հայտնի տոհմի, **սեն(տ)-ը** նախդիր չէ, այլ լիինաստ բառ է նշանակում է «սուրբ»: Այս բառը հատուկ անվան մաս կազմելով ֆրանսերենում և այլ լեզուներում միշտ գրվում է մեծատառով(ի տարբերություն նախդիրների), ռոմանական լեզուներում գծիկով միացվում է անվան մյուս բաղադրիչին:

Հայոց լեզվի հնչյունական համակարգի հարստությունը թույլ է տալիս հիմնականում հարազատորեն վերարտադրել ֆրանսերեն բառերի հնչյունական պատկերը, սակայն, բնական է, կան նաև շեղումներ՝ պայմանավորված ֆրանսերենի և հայերենի հնչյունական համակարգերի տարբերություններով:

Տառադարձությունը մնում է կիրառական լեզվաբանության ոչ բավարար մշակված բաժին, և ֆրանսերեն-հայերեն տառադարձության սկզբունքների և տառադարձական համակարգի բացակայությունը (որի անհրաժեշտությունն զգում են գործնական տառադարձության հետ առնչվող թարգմանիչները, խմբագիրները, լրագրողները, դիվանագետները, ռեֆերատները, մատենագիրները և այլ մասնագետներ) առայսօր խոչընդոտ է հանդիսանում հատուկ անունների նույնականացման (իդենտիֆիկացիա) և, հետևաբար, թարգմանված տեղեկատվության ճիշտ ընկալման համար:



**ՀԱՅԵՐԵՆ «ՈՉԽԱՐ»-Ը ԵՎ ԱՌՆՉԱԿՑՎՈՂ ԿԵՆՊԱՆԻՆԵՐԻ  
ԱՆՈՒՆՆԵՐԸ**

Հայերենի ոչխար կենդանական անունը բազմիցս արժանացել է բառաքննական և ստուգաբանական հետազոտության: Ուսումնասիրողների մի մեծ խումբ զուգահեռ է անցկացրել հայերենի և թուրքական լեզուների համապատասխան ձևերի միջև, ընդ որում Պեդերսենը չաղաթայերենի և արևելաթուրքական մյուս ձևերի աղբյուրը դիտել է հայերենը /1905, 179-85/:

Բոլորովին այլ տեսակետ է պաշտպանել Հ. Աճառյանը: “Sprachwissenschaftliche Abhandlungen” պարբերականի էջերում /1897, I, 303/ և ապա Արմատականում նա փորձել է հայերենով ստուգաբանել ոչխար բառը և որովհետև չի գտել որևէ լուրջ փաստարկ, ապա եզրակացրել է, թե այն ունի կովկասյան ծագում, որի հետ համիմաստ են և ձևով նույնանում են լազ. չխուրի, մչխուրի, մենգ. շխուրի, վրաց. գխովարի, գխուարի, մգխվարի, ինգիլ. գխօր և այլն: Ինքը՝ Աճառյանը, նշում է, որ այս ձևերը հնարավոր չէ հայերենից բխեցնել, քանի որ դրանց հիմքում ընկած է գխով «ապրել, կենալ» արմատը, որից կազմված են նաև այնպիսի բառեր, ինչպես՝ գխովելի «շնչավոր անասուն», գխովրեքա «կյանք, կենսագրություն, պատմություն» և այլն: Լիովին համաձայնելով վերջին դատողություններին՝ չենք կարող համաձայնել սակայն հայ. ոչխար-ի կովկասյան ծագման հետ: Կարծում ենք, շփոթումը առաջ է եկել միմիայն արտաքին նմանության պատճառով, թեև ավելի ուշադիր քննելու դեպքում կասկած պիտի հարուցեր հայերենից տարբեր ձայնավորումը:

Միառժամանակ հետո հպանցիկ անդրադառնալով դրան՝ Աճառյանի ստուգաբանությունը վերահաստատել է Անտուան Մեյլե /Meillet, 1922:23. 72/: Եվ սա ըստ երևույթին հետագա ուսումնասիրողների համար ունեցել է կողմնորոշիչ նշանակություն:

Այժմ անդրադառնանք մեր դիտարկումներին: Նախքան այլ ցեղակից և ոչ ցեղակից լեզուների ընծեռած տվյալներին դիմելը և սրանց հետ համեմատության մեջ դնելը, անհրաժեշտ ենք համարում պարզել բոլոր այն հնարավոր տարբերակները, որոնք առկա են հայերենի գրավոր հուշարձաններում և կենդանի բարբառներում /այս դեպքում խոսքը գնում է, իհարկե, բարդության առաջին բաղադրիչի մասին՝ անտեսելով սրա առանձնաբար կամ կախյալ գործածության բնույթը/: Այսպես՝ բացահայտվում են հետևյալ

տարբերակները՝ խոճ, խոչ, դեճի, գոճի, կոճան /գոջան/, քոչ, հող, կոզ /կոնճ- և վերջապես խոզ: Բնականաբար, դժվար չէ նկատել, որ մեր կողմից ուրվագծվում է կենդանական անվան մի կաղապար, որի երկրորդ բաղադրիչը, եթե վստահելու լինենք հայերենի տվյալներին և այն համարենք նախնական մի բան, այլ ոչ թե ուշ ձեռքբերում՝ խար-ն է: Սա աներկբայորեն մտածել է տալիս բառի իրանական ծագման մասին: Հայտնի է, որ իրանական լեզուներում կենդանական բազմաթիվ բաղադրյալ անուններ կան, այդ թվում և խար-ով բաղադրված, ինչպես՝ *gur-xar*, *\*(n)ar-xar* և այլն:

Այսպիսով՝ հայերենի համար փոխառության աղբյուրը ինչպես պարզեցինք՝ իրանական լեզվոլորտն է, իսկ փոխատու նախածեր՝ *\*xoč-xar*-ը: Ինչպես երևում է, հայերենում այն ենթարկվել է հնչյունափոխության, որի արդյունքում սկզբնահնչյունը մատնվել է կորստի: Հետաքրքիր է նաև այն, որ ժամանակակից պարսկերենում այդ բառը չի պահպանվել, այլ միայն բաղադրիչներից յուրաքանչյուրն առանձին վերցրած: Ի միջի այլոց նշենք, որ պարսկերենում «ոչխար» նշանակմանը ծառայում են մի քանի բառեր. *miš*, միջ. պրսկ. *mēš*, որից էլ բաղադրված է *gāv-mēš* անունը և փխառված հայերենում գոմէշ ձևով, *gus-fand*, միջ. պրսկ. *gōs-pand* և *γῶč/γυč*: Ահավասիկ, իրանական լեզվական արեալը եղել է բառի առաջին գործածողը, որը հետո փոխանցել է թուրքական լեզուներին, հայերենին և սրա միջոցով վրացերենին՝ օչխարի ձևով՝ որոշակի իմաստային ընդլայնումով:

Բավարար համարելով բառի կազմության վերաբերյալ վերն ասվածը՝ չենք կարող չանդրադառնալ հ.- ե. տարբեր արեալներում այս անվան բարբառային բաշխմանը: Նկատենք, որ միևնույն բառույթը տարբեր արեալներում տարբեր բովանդակային կերպարանք է ընդունում, նաև հանդես գալիս մեկ որպես արմատական, մեկ էլ ածանցյալ ձևերով. Այսպես. սլավոնաբալթիական արեալում այն ունի «այծ» նշանակությունը՝ հ. սլ. *koza*, լատիշ. *kaza*, մի այլ արեալում՝ «խոզ»- հ.անգլ. *súg*, բրետ. *hoch*, անգլ. *hog*, միջ. պրսկ. *xūg*, ավ. *hūš*, հուն. *ὄς*, *ὄς*, հայ. խոզ, երրորդ արեալում՝ «ոչխար». Կունզարի բարբառ՝ *ghōs*, *ghōsan*, եթե իհարկե ուշ շրջանի իմաստափոխության արդյունք չէ: Այդպես կարելի է մտածել մանավանդ, եթե նկատի առնենք, որ միջ. պրսկ. *gōs-pand* «ոչխար»-ը բաղադրյալ միավոր է, որի երկրորդ բաղադրիչը՝ *pand*, ծագումնաբանորեն նույնանուն է հայ. (h)անդ արմատի հետ /հմմտ. նաև անդի, անդեայ-ք «նախիր, արածող կենդանիներ»/: Ի դեպ, այս դեպքում հայերենը օգնում է իրանական ձևի ստուգաբանությանը, որ հավանաբար ունեցել է «հանդերի/արտերի այծ» նախնական

իմաստը, որը կցվել է «ոչխար» կենդանուն: Չորրորդ արեալում այն ունի «ոգնի» նշանակությունը՝ հուն. *έχτρος*, փոյուզ. *εξίς*, հայ. *ոգնի*, բրբռ. *կոզ-նի/կոնծ-նի/«խոզ»*-ի և «ոգնի»-ի իմաստային փոխառնչության առումով կարելի է իբրև ցայտուն օրինակ վկայակոչել անգլերեն նկարագրական *hedge-hog* «ոգնի» անունը/:

Այսպիսով՝ մենք *խոզ*-ը դիտում ենք որպես բնիկ հ.-ե. ծագման բառ, ի տարբերություն որոշ հետազոտողների կարծիքների /Աճառյան, 1973, II, 382, Ջահուկյան, 1987, էջ 472, 603, Յովհաննիսյան, 1989, ՊԲՅ, № 3, էջ 147/:

Եիշտ է, ցեղակից լեզուներում առկա են գրեթե բոլոր զուգահեռները, բայց և այնպես որոշակի նախաձև գտնել վերը բերված զուգաբանությունների համար այնքան էլ հեշտ չէ: Ո՞րն է խանգարող հանգամանքը: Ինչքան մեզ հայտնի է, նախաձևի վերականգնման կայուն և վստահելի սկզբունքները բացակայում են: Յետազոտողների մի մասը նախապատվությունը տալիս է այս կամ այն լեզվի տվյալներին և անտեսում մյուսները, մի մասն էլ հնարավոր է համարում նախաձևի տարբերակների գոյակցությունը, էլ չենք խոսում այն մասին, որ արմատական ձևույթի ընթացումը միօրինակ չէ: Այս և նախորդ պայմանները առաջ է են բերել վերականգնվող արմատների և ընդհանրապես նախաձևերի մի ծով բազմություն, որ թվում է հեռու է ճշմարտանման լինելուց: Կարծում ենք, ճիշտ կլինի հնարավորության սահմաններում միօրինականացնել նախաձևերը՝ փորձելով վերանայել բաղաձայնական տեղաշարժերի համախումբը և ընդհանրապես բաղաձայնական համակարգը: Մեր պատկերացումը բաղաձայնական տեղաշարժերի համախմբի վերաբերյալ զգալիորեն տարբերվում է եղած պատկերացումներից: Յնդեվրոպաբանության մեջ գոյություն ունի տեղաշարժերի ավելի նեղ ընթացում, որ նկատի ունի միայն ուշ լեզվական համակարգերի /գերմանական, հայկական/ կրած փոփոխությունները նախալեզվի համեմատ: Սակայն, այստեղ նկատվում է իմացաբանական և զոյաբանական իրողությունների շփոթում: Ինչու՞ են գերմանական և հայկական համակարգերը դիտվում տեղաշարժի ենթարկված, իսկ մնացածը՝ ոչ: Թվում է, այն պարզ պատճառով, որ առաջնեկ-համեմատաբանները նախալեզվի հնչույթային հարացույցի կաղապարը ժամանակի օբյեկտիվ պարտադրանքով կառուցեցին սանսկրիտի հիմքի վրա: Ավանդական բաղաձայնական համակարգը և սրա ձևափոխված տարբերակները, որ ներկայացնում են Մեյեն, Պեդերսենը, Սեներենյին, Գամկրեյխծեն և Իվանովը, այլ հնդեվրոպաբաններ, որոշակի ստատիկ շարքերի համակարգ է, չի արտացոլում տեղաշարժերը ըստ

ելության, այլ հենվում է ռելևանտ հատկանիշների վրա՝ ըստ որոշակի ընտրանքի, իսկ Գամկրելիձեի և Իվանովի դեպքում մաս գլոտալության վրա, որն անընդունելի է: Եթե իսկապես ծայնածերպային հատկանիշը ընդհանուր համակարգում որոշակի դեր խաղացել է, ապա դժվար է հավատալ, որ այն էական է եղել:

Մենք հակված ենք տեղաշարժը դիտելու որպես երկնակարդակ իրողություն: Գոյաբանական մակարդակում մենք գործ ունենք առանձին լեզվի կամ բարբառի՝ պատմական զարգացման ընթացքում կրած տեղաշարժերի, իսկ իմացաբանական մակարդակում՝ ենթադրվող նախալեզվի հակադարձ կաղապարման հետ: Վերջինի դեպքում անհրաժեշտ է մտցնել ելակետային հնչույթի գաղափարը. սա տեղաշարժերի մեջ խաղում է գլխավոր դերը: Սրա մեջ կենտրոնացած է ռելևանտ հատկանիշների ամբողջությունը: Ուրեմն, ելակետային հնչույթը ռելևանտ հատկանիշների մի փունջ է, գլխավորապես՝ շնչեղության, սրան ուղեկցող ուժգնության և ծայնեղության: Յուրաքանչյուր ելակետային հնչույթ ունի իր ենթահամակարգը: Տեղաշարժը կատարվում է երկու ուղղությամբ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել հորիզոնական և ուղղահայաց: Տեղաշարժի դեպքում շրջադարձայինը կամ բեկումնայինը հենց առաջին քայլն է, որ կարելի է անվանել կորստի քայլ հորիզոնական ուղղությամբ՝ շնչեղության կորուստ, ուղղահայաց ուղղությամբ՝ ծայնեղության կորուստ: Այնուհետև առանձին քայլերով՝ որոշակի հատկանիշների ձեռքբերում և կորուստ, տեղաշարժը հասնում է իր տրամաբանական ավարտին՝ զրոյական աստիճանին, որով էլ փակվում է համակարգը: Միայն այս աստիճանին հասնելուց հետո սկզբնադիրքում սրանց կարող են գումարվել հավելական հնչույթները, որոնք նախածներին կարող են հաղորդել բոլորովին նոր որակ:

Եզրափակենք. մեզ համար նախալեզվի բաղաձայնական համակարգն ունի դինամիկ բնույթ: Այն ներկայանում է ելակետային հնչույթների տեղաշարժվող ենթահամակարգերի ձևով.

bh - (b) - p - (p') - Ø		
ph	dh - d - t - (t') - Ø	
p <sup>ç</sup>	th	
f	t <sup>ç</sup>	gh - g - k - (k') - Ø
h	θ	kh
Ø	s (z)	k <sup>ç</sup>
	Ø	h (γ )
		h
		Ø
— — — — — — —		w-/ b-/ s-/ m-/ n-/ l-/ r-/ j -

Այսքանից հետո մեզ մնում է առաջարկել նախաձևի մեր վերականգնումը՝ \*ghog'', թեև անվերապահ չենք կարող պնդել այս. և ահա թե ինչու: Բառի լրացուցիչ քննությունը ի հայտ է բերում նաև սրա նոստրատիկ զուգահեռներն ալթայան և սեմաքամական լեզուներում: Ալթայան լեզուներում առկա են հետևյալ զուգահեռները՝ տուվին. *kuzaga* «վայրի այծի ձագ», հին ուլղուր., չաղաթ. *qozy*, ուլղուր. *koza*, ուզբեկ. *kuzi*, դրղզ. *kozu*, դագախ. նոգայ. *kozy*, թաթար. /բրբռ./ *kuzy*, թուրքմեն. *guzy*, գագաուզ. *kuzu*: Սեմաքամական լեզուներում զուգահեռները սրանք են՝ ասուր. *kabsu*, ասոր. *kewšā*, եբր. *kebeš*, արար. *kabš*, ինչպես նաև շումերենում վկայված՝ *kussa*:

Ոչխար կենդանական անվան հետ առնչվող բառերից է նաև խոճկորը: Որոշ ուսումնասիրողներ սա արհեստականորեն տրոհում են խոճ և կոր բաղադրիչների, ընդ որում երկրորդ *կոր*-ի մեջ տեսնում են հայ. կորխն-ի համառոտված տարբերակը /տե՛ս Գովհաննիսյան, 1989, էջ 147/: Մենք չենք միանում այս կարծիքին: խոճկորը-ը թուրքական ձև է, որ իր հերթին իրան. \**xoč-xar*-ի արտացոլումն է, որի մեջ թուրքական լեզուներին հատուկ ձայնավորական ներդաշնակության օրենքով երկրորդ վանկի *a*-ն վերածվել է *o*-ի:

Ամփոփելով, պետք է նշենք հետևյալը. կենդանական անունների քննությունը կարևոր է բնիկ և փոխառյալ ձևերի հարաբերությունը և ժամանակագրությունը պարզելու առումով: Նման անունների ստուգաբանությունը, հնչաձևաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունն անկարելի է իրագործել առանց վերանայելու՝ մի կողմից *h.*-ե. նախալեզվի բաղաձայնական տեղաշարժերի ողջ համախումբը, մյուս կողմից ընդհանուր առմամբ *h.*-ե. բաղաձայնների համակարգի նկատմամբ մեր իմացաբանական մոտեցումները:

Ներկայումս, դեռ վերջնականորեն պարզորոշ բացահայտված չէ հայերենի բառապաշարի ստուգաբանական հենքը, որի վրա հիմնվելով՝ կարելի կլիներ վճռական եզրակացություններ անել *h.*-ե. նախալեզվի կամ առանձին բարբառների՝ հայերենի մեջ ունեցած ներդրման, մյուս կողմից՝ հայերենի պատմական բարբառների՝ *h.*-ե. այլ և կողմնակի լեզուների վրա ունեցած ազդեցության մասին: Լեզվական երևույթների փոխներթափանցումը, կարծում ենք, հետագա տասնամյակների լեզվաբանության հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի:



## **РОДНОЙ ЯЗЫК И ПРОБЛЕМЫ ИЗУЧЕНИЯ ИНОСТРАННОГО ЯЗЫКА**

Роль родного языка в процессе изучения иностранного языка огромна. Ряд исследователей рассматривают родной язык как фактор, тормозящий изучение иностранного языка. Другая часть ученых и большинство учителей-практиков подчеркивают положительную роль родного языка, способствующего овладению иностранным языком.

Во время обучения иностранному языку аудиовизуальным и коммуникационным методами учителям запрещается использовать хотя бы одно слово родного языка для создания иллюзии, что второй язык изучается так, как если бы он был первым. Часто дидактика иностранных языков признает если не полную идентичность, то хотя бы определенное сходство между процессами изучения родного и иностранного языков, однако это абсолютно ложная мысль.

В процессе усвоения родного языка вовлечены многие факторы: физиологический - слушание, артикуляция, восприятие и т.п.; психологический - мотивация, социальный инстинкт, аффективность и т.п.; интеллектуальный - память, включение воспринимаемых данных в вербальные структуры, абстрагирование, их обобщение и систематизация. Таким образом, изучение родного языка представляет собой уникальный онтогенный, социо-интеллектуальный и нейрофизиологический процесс, тесно связанный с ментальным развитием личности. В процессе изучения языка ребенок учится не только отражению существующих независимо от него реалий; он активно участвует в социальном производстве и структурировании этих реалий. Посредством языка ребенок упорядочивает окружающий мир и придает ему значимость.

Роль языка, как создателя и преобразователя реальности, представляет собой один из основных аспектов его изучения. Язык формирует личность и дает ему возможность



восстановить прошлое, найти свое место в настоящем и представить себя в будущем. Язык навсегда структурирует мышление и интеграцию личности в определенную социальную группу.

В процессе освоения родного языка ребенок подчиняется чрезвычайно глубинным мотивациям. Язык подается ему как наиболее эффективное средство для удовлетворения его жизненных потребностей воздействовать на свой социальный круг и интегрироваться в него.

Мотивации изучающего иностранный язык подростка, наоборот, поверхностны. Это: любознательность, желание экзотики, поиск достижения формы своего превосходства над другими или же принуждение, когда он обязан изучать язык в пределах школьной или вузовской программы.

В процессе освоения родного языка ребенок идет к нему через свой непосредственный опыт. Для подростка, изучающего второй язык, учебная ситуация немедленно изменяется, проходя сквозь призму родного языка. То есть процесс становится абсолютно противоположным. Он направлен к опыту, от иностранного языка через родной язык. Внезапно коды родного и иностранного языков противопоставляются друг другу: вербальная формула иностранного языка наполняется значением, лишь проходя сквозь призму родного языка.

Первичный вербальный опыт ребенка состоит из реализаций речи, подсказанных ему самими законами коммуникации. Эти реализации подаются ему таким образом, что никто не пытается представить их как систему. Под влиянием среды ребенок в будущем сможет относительно полноценно осмыслить систему родного языка.

Все методы обучения иностранному языку показывают, что в этом случае путь совершенно противоположный. Исходят из системы, чтобы прийти к речи.

Изучение иностранного языка опирается на вербальные навыки, уже упроченные в субъекте родным языком. Изучают иностранный язык лишь после овладения родным языком. Именно с учетом этих навыков учитель должен по-

мочь ученику сформировать новое преобразованное вербальное знание второго языка. Дело касается программного замещения вербальных ранее навыков особенностями системы второго языка. Таким образом, учитель при работе с начинающими, должен использовать приемы не усвоения, а преобразования, воспитания заново. Это касается как механизмов слушания и артикулирования, так и перцептуальных и концептуальных механизмов, которые обуславливают вербальную активность. Здесь мы сталкиваемся с наиболее крупным препятствием. В этом процессе не следует искать ранее полученные знания, т. к. они представляют собой единство навыков, позволяющее субъекту говорить на родном языке. Например, невозможно представить, чтобы грузин учился французскому произношению за счет искажения произношения родного языка.

Воздействие родного языка на иностранный проявляется на всех этапах изучения последнего. Говоря о, том, что необходимо воздерживаться от родного языка на уроках иностранного языка, приводят следующие причины: а) при изучении иностранного языка отмечается слабость мотивации, когда говорится, что на уроках иностранный язык должен быть эксклюзивным средством коммуникации между учителем и учеником; б) подразумевается, что должна быть создана, правда, искусственно, одна из наиболее сильных мотиваций: это должно быть выполнено, несмотря на всю сложность осуществления; в) необходимо создать прочную связь между вторым языком и реальностью для формирования ассоциативных механизмов "реальность-язык", "понятие-язык"; г) подразумевается, что препятствия, из-за которых на уроках устраняется родной язык, постепенно отступают по мере достижения прогресса, когда изучающий приобретет стабильный автоматизм, установит связь между языком и реальностью и усвоит базисные системы языка.

Ученые, работающие над выявлением языковых универсалий, отмечают, что между существующими в мире языками больше сходства, нежели различий. Целый ряд языковых механизмов является общим постольку, поскольку

действует во всех языках. Например, в каждом языке есть в аспекте содержания и выражения определенное количество аналитических и структурных языковых особенностей, специфичных для него или общих с другими языками. Проведенный в этом направлении анализ показал, что ни один язык не является совершенно чужим и отличным от другого, так как число существующих между двумя языковыми системами различий намного меньше, чем сходства, благодаря которому сближаются две системы.

Такие фундаментальные структуры, как структура языкового знака, прямолинейность высказывания и вытекающие отсюда синтаксические результаты и т. п., остаются общими.

Каждый знак есть потенциальная система, реализуемая в речи, нейрофизиологические механизмы которой являются общими для всех языков, так как человеческая база идентична для всех языков.

В то же время каждый язык своей системой предлагает говорящему на нем совершенно определенную манеру видения реальности и ее прямолинейную передачу в речи, все языки имеют грамматические категории. Бесспорен факт, что каждый язык строит фразу вокруг глагола и в каждом языке имеется довольно малое число трансформаций глагола: время, вид, наклонение...

Ментальные операции, участвующие в составлении и интерпретации высказывания, одни и те же как в родном, так и в иностранном языке. Таким образом, они могут взаимно обогащать друг друга: замена одного языка другим может привести к положительным результатам для второго. Как показали эмпирические исследования, ученик, обладающий умением анализа системы родного языка, достигает лучших результатов, чем ученик, не имеющий предварительной подготовки этого типа.

Когда речь заходит об устранении родного языка в процессе обучения иностранному, следует учитывать, что учащиеся все равно используют его, прибегают к сравнению изучаемого языка с родным.

Таким образом, существует мнение, что следует исходить из родного языка, включить его в учебный процесс в случае необходимости, особенно на начальном этапе изучения иностранного языка. Когда учащийся начинает изучать второй язык, он уже владеет одним, воспринимает мир сквозь призму родного языка.

Если мы хотим поставить в центре процесса обучения обучаемого, то должны рассматривать его как автономную личность с соответственной личной стратегией и ранее полученными знаниями.

Отсюда - можно совершенно по новому рассматривать ту или иную сложность "препятствующей" интерференции, сопровождающей процесс изучения второго языка и зависящий от аналогий и различий, существующих между параллельными формами двух языков. Этот фактор может быть активно применен во время сравнения или противопоставления.

Поэтому следует в методологическом аспекте искать процедуры, учитывающие важную роль родного языка в организации процесса обучения второму языку.

По нашему мнению, это должно происходить на уровне отбора и презентации единиц второго языка.

Компаративистские и контрастивистские исследования показали, что, как было отмечено выше, два разных языка не являются абсолютно отличными друг от друга. Различия чувствуются потому, что бросаются в глаза. Сходство же, исходя из его природы, часто незаметно и столь же часто оно совершенно отождествляется с языковыми универсалиями.

Предпочтительнее при изучении второго языка подчеркивать в первую очередь те элементы, которые являются общими для двух языков. Обязательно следует учитывать в вербальном поведении субъекта языковые навыки, выработанные в нем родным языком.

Отсюда следует, что в большинстве научных исследований по данной теме акцентируется необходимость интеграции родного и иностранного языков в процессе обучения. Стратегическую компетенцию родного языка нельзя

автоматически переносить на иностранный язык без сознательной активности. Сомнения, колебания, возникающие во время осуществления на иностранном языке высказывания, темы беседы и иллокуционных целей, увеличивают двусторонние взаимоотношения и требуют сознательного использования стратегии интерпретации и негоциации.

Роль сознательности, особенно в студенческом возрасте, при овладении языком очень велика. Взрослый обучаемый, как известно, располагает богатыми ассоциациями, опираясь на которые, он имеет возможность добиться прекрасных результатов. Одновременное использование бессознательных и сознательных процессов может привести к успеху в изучении языка.

Субстрат, представляющий родной язык, является единством нейрофизиологических механизмов, которые должны учитываться при изучении второго языка, несмотря на то, что они применяются для речи на родном языке.

Родной язык формирует опыт обучаемого, определяет его активность для восприятия системного единства иностранного языка.



## ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

1. **Ֆ. ԽԼՂԱԹՅԱՆ**, պրոֆեսոր, Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ:
2. **Ժ.Պ.ՄԱՀԵ**, Սորբոնի համալսարանի բարձրագույն ուսմանց գործնական կրթարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ անդամ:
3. **Ռ.ՏԵՐՍԵՐԿԵՐՅԱՆ**, Էքս- ան-Պրովանսի (Ֆրանսիա) համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր:
4. **Ա.ԲԱՐԼԵՁԻՁՅԱՆ**, պրոֆեսոր, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի վարիչ:
5. **Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող:
6. **Դ.ԳՅՈՒՐՁԻՆՅԱՆ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի հայագիտության ամբիոնի դոցենտ:
7. **Ն.ՀԵՔԵՔՅԱՆ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի հայագիտության ամբիոնի դոցենտ:
8. **Ռ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի անգլերենի տեսության ամբիոնի ավագ դասախոս:
9. **Ն.ՄԱՆՈՒԿՅԱՆ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի ավագ դասախոս:
10. **Հ.ՔԱԶԲԵՐՈՒՆԻ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի անգլերենի տեսության ամբիոնի վարիչ:
11. **Ս. ԶԱՔԱՐՅԱՆ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի անգլերենի տեսության ամբիոնի ավագ դասախոս:
12. **Մ.ԱՂԱԲԵԿՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող:
13. **Կ.ՎԵԼՅԱՆ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի անգլերենի տեսության ամբիոնի ավագ դասախոս:
14. **Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ:
15. **Մ.ՀԱՆՆԵՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող:
16. **Ժ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի գիտաշխատող:
17. **Կ.ՂՅՍԱԶՅԱՆ-ԳՐԻԳՈՐՅԱՆ**, Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի ավագ դասախոս:
18. **Ա.ՍՈՒՇԵՂՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող:
19. **Մ. ТЕВЗАДЗЕ**, доцент кафедры французского языка Тбилисского гос. пед. университета им. Сулхан-Саба Орбелиани.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ֆ.Խլղաթյան	Մեծ հայասերը	7
2.	Ժ.Պ.Մահե	-Ունք հոգնակերտ և հավաքական վերջավորությունը գրաբար հայերենում	13
3.	Ռ.Տերմերկերյան	Բառակերտումը արդի արևմտահայերենում (միջավայր և միջոցներ)	18
4.	Ա.Բարլեզիզյան	Օքսիմորոնի (նրբաբանության) նշանագիտական դիտարկում (ըստ արդի) ֆրանսիական գրականության նյութի	30
5.	Ֆ.Խլղաթյան	Խոսքի պատկերավորությունն իբրև ոճաբանական գիտակարգ	36
6.	Ս.Գրիգորյան	«Մարգարե» բառի ստուգաբանության մասին	49
7.	Դ.Գյուրջինյան	Հին հայերենի նախդրային նախաբայերի մասին (Ա.Մեյեի քննության լույսով)	54
8.	Ն.Հեքեքյան	Հայերենի օրինաչափության խախտումով կազմված տեխնիկական տերմինների մասին	59
9.	Ռ.Սարուխանյան	Օտար և հայկական տնտեսագիտական տերմինների տեղն ու դերը մասնագիտական տեքստերի ուսուցման ժամանակ (անգլերենի նյութի հիման վրա)	68
10.	Ն.Մանուկյան	Իմաստային ստորակարգության և բազմաձայնության փոխհարաբերությունը բանաստեղծական տեքստում	75
11.	Հ.Քաջբերունի Ս.Զաքարյան	Գոյականակերտ ածանցների հոմանիշությունը և նրանց հոմանիշային շաքերը ժամանակակից անգլերենում և հայերենում	81
12.	Մ.Աղաբեկյան	Հայերենում *bh, *b, *p > ւ (վ, ու) իրնչյունափոխությունը և նրա ժամանակագրությունը	95
13.	Կ.Վեյլան	Առկայական տրոհման կարևորությունը անգլերենից հայերեն թարգմանության ժամանակ	101
14.	Լ.Հովհաննիսյան	Նորահայտ բառեր 5-րդ դարի հայ մա-	

15.	Մ. Հաննեյան	տենագրության մեջ Վայրի կենդանիների հնդեվրոպական անվանումների տարածքային-իմաս- տային բնութագիրը հայերենում	107 113
16.	Ժ. Միքայելյան	Քմային ձայնավորների փոխառու- թյունները Վասպուրականի տարածքի խոսվածքներում	120
17.	Կ. Դոյնաջյան- Գրիգորյան	Ֆրանսերեն հատուկ անունների տա- րադարձման շուրջ	125
18.	Ա. Մուշեղյան	Հայերեն «Ոչխար»-ը և առնչակցվող կենդանիների անունները	129
19.	М. Тевзадзе	Родной язык и проблемы изучения иностранного языка	135





Համակարգչային շարվածքը՝ Վ.Բոյուսովի անվ.ԵՊԼՀ-ի  
համակարգչային կենտրոն /ղեկավար՝ դոց. Վ.Վ.Վարդանյան/  
Օպերատորներ՝ Ա.Բ.Վարդանյան

Սրբագրիչ՝ Հ.Մ.Էլչակյան  
Ս.Վ.Առաքելյան  
Ն.Հեքեքյան

Ստորագրված է տպագրության՝ 15.01.2002

Հանձնված է տպագրության՝ 15.02.2002

Տպաքանակ՝ 100

Компьютерная верстка: Компьютерный центр ЕГЛУ  
им. В.Я.Брюсова (руководитель — доц. В.В.Варданян)

Операторы: А.Б.Варданян  
Г.М.Элчакян  
С.В.Аракелян

Корректор: Н.Экекян

Подписано к печати: 15.01.2002

Сдано в печать: 15.02.2002

Тираж 100